

ՓՈՓՈԽՎՈՂ ԱՇԽԱՐՀ

ՀԱՅԱՅՔ ԵՐԵՎԱՆԻՑ

2016/3
(7)

Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես

Ռազմավարական և ազգային հետազոտությունների
հայկական կենտրոն

ՀՀ, 0033 Երեւան, Երզնկյան 75
Հեռախոսներ՝ (+37410) 528780, 274818
Հետապատճեն՝ (+37410) 524846
Էլ. փոստ՝ root@acnis.am
Վեբկայք՝ www.acnis.am

Երեւան
2016

Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես

Թիվ 3 (7), հուլիս-սեպտեմբեր 2016

2016/3
(7)

<i>Գիտական խմբագիր՝</i>	Մանվել Սարգսյան
<i>խմբագիր եւ սրբագրիչ՝</i>	Գեւորգ Լալայան
<i>խմբագրական խորհուրդ՝</i>	Կարապետ Կալենյան Աշխեն Մուշեղյան
<i>Համակարգչային ձեւավորող եւ էջադրող՝</i>	Աշոտ Թուրաջյան

ՌԱՀՀԿ սույն հրատարակության՝ «Փոփոխվող աշխարհ: Հայացք Երեւանից» վերլուծական եռամսյա պարբերականի Նպատակը տարածաշրջանային եւ համաշխարհային վերջին զարգացումների լույսի ներքո Հայաստանի այսօրվա ու վաղվա կարելորագույն մի շարք խնդիրների, մարտահրավերների, հեռանկարների համայնապատկերի արտացոլումն է՝ թարմ հայացքով մատուցվող գաղափարների, առաջարկների, այլընտրանքային մոտեցումների միջոցով, որոնք կարող են լավագույն բանալի լինել մեր պետության առջեւ ծառայած բազում կնճռոտ հարցերին լուծում տալու առումով: Նախատեսված է ոլորտում գործող հաստատությունների, անհատ փորձագետ-վերլուծաբանների, քաղաքագետների եւ ընթերցողական լայն շրջանակի համար՝ Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ), 2016

© Armenian Center for National and International Studies (ACNIS), 2016

© Армянский центр стратегических и национальных исследований (АЦЧНИ), 2016

Հոդվածագիրների տեսակետները կարող են չհամընկնել ՌԱՀՀԿ դիրքորոշումներին:

The views of the authors do not necessarily reflect those of the Center.

Мнения авторов публикаций не всегда совпадают с позицией АЦЧНИ.

Արտատպման դեպքում հղումը «Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից» հանդեսին պարտադիր է: While citing the content, the reference to “The Changing World: Viewpoints from Yerevan” is obligatory.

При перепечатке ссылка на журнал «Изменяющийся мир. Взгляд из Еревана» обязательна.

Վաճառքի ենթակա է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թողարկման հարցազրույցը

Վալերի Պողոսյան. «Եթե Սահմանադրությունը չի աշխատում, ինչ տարբերություն՝ լավն է, թե վատն է»
Հանդեսի հարցերին պատասխանում է ՀՀ սահմանադրական դատարանի նախկին անդամ Վալերի Պողոսյանը 4

Հոդվածներ

ՀԱԿՈՐ ՉԱՔՐՅԱՆ

Ռուս-թուրքական ճգնաժամը եւ դրա հետեւանքները տարածաշրջանի ռազմաքաղաքական հավասարակշռության վրա 9

ԷՄՄԱ ԲԵԳԻՉԱՆՅԱՆ

Իրան-Ադրբեջան փոխհարաբերությունները եւ արցախյան հիմնահարցը 17

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Եկեղեցու եւ պետության համագործակցության քաղաքականության վերանայման անհրաժեշտությունը 27

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱՆԱՆԵԱՆ

Արցախյան հիմնախնդիրը եւ միջազգային իրավունքը. առասպելաբանություններն ու իրականությունը 39

ԴԱՎԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը. կանխորոշված անորոշություն (ռուսերեն) 53

Հայաստան-2016, երրորդ եռամսյակ.

Փաստեր, իրադարձություններ 65

Վալերի Պողոսյան. «Եթե Սահմանադրությունը չի աշխատում, ինչ տարբերությունն է լավն է, թե վատն է»



Յանդեսի հարցերին պատասխանում է ՀՀ սահմանադրական դատարանի նախկին անդամ Վալերի Պողոսյանը:

- Իր հռչակումից 25 տարի անց Յաստանում անկախությունը տակավին մնում է հավուր պատշաճի չգնահատված արժեք: Պատճառը, թերեւս, ակնբախ է՝ անկախությունը չգոհացրեց միջին վիճակագրական հայաստանցուն, որովհետեւ նրա սոցիալ-տնտեսական վիճակը չլավացավ, իսկ արտաքին հարաբերություններում մեր երկրի քաղաքական վարկն ընկավ: Պարոն Պողոսյան, ինչ եք կարծում, ինչո՞ն խոստացված իրավական պետությունը այդպես էլ չստացվեց: Ինչո՞ն ձախողվեց սահմանադրական կարգի հաստատումը, եւ արդե՞ն քառորդ դար մեզ չի հաջողվում ներդնել ազատ ընտրությունների եւ անկախ արդարադատության մեխանիզմները: Ձեր մեկնաբանությունը՝ խնդրեմ:

- Ամեն դեպքում հարցը հանգում է Սահմանադրությանը: Այն մեզանում ուղղակի չի գործում, եւ այդ իմաստով

իրավացի են բոլոր նրանք, ովքեր կարեւորում են, առաջին հերթին, սահմանադրական կարգի հաստատման անհրաժեշտությունը: Սահմանադրությունը չի գործում՝ մեկ, եւ մենք անկարող ենք հաղթահարել դրա հետ կապված դժվարությունները՝ երկու: Ինչո՞ն: Սրանք հասարակ հարցեր չեն, հատուկ ուսումնասիրության կարիք կա, որովհետեւ գործոնները բազմաթիվ ու բազմաշերտ են: Այդ ամենին անդրադառնալը շատ ժամանակ կխլի, ուստի եւ կարճ կասեմ՝ սկսելով այն բանից, որ անկախության արշալույսին բավականաչափ խնդիրներ էին կուտակվել, որոնց մեծ մասը, ըստ եւության, ժառանգություն էր մնացել խորհրդային կարգերից: Վերցնենք երկրի ողնաշարը համարվող տնտեսությունը, որը միանգամից փլուզվեց, որովհետեւ այն սովետափոխության «հագով» էր կարված, այսինքն՝ միայն խորհրդային պայմաններում կարող էր աշխատել: Յետո իշխանության եկան մարդիկ, այդ թվում եւ ես, որոնք, մեղմ ասած, չունեին կառավարման փորձ, միջազգային կառույցների հետ շփվելու, գործակցելու ունակություններ եւ, բացի դրանից, չգիտեին՝ ինչ ասել է ժողովրդավարություն, իշխանությունների տարանջատում եւ այլն: Այդ ամենին զուգարկվեցին արցախյան պատերազմը, Սպիտակի ավերիչ երկրաշարժը, հարյուր հազարավոր փախստականների ներհոսքը, ոչ խելամիտ սեփականաշնորհումը, ինչպես նաեւ նշված բացասական գործոններից ածանցվող խնդիրների շարանը՝ խնդիրներ, որոնց հաղթահարման համար, ամենայն հավանականությամբ, 25

տարին բավական չէ, որովհետեւ մտածողություն փոխելու համար երբեմն շատ տասնամյակներ են պահանջվում: Չպետք է մոռանալ, որ այսօրվա տնտեսական, քաղաքական, գիտամշակութային գործիչների, պետության առանցքային դերակատարների, ինչպես է շարքային քաղաքացիների մեծամասնության մեջ ամուր նստած են խորհրդային մտածելակերպն ու կարծրատիպերը:

- Պարոն Պողոսյան, դուք ակնարկեցիք խորհրդային շրջանից մեզ բաժին հասած վատ ժառանգության մասին: Բայց չէ՞ որ այդ հասարակության մեջ եղել են նաեւ անժխտելի առավելություններ, որոնց մասին երանությամբ է հիշում ավագ սերունդը: Վերցնենք թեկուզ հենց ԽՍՀՄ սահմանադրությունը. մեր ծնողների պատմելով՝ խորհրդային Սահմանադրությունը որոշակի կայունություն էր ապահովում երկրում, իսկ քաղաքացիների համար՝ երաշխավորված աշխատանք, անվճար կրթություն, անվճար բուժսպասարկում եւ այլն:

- Ես վերապահումով կխոսեի խորհրդային միության Սահմանադրության մասին, որն, ի դեպ, փակագծերի մեջ վերծանվում էր իբրեւ Յիմսական օրենք: Նույնը Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետության պարագայում էր, որտեղ եւս Սահմանադրությունը նույնացվում էր Յիմսական օրենքի հետ՝ չնայած այդ երկու եզրույթները տարբեր են: Ձեւականորեն գործող եւ մեծապես հռչակագրային բնույթ կրող այդ իրավական փաստաթուղթն իրականում Սահմանադրություն չի կարելի անվանել: Դատելով բովանդակությունից՝ այն կարելի էր Յիմսական օրենք համարել, բայց ոչ Սահմանադրություն: Սահմանադրությունը բարձրագույն իրավական ուժ ունեցող, այսպես ասեմ՝ ուղենիշային փաստաթուղթ է: Այլ հարց

է, որ ինչպես հիմա, այն ժամանակ եւս մեծ խզում կար Սահմանադրության եւ իրականության միջեւ, դրանցից յուրաքանչյուրը, կարելի է ասել, իր կյանքով էր ապրում: Համաձայնեք, որ պետությունից ձրիաբար բնակարան, բժշկություն, կրթություն եւ այլ բարիքներ ստացող անհատը երբեք չի կարող լինել լիարժեք, օրինապահ քաղաքացի, իմանալ աշխատանքի հարգը, արժանապատվորեն վաստակել ընտանիքի ապրուստը: Այդպիսի մարդիկ, ինչպես ցույց է տվել կյանքը, սովորաբար հակված են լինում գողության, անաշխատ եկամուտների եւ այլ անկարգությունների: Մեր հասարակությունը, ինչպես հայտնի է, զերծ չէ նման կարգի հակոտնյա երեւույթներից, որոնց արմատները նախորդ հասարակարգի մեջ են:

- Դա նշանակում է արդյոք, որ խորհրդային միությունում եղած արատները, այդ թվում՝ Սահմանադրության հետ կապված, բնորոշ են նաեւ հետանկախական շրջանին:

- Մեծ հաշվով՝ այո: Տեսեք՝ առաջին տպավորությունը, որ բովանդակությամբ ծանոթանալուց հետո ստանում ես խորհրդային Յիմսական օրենքից, հետեւյալն է. պետությունը պետք է պահի մարդուն, նրան ապահովի ամեն ինչով: Այդ թեզն իր կենսունակությունը չի կորցրել նաեւ հետանկախական շրջանում: Պատահական չէ, որ այսօր էլ մարդիկ շատ բան են պահանջում պետությունից: Մինչդեռ ոչ թե պետությունը պետք է պահի մարդուն, այլ ճիշտ հակառակը: Բայց պետությունն էլ պիտի մշտապես իր բարձրության վրա գտնվի, որպեսզի կարողանա ճիշտ կազմակերպել պետություն-քաղաքացի փոխհարաբերությունները, այլապես ի հայտ կգան բազում բարդություններ, որոնք, ի վերջո, կհանգեցնեն Սահմանադրության չզոյությանը: Ասել է թե՛ Սահմանադ

րությունը կա, բայց չի գործում, այսպես կոչված, «շինծու» Սահմանադրություն է:

Այդուհանդերձ՝ նկատենք, որ մեր օրերի սոցիալական խոցերից ամենաբնորոշը, որը ետ է պահում սահմանադրական ճանապարհով երկրի զարգացումը, կոռուպցիան է: Այդ մասին խոսում են բոլորը՝ և իշխանությունները, և քաղաքական ուժերը, և հասարակական կառույցները, և միջազգային կազմակերպությունները: Գրեթե բոլորն ընդունում են, որ Հայաստանում կոռուպցիան լայն տարածում է ստացել՝ դառնալով լրջագույն չարիք: Իսկ այնտեղ, որտեղ կա կոռուպցիա, սահմանադրական նորմերը չեն կարող լիարժեք իրականացվել:

- Ինչպե՞ս... մի՞թե կոռուպցիայի և սահմանադրականության միջև անմիջական կապ գոյություն ունի:

- Իհարկե: Մեկն, ասենք, կարողանում է կաշառատվությամբ իր գործն առաջ տանել, իսկ մյուսը չի կարողանում կամ խորշում է դիմել նման ստոր միջոցի, ուստի չի հաջողում ինչ-ինչ անձնական խնդիրներ լուծել: Ստացվում է, որ մեկը կաշառքի միջոցով իրավունք է ձեռք բերում, մյուսը կաշառք չտալու պատճառով զրկվում է իրավունքից: Այդպիսով՝ խախտվում է մարդկանց իրավահավասարությունը, որը Սահմանադրության հիմնարար սկզբունքներից է: Այսինքն՝ եթե բոլորը հավասար չեն օրենքի առջև, ուրեմն օրենքը չի գործում, Սահմանադրությունը չի գործում: Ես ընդամենը մեկ օրինակ բերեցի:

- Մեր պետության օրինակն աչքի առաջ ունենալով՝ ոմանց համար տարակուսելի է, որ Սահմանադրությունը ընդունելուց շատ չանցած՝ իշխանությունները սկսում են պարբերաբար նրանում փոփոխություններ, լրացումներ ու սրբագրումներ մտցնել՝ տեքստը բարելավելու պատրվակով: Ասա-

ցեք, խնդրեմ, պարոն Պողոսյան, կան, առհասարակ, լավ և վատ սահմանադրություններ:

- Անձամբ ինձ ամենաբիչը հետաքրքրում է խոսակցությունը, թե այս Սահմանադրությունը լավ է կամ վատն է: Դա գնահատանքի լուրջ փաստարկ չեմ համարում: Ինձ, ընդհանուր առմամբ, այլ բան է հետաքրքրում. գործո՞ւմ է տվյալ Սահմանադրությունը, թե՞ չի գործում: Որովհետև Սահմանադրությունը նախեառաջ արժեքների, կարելորագույն սկզբունքների հանրագումար է: Եթե մենք այդ արժեքները չունենք, մնացյալը վերացական խոսքեր, դատողություններ են: Վերջիվերջո՝ եթե Սահմանադրությունը չի աշխատում, ինչ տարբերություն՝ լամբու է, թե վատն է: Զգործող Սահմանադրությունը՝ որքան էլ սիրուն, իրավականորեն անթերի գրված լինի, մեկ լումայի արժեք չունի: Այդ փաստաթուղթը նրա համար է, որպեսզի բոլորը եւ, առաջին հերթին, իշխանությունները, հետո՝ քաղաքական ուժերը, ապա եւ՝ քաղաքացիները առաջնորդվեն դրանում ամրագրված սկզբունքներով ու արժեքներով: Զանի դեռ մենք սրան չենք վարժվել, սահմանադրական կարգի պահպանման մասին խոսելն ավելորդ է: Ինչ վերաբերում է սահմանադրական փոփոխություններին՝ դա աշխարհում ընդունված պրակտիկա է, քանի որ հարափոփոխ կյանքը միշտ նոր գաղափարներ, նոր պահանջներ է առաջադրում: Սակայն սահմանադրական բարեփոխումներն ինքնանպատակ չեն, երբեք չի կարելի դրանք ծառայեցնել օրվա իշխանությունների անձնական շահադիտական նկրտումներին:

- Քիչ առաջ խոսք եղավ կոռուպցիայի մասին՝ որպես սոցիալական լրջագույն չարիքի: Դուք կոռուպցիան նույնպե՞ս համարում ե՞նք խորհրդային ժառանգություն: Եվ երկրորդ՝ ելք

տեսնում եք այդ չարիքն արմատախիլ անելու առումով:

- Միանշանակ՝ կոռուպցիան նույնպես խորհրդային շրջանի մտացույց է: Այդ խնդրին ես անդրադարձել եմ: Թերեւս մասշտաբներն են միայն մեծացել: Գալով երկրորդ հարցադրմանը՝ ասեմ, որ վիճակից ելք միշտ կարելի է գտնել, եթե առկա է քաղաքական կամքը: Կառավարությունը, որքան ինձ հայտնի է, հակակոռուպցիոն պայքարի մասին մի քանի որոշում է ընդունել, մի քանի հանձնաժողովներ են աշխատել այդ ուղղությամբ, ահագին գումարներ են ծախսվել, բայց արդյունքը ոչ ոք առայժմ չի տեսել: Եվ չի էլ տեսի, եթե կառավարությունը շարունակի աշխատել այս ոճով ու ոգով, այսինքն՝ պայքարը փոխարինի պայքարի իմիտացիայով: Վաճառված եմ՝ անկեղծ ցանկության եւ քաղաքական կամքի առկայության դեպքում հնարավոր կլիներ հասնել տեսանելի արդյունքի: Հեռու չգնանք: Հարեւան երկրի նախկին նախագահ Միխեիլ Սահակաշվիլին, որին երբեք չեմ հավանել, բոլորին ապացուցեց, որ կարելի է կարճ ժամանակում որոշակի խնդիրներ լուծել: Ուղղակի պետք է հետամուտ լինել՝ ինչպես հարկն է: Եթե հիշում եք, 90-ական թվականներին՝ նույնիսկ պատերազմական վիճակում գտնվելով, մենք մի շարք կարելու ցուցանիշներով զգալիորեն առաջ էինք նույն Վրաստանից եւ Ադրբեջանից: Այսօր, ցավոք, հակառակ պատկերն է՝ հարեւան երկրներն առաջ են անցել, մենք տեղում դոփում ենք: Եզրակացություններն ինքներդ արեք:

- Ձեր կարծիքով՝ որտեղ մենք թերացանք, պարոն Պողոսյան, ինչը կարելի էր շտկել, որ մենք բաց թողեցինք:

- Այն վիճակը, որ այսօր մենք ունենք, գլխավորապես մեր քաղաքական ուժե-

րի թերզարգացածության արդյունք է: Երբ 17-18-րդ դարերում ի հայտ եկավ Սահմանադրության գաղափարը, հիմնական քաղաքական ուժերը հասունալով եւ որոշակի մակարդակի հասնելով՝ հասկացան, որ առանց փոխհամաձայնության գալու ոչինչ փոխել հնարավոր չէ: Եվ քաղաքական ուժերի փոխադարձ համաձայնությամբ աշխարհում մինչ այդ ամենալավը համարվող՝ կառավարման թագավորական համակարգերը սկսեցին աստիճանաբար իրենց տեղը զիջել Սահմանադրության վրա խարսխված համակարգերին: Սահմանվեցին խաղի որոշակի կանոններ, ձեռք բերվեցին հստակ պայմանավորվածություններ, որոնցով կարգավորվում էին հասարակական հարաբերությունները: Հետո փորձը ցույց տվեց, որ այնտեղ, ուր խախտվում են խաղի կանոնները կամ փոխպայմանավորվածությունները, որոշ ժամանակ անց գործում է բումերանգի էֆեկտը. խախտումը «վերադառնում» է էլման կետին: Այնպես չէ, որ իշխանությունն ունեցողն ամենակարող է, եւ ինքն է միշտ թելադրողը: Սա է, որ մեր քաղաքական ուժերը չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ: Օրինակ՝ ոչ ՀՀԾ-ականները 90-ական թվականներին, ոչ էլ նրանցից հետո իշխանության եկած ուժերը չհասկացան քաղաքական փոքրամասնության՝ ընդդիմության շահերը հարգելու, կառավարման համակարգում նրանց որոշակի չափով ներգրավելու իմաստը: Բայց չէ՞ որ այսօրվա իշխողը վաղը կարող է ընդդիմության հետ տեղերով փոխվել եւ զրկված լինել այն նույն իրավունքներից ու արտոնություններից, որոնցից ինքն այլոց զրկել էր:

- Ապագային միտված մի հարց, պարոն Պողոսյան, թերեւս՝ վերջինը. այսինքն՝ փոփոխությունների հույսը դուք սերնդափոխության հե՛տ եք կապում:

- Ոչ, ոչ: Ես այդ ամենը խելքի հետ եմ կապում: Մտածելու ունակ մարդիկ ցանկացած իրադրությունում շատ արագ կողմնորոշվում են, թե ինչը փոխել, երբ փոխել եւ ինչպես փոխել: Իհարկե՝ եթե հին ձեւն իրենց այլեւս չի բավարարում: Կաշառակերությունն է ընդհանուր առաջընթացն արգելակողը, ուրե՛մս տվյալ պահին դրա դեմ պետք է ուղղվի պայքարի սլաքը: Քաղաքացին կտեսնի, որ առաջին լուրջ քայլին հետեւեցին երկրորդը, երրորդը եւ այլն՝ կլցվի հավատով ու վստահությամբ եւ իր ուժերի չափով սատար կկանգնի պայքարի ելած առաջամարտիկին կամ քաղաքական ուժին: Տեսե՛ք՝ հասարակ բան. ոստիկանը կոպտում է խաղաղ ցուցարարին, անհամաչափ ուժ է կիրառում քաղաքացու նկատմամբ, բայց մարդիկ հայիոյում են հանրապետության ամենաբարձր պաշտոնյաներին: Ասում են՝ «դու մեղավոր չես, մեղավորը քո մեծամեծերն են»: Ա՛յ հարգելի «մեծամեծեր», մի քիչ մտածե՛ք, ախր ինչո՞ւ եք մի հիմար ոստիկանի պատճառով զուր տեղը անեծքի կամ հայիոյանքի արժանանում: Չլինի՞ դուրսերդ գալիս է...

- **Շնորհակալություն հետաքրքիր զրույցի համար:**

Интервью номера

«Если Конституция не работает, какая разница, хорошая она, или плохая?»

На вопросы нашего журнала отвечает бывший член Конституционного суда Валерий Погосян.

The Interview of the Issue

If the Constitution does not Work, What Difference does its Being Good or Bad Make?

Valeri Poghosyan, the former member of the Constitutional Court.

Ռուս-թուրքական ճգնաժամը և դրա հետեւանքները տարածաշրջանի ռազմաքաղաքական հավասարակշռության վրա



ՀԱՎՈՐ ՉԱՔՐՅԱԼ

Պատմական գիտությունների թեկնածու

Սառը պատերազմի տարիներին Թուրքիան Միջին Արեւելքում ռազմաքաղաքական հենակետի դեր էր կատարում Արեւմուտքի համար: Միաժամանակ նա ՆԱՏՕ-ի միջնաբերդն էր ընդդեմ ԽՍՀՄ-ի: Այլ կերպ՝ տարածաշրջանում Թուրքիայի ազդեցիկ դիրքը պայմանավորված էր արեւմտյան տերությունների քաղաքական ծրագրերում զբաղեցրած տեղով, և Արեւելք-Արեւմուտք դիմակայությունը երաշխավորում էր այդ տեղի կայունությունը:

Սակայն 90-ական թվականների սկզբին աշխարհն ականատես եղավ շրջադարձային փոփոխությունների: 1991-ի սկզբին լուծարվեց Վարշավյան ուխտը: Մինչ այդ՝ տեղի տալով Արեւմուտքին, ԽՍՀՄ-ը միացել էր ԱՄՆ-ի գլխավորած հակաիրաքյան դաշինքին: Սա Արեւելք-Արեւմուտք մրցապայքարում վերջինիս հաղթանակի լուրջ փաստարկ էր: Դրանով սկսված ազդարարվեց երկրագնդի վրա երկբևեռ համակարգից միաբևեռի անցման անխուսափելիությունը:

1991-ի օգոստոսին լուծարվեց նաև ԽՍՀՄ Կոմունիստական կուսակցությունը:

Նր: Նույն թվականի դեկտեմբերի 21-ին Նախկին միութենական հանրապետությունների մասնակցությամբ կազմավորվեց Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ): Թերեւս դրանով վերջ տրվեց խորհրդային միության տանջալից հոգեվարքին:

Վարշավյան ուխտի լուծարումը նշանավորվեց սառը պատերազմի ավարտով: ԽՍՀՄ-ի փլուզմամբ քայքայվեց համայնավարական համակարգը: Թուրքական կառավարությունը 1991-ի դեկտեմբերի 16-ի որոշմամբ խորհրդային այլ հանրապետությունների թվում ճանաչեց Ռուսաստանի Դաշնության անկախությունը: Ավելին՝ 1992-ի սկզբին Ռուսաստանը, որպես հիմնադիր կազմի անդամ, հրավիրվեց «Սեւծովյան տնտեսական համագործակցություն» կազմակերպություն: Այսպիսով՝ նախադրյալներ ստեղծվեցին ռուս-թուրքական հարաբերությունները նոր հիմունքներով զարգացնելու համար և դրանք սկսեցին վերածել համագործակցության, թեկուզ ամենտրատնտեսական ու էներգետիկայի բնագավառներում:

Սակայն Արեւմուտքը օրակարգ մտցրեց Արեւելյան Եվրոպայում ռուսական գործոնի վերականգման սպառնալիքը չեզոքացնելու, ինչպես նաև Զարավային Կովկասն ու Միջին Ասիան Թուրքիայի միջոցով Ռուսաստանի ազդեցությունից զերծ պահելու հարցը: Դա ենթադրում է Թուրքիային համապատասխան դերի հատկացում, ինչը ԽՍՀՄ-ի փլուզմանը զուգընթաց՝ ստացավ «Ադրիատիկից մինչև Չինական ծով» ձեւակերպումը:

Նոր դերից բխող պահանջները, ինչ խոսք, զգալիորեն գերազանցում էին Թուրքիայի քաղաքական, տնտեսական,

առավել եւս ֆինանսական կարողությունները: Թեւ 1992-ին Արեւմուտքն ակնհայտորեն մեղադրեց Թուրքիային ստանձնած դերը տապալելու մեջ, բայց եւայնպէս թուրքալեզու հանրապետությունների հետ սերտաճման հեռանկարը այնպիսի ոգեւորություն էր պատճառել նրան, որ նա, ի լուր աշխարհի, հայտարարեց. «21-րդ դարը լինելու է թուրքական աշխարհի դար»¹:

Մեւ ծովի ավազանում, Հարավային Կովկասի ու Միջին Ասիայի թուրքալեզու հանրապետություններում Թուրքիայի ակտիվ քաղաքական գործունեությունն ու անզուսպ հավակնությունները ԽՍՀՄ-ի իրավահաջորդ Ռուսաստանում դիտարկվեց որպէս ոտնձգություն ռուսական գերազդեցության տարածքների հանդէպ: Չնայած վարչապետ Սուլէյման Դեմիրելի՝ Ռուսաստան կատարած այցի ընթացքում 1992թ. մայիսի 25-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ռուսաստանի Դաշնության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների հիմունքների մասին» պայմանագրի առկայությանը, որտեղ կողմերը բնութագրվում էին որպէս «բարեկամ պետություններ», անցումային շրջանի դժվարությունների պատճառով Արեւմուտքի առջեւ ընկրկող Ռուսաստանը սկսեց կոշտ դիրքորոշում որդեգրել Թուրքիայի նկատմամբ²:

Դա հատկապէս ակնառու դարձավ 1993-ին, երբ Ռուսաստանն ընդունեց «Արտաքին քաղաքականության նոր հայեցակարգ», իսկ 1994-ին «Բաշքէնթ» համալսարանի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի պրոֆ. Էնվեր Հասանօղլուի դիպուկ արտահայտությամբ՝ ռուս-թուրքական հարաբերությունները հանգեցին յուրատեսակ «սառը պատերազմի»³: Այս պայմաններում ընդհատվեց Արեւմուտքի կողմից խրախուսվող եւ համագործակցության վերաճող ռուս-թուրքական հարաբերությունների բնականոն զարգացումը:

Ընդհատման նախաձեռնությունը, ինչպէս նշում է պրոֆ. Հասանօղլուն, պատկանում էր ռուսական կողմին, որովհետեւ ռուս-թուրքական հարաբերությունների ընթացքը, ընդհանուր առմամբ, կանխորոշել է Ռուսաստանը⁴:

* * *

Ռուս-թուրքական հարաբերություններում առկա սառնությունը պահպանվեց մինչեւ որ Վլադիմիր Պուտինը Ռուսաստանի Դաշնության նախագահի պաշտոնում փոխարինեց Բորիս Ելցինին: 2000թ. նախագահական ընտրությունների արդյունքում գալով իշխանության, Պուտինը սկզբնական շրջանում վերապահորեն էր վերաբերվում Թուրքիայի հետ հարաբերություններին: Ըստ ամենայնի, նրա մոտեցումը պայմանավորված էր այն աջակցությամբ, որ թուրքական իշխանությունները ցուցաբերում էին ինչպէս չէջն անջատողականներին, այնպէս էլ Ռուսաստանի տարածքում գործող իսլամական ահաբեկչական կազմակերպություններին⁵:

Ի դէպ, Թուրքիան էլ Ռուսաստանին էր մեղադրում, թէ աջակցում է Զուրդատանի աշխատավորական կուսակցությանը՝ PKK-ին: Փոխադարձ մեղադրանքները երկուստեք անվստահություն էին ենթադրում, իսկ դա լուրջ խոչընդոտ է երկու երկրների հարաբերություններում առկա դժվարությունների հաղթահարման ճանապարհին: Բացի Թուրքիայի նկատմամբ նախագահ Պուտինի վերապահումից, անցումային դժվարություններին բախվող Ռուսաստանին լրջորեն մտահոգում էր ԽՍՀՄ-ի փլուզմամբ պայմանավորված «անպաշտպանվածության» բարդույթը, իսկ Պուտինին՝ ռուսական գերազդեցության տարածքների խոցելիությունն ու ռուսական պետության գերտերության կարգավիճակի կորուստը: Թուրքիան, իր հերթին, կանգնած էր երկրի ներքաղաքական կյանքի

ապակայունացումը հաղթահարելու առաջնահերթ խնդրի առջեւ:

Թեպետ Ռուսաստանն ու Պուտինը չկարողացան ձերբազատվել նշված մտահոգություններից, ոչ էլ Թուրքիան հաղթահարեց ապակայունացման խնդիրը, սակայն 2001-ին ԱՄՆ-ը Նյու Յորքում ակամատես եղավ աննախադեպ ահաբեկչության: Մեպտեմբերի 11-ի այդ ահաբեկչությունից հետո պաշտոնական Վաշինգտոնը սկսեց ԱՄՆ-ի համար սպառնալիքի աղբյուր դիտարկել Միջին Արեւելքն ու Յուսիսային Աֆրիկան՝ ներառյալ Յարաբային Կովկասն ու Միջին Ասիան, շրջանառության մեջ դրեց դեռեւս 90-ականներին մշակված «Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագիրը, ապա, գլոբալ պատերազմ հայտարարեց միջազգային ահաբեկչությանը: Այս ամենին հետեւեցին Աֆղանստանի դեմ 2001-ին սանձազերծված պատերազմական գործողություններն ու 2003-ի հակահրայան երկրորդ պատերազմը, ընդ որում՝ առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշման, որի մշտական 5 անդամներից մեկն է Ռուսաստանի Դաշնությունը:

Ինչպես ողջ աշխարհի եւ նշված տարածաշրջանների, այնպես էլ տարածաշրջանային երկրներից Թուրքիայի ու գերտերության հավակնություններով տարածաշրջանում շահեր հետապնդող Ռուսաստանի համար անկանխատեսելի հետեւանքներով հղի այս զարգացումները նպաստեցին երկու պետությունների մերձեցմանը, որին ընդամառեց նախագահ Պուտինը:

* * *

2001թ. նոյեմբերի 16-ին Նյու Յորքում Ռուսաստանի եւ Թուրքիայի արագործնախարարները ստորագրեցին «Երկկողմ համագործակցությունից դեպի բազմակողմանի գործընկերություն» ենթավերնագիրը կրող «Ռուսաստանի

Դաշնության եւ Թուրքիայի Յանրապետության միջեւ Եվրասիայում համագործակցության գործողությունների ծրագիրը»⁶: Թեւս այդ ծրագրի ստորագրումս ի զորու չեղավ ռուս-թուրքական «համագործակցությանը» բազմակողմանի գործընկերության բնույթ հաղորդել, սակայն փոխադարձ այցելությունների համար նախապայմաններ ստեղծեց:

Դրանցից, թերեւս, «ամենանշանակալին» 2004թ. դեկտեմբերի 6-ին նախագահ Պուտինի՝ Անկարա կատարած պաշտոնական այցն էր: Այցի նախօրյակին ռուսական մամուլին տված հարցազրույցում Վլադիմիր Պուտինն ընդգծեց «Մեւ ծովի առափնյա երկու երկրների միջեւ առեւտրական հարաբերությունների զարգացման նշանակությունը ներկա փուլում», իսկ Անկարայում հայտարարեց. «Եկել ենք այստեղ, որ ընդունենք հանդուգն որոշումներ: Մեր այցը առեւտրատնտեսական բնագավառում նոր հորիզոններ է բացելու Ռուսաստանի եւ Թուրքիայի առջեւ»⁷:

Նախագահ Պուտինը խոսեց նաեւ չեչեն ահաբեկիչների մասին, որոնց Թուրքիայում ապաստանած ղեկավարներից 9-ին թուրքական իշխանություններն արդեն ձերբակալել էին այցի նախօրյակին: Պուտինի այցի ընթացքում հարթվեցին նաեւ 2003-ից շահագործվող «Կապույտ հոսքի» հետ կապված որոշ խնդիրներ՝ ավելացնելով Թուրքիա մատակարարվող ռուսական գազի ծավալները⁸: 2005-ի հունվարին պատասխան այցով Մոսկվա ուղեւորվեց Թուրքիայի վարչապետ Ռեչեփ Թայիփ Էրդողանը, որտեղ կողմերը երկու երկրների միջեւ համախառն առեւտրի ծավալը 25 միլիարդ դոլարի հասցնելու որոշում կայացրին:

2004-ին 4,6 մլրդ կազմող այդ ցուցանիշը 2007-ին հասել էր 21 միլիարդի: Մինչ անշեղորեն զարգանում էին ռուս-թուրքական առեւտրատնտեսական հարաբերությունները, 2008-ի օգոստոսին

բռնկվեց Հարավօսական պատերազմը: Ռուսաստանը բախվեց ՆԱՏՕ-ի բուռն հակազդեցությանը: Որպես ՆԱՏՕ-ի անդամ՝ Թուրքիան նույնպես հակադրվեց Ռուսաստանին, սակայն անպատասխան թողեց Վրաստանի ռազմական օգնության պահանջը:

2014-ի սկզբին, երբ Պուտինը զորք մտցրեց Ուկրաինա, իսկ մարտի 16-ին Ղրիմը կցեց Ռուսաստանին, Թուրքիան հակազդեցությամբ արձագանքեց, բայց եւսայնպես, ի տարբերություն ՆԱՏՕ-ի անդամ մյուս երկրների, զերծ մնաց պատժամիջոցների կիրառումից: Այլ կերպ՝ չնայած քաղաքական ասպարեզում առաջացած լուրջ հակասություններին, ռուս-թուրքական առեւտրատնտեսական հարաբերությունները մինչեւ 2015թ. շարունակեցին անշեղորեն զարգանալ: Երկու երկրների միջեւ համախառն առեւտրի ծավալն արդեն կազմում էր 35 մլրդ դոլար:

Այդ հակասությունները չխանգարեցին Պուտինին, որ 2012 եւ 2014 թվականներին եւս երկու այց կատարի Թուրքիա: Ավելին՝ երկրորդ այցի ընթացքում նա Անկարայում արտահայտվեց նախապատվությունը, ի տարբերություն «Հարավային հոսքի», «Թուրքական հոսք» նախագծին տալու մասին: Ընդ որում, սա այն դեպքում, երբ «Արաբական գարնան» զոհը դարձած Սիրիան արդեն ներքաշվել էր չհայտարարված պատերազմի մեջ:

* * *

Սիրիայի ճգնաժամը սկսեց 2011-ի մարտին: Մինչ Պուտինը սիրիական ճգնաժամին քաղաքական լուծում էր առաջարկում, ամեն կերպ ձգտում էր ճգնաժամի կարգավորման գործընթացում ապահովել Սիրիայի նախագահ Բաշար Ասադին թիկունք կանգնած Իրանի Իսլամական հանրապետության ներգրավվածությունն ու ընդգծում

ահաբեկչական բոլոր խմբավորումների դեմ համատեղ պայքարի անհրաժեշտությունը, Էրդողանը վարչապետի կարգավիճակով, Ասադի վարչակարգը տապալելու համար Քաթարի ու Սաուդյան Արաբիայի հետ միասին աջակցում էր Սիրիայում գործող ահաբեկչական խմբավորումներին՝ կազմավորելով նորերը, ինչպիսիք են «Սուլթան Աբդուլհամիդ», «Սուլթան Մուրադ խան» բրիգադներն ու «Ֆեթիհ» խմբավորումը:

Ավելին՝ Էրդողանը զորքով Դամասկոս մտնելու հույսեր էր փայփայում, որպեսզի տապալի Բաշար Ասադին: Թերեւս՝ այդ առումով պատահական չէր «Արդարություն եւ բարգավաճում» խմբակցության առջեւ նրա 2012-ի օգոստոսի 4-ին ունեցած ելույթը. «Տիրոջ կամքով կմտնենք Դամասկոս եւ մեր նամազը կանենք Օմայան մզկիթում»⁹: Ի դեպ, իշխանամետ «Թաքվիմ» թերթն էլ 20015թ. օգոստոսի 5-ի համարում Հալեպը Թուրքիայի 82-րդ վիլայեթն էր համարում¹⁰:

Ավնիայտ Է, որ Ասադի վարչակարգը սեփական նախաձեռնությամբ տապալելու պարագայում Թուրքիան՝ անմիջականորեն մասնակցելով նոր իշխանությունների ձեւավորմանը, Սիրիայում դիրքերն ամրապնդելու, այդտեղից իր ազդեցությունը հարակից երկրների վրա տարածելու եւ, դրանով իսկ, տարածաշրջանային գերտերության վաղեմի երազանքն իրականացնելու հնարավորություն էր ստանալու: Դրա համար անհրաժեշտ էր ՆԱՏՕ-ի աջակցությունը, բայց՝ ապարդյուն: ՆԱՏՕ-ի շրջանակներն անտեսեցին նաեւ Սիրիայի թուրքական սահմանին հարող տարածքի երկայնքով «անվտանգության գոտի» ստեղծելու՝ Թուրքիայի պահանջները: Այդ ընթացքում ԱՄՆ-ը, ի դեմս նախագահ Բարաք Օբամայի, եւ Եվրամիության առաջատար երկները ստեղծված իրավիճակում Սիրիան չէին պատկերացնում առանց Բաշար Ասադի:

Ասադի տապալման՝ Երդոզանի ծրագիրը ձախողվեց: Ինչ վերաբերում է «անվտանգության գոտուն», ապա այդ գոտու համար նախատեսվող տարածքում ամրակազմվեցին քրդական «Ժողովրդավարական միասնություն» կուսակցության՝ PYD-ի եւ նրա ռազմական թեւը հանդիսացող «Ժովրդական պաշտպանական ուժերի»՝ YPG-ի դիրքերը, որոնց թվակազմը շուրջ 50 հազար է: Հատկանշական է, որ մինչ Թուրքիան նրանց անվանում էր PKK-ի ահաբեկիչներ, նախագահ Օբաման անվանեց «ԱՄՆ-ի ցամաքային զորքը»: Դրան հետեւեցին Անկարայի քուրդ ահաբեկիչներին աջակցելու եւ Թուրքիայի սիրիական սահմանի երկայնքով քրդական գոտի ստեղծելու՝ Վաշինգտոնին հասցեագրած անընդմեջ մեղադրանքները:

Այդ մեղադրանքների, ինչպես նաեւ նախագահ Ասադին տապալելու պատճառաբանությամբ Սիրիայում ՆԱՏՕ-ին պատերազմական գործողությունների մեջ ներքաշելու նկրտումների հետեւանքով Թուրքիան դարձավ խնդրահարույց երկիր ԱՄՆ-ի ու ԵՄ-ի համար: Ստեղծված իրավիճակում Թուրքիան փորձեց Հյուսիսային Սիրիայի քրդական կազմավորումների դեմ օգտագործել իր իսկ հովանավորած՝ «Իսլամական խալիֆայություն» կոչված «Իրաք-Շամ իսլամական պետության» ահաբեկիչներին:

Այս կազմակերպության նպատակը, սակայն, քրդական կազմավորումները չէին, այլ ողջ Սիրիան: Չնայած ամերիկյան օդուժի ռմբակոծություններին, նրան հաջողվում է առաջխաղացումը դեպի Դամասկոս: Թվում էր՝ 2014-ին նախագահ ընտրված Երդոզանը, թեկուզ «Իսլամական խալիֆայության» միջոցով, հասնում է Ասադի տապալման նպատակին: Ու հանկարծ 2015թ. սեպտեմբերի 30-ին Սիրիայի կռիվներին միջամտում է Ռուսաստանը: Ընդ որում, այս միջամտությունից առաջ՝ սեպտեմբերի 23-ին, Պուտինը Մոսկվայում ընդունել էր նախագահ Երդոզանին:

* * *

Ռուսաստանի ռազմական միջամտությունը Էապես փոխեց ուժերի հավասարակշռությունը Սիրիայում: Չնայած ռուսական օդուժի հարվածները «Իսլամական խալիֆայության» շրջանակներով սահմանափակելու՝ Վաշինգտոնի փորձերին, սկսեցին լուրջ հարվածներ ստանալ նաեւ ան-Նուսրան, Ջեյշ իսլամական ու Թուրքիայի կողմից հովանավորվող մնացած բոլոր ահաբեկչական խմբավորումները: Հարվածներից զերծ չմնացին նաեւ Թուրքիայի սահմանամերձ շրջանները, մասնավորապես՝ համապատասխանաբար ան-Նուսրայի եւ «Իսլամական խալիֆայության» վերահսկողության տակ գտնվող Ազեզն ու Ջերաբլուսը, որոնք 993 կմ ձգվող թուրք-սիրիական սահմանի ընդամենը 93 կիլոմետրանոց հատվածն են կազմում: Ահաբեկչական կազմակերպությունները կանգնեցին մատակարարման ուղիների փակման սպառնալիքի առջև: Ոչ միայն կասեցվեց նրանց առաջխաղացումը, այլեւ Ասադի զորքերը հակահարվածի լայն հնարավորություններ ստացան: Ընդհուպ մոտենալով թուրքական սահմանին եւ Հալեպին, նրանք զգալիորեն ընդարձակեցին կենտրոնական իշխանությանը ենթակա տարածքները:

Նախագահ Ասադի դիրքերի ամրապնդումն ու կառավարական զորքերի առջեւ ահաբեկչական կազմակերպությունների ընկրկումը՝ ի չիք դարձնելով քրդական կազմավորումների դեմ նրանց օգտագործելու հաշվարկները, խուճապի մատնեցին Թուրքիային, որովհետեւ այդ կազմակերպությունները վերջինի, թերեւս, միակ հենարանն էին Սիրիայում: Ըստ երեւույթին, այդ տեսանկյունից պետք է դիտարկել 2015թ. նոյեմբերի 24-ին ռուսական Cy-24 ռազմական ինքնաթիռի խոցումը:

Այդ լուրը նույն օրը հաղորդագրությամբ տարածեց Թուրքիայի նախագահի գրասենյակը՝ մատնանշելով. «Մեր օդային տարածքը խախտելու, նախագզուշացումներն անտեսելու պատճառով խոցվել է ռուսական Су-24 կործանիչը»¹¹: Նախագահ Պուտինը, որ այցելում էր Ղրղանան, իսկույն արձագանքեց՝ նախագզուշացնելով. «Դա լուրջ հետևանքներ է ունենալու, մեզ դաշունահարեցին թիկունքից»: Նա միաժամանակ պահանջեց, որ Թուրքիան պաշտոնապես ներողություն խնդրի Ռուսաստանից, փոխհատուցում վճարի եւ պատժի պատասխանատուներին: Ի պատասխան դրան՝ CNN-ին տված հարցազրույցում Էրդողանն ասաց. «Ներողություն պետք է խնդրեն նրանք, ովքեր խախտել են մեր օդային տարածքը»¹²:

Ի դեպ, ինքնաթիռի կործանումից հետո Էրդողանը հեռաձայնել եւ իրազեկել էր նախագահ Օբամային: Այդ ընթացքում Թուրքիան արտակարգ նիստի պահանջով դիմել էր ՆԱՏՕ-ին: Նոյեմբերի 25-ին հրավիրվեց Յուսուսատլանտյան խորհրդի նիստը, որի ավարտին, սակայն, պաշտոնական որեւէ հայտարարություն չարվեց, պարզապես ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ստոլթենբերգը բանավոր Յուսուսատլանտյան դաշինքի համերաշխությունը հայտնեց Թուրքիային¹³: Այսինքն՝ Թուրքիան ակնկալվող աջակցությունը չստացավ: Թերեւս դա էր պատճառը, որ Էրդողանն արդեն նոյեմբերի 26-ին ֆրանսական հեռուստատեսության հարցին ի պատասխան՝ ասաց. «Եթե իմանալիք, որ ինքնաթիռը ռուսական է, այլ կերպ կվարվեինք», իսկ նոյեմբերի 28-ին միջադեպի առնչությամբ ցավ հայտնեց: Սակայն Պուտինն արդեն ստորագրել էր «Թուրքիայի դեմ տնտեսական հատուկ միջոցառումների ընդունման մասին» հրամանը, որն ուժի մեջ մտավ 2016-ի հունվարի 1-ից՝ ներառելով Ռուսաստանում գործող շուրջ 500 թուրքական կազմակերպությունների

գործունեության սահմանափակումն ու վիզային ռեժիմի կիրառումը Թուրքիայի քաղաքացիների նկատմամբ¹⁴:

Նախագահ Պուտինն անպատասխան թողեց նաեւ հեռախոսազրույցի եւ հանդիպման բոլոր պահանջները: Դա ենթադրում էր Ռուսաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների սառեցում, ինչը հանգեցրեց «Աքբուլու» ատոմակայանի եւ 12 մլրդ դոլար արժողությամբ «Թուրքական հոսք» նախագծի, առհասարակ առեւտրատնտեսական հարաբերությունների իսպառ սառեցմանը, Ժողովրդահանրապետական կուսակցության պատգամավոր Օսման Բուդաքի վկայությամբ, պատճառելով թուրքական տնտեսությանը ավելի քան 20 մլրդ դոլարի վնաս¹⁵:

Ավելի քան մեծ էին Ռուսաստանի հետ ճգնաժամի քաղաքական վնասները: Մինչ Թուրքիան արդեն ձախողել էր «առկա խնդիրները բոլոր հարեւանների հետ զրոյականացնելու» քաղաքականությունը՝ մտնելով յուրատեսակ «սառը պատերազմի» մեջ ինչպես անմիջական հարեւաններ Իրանի, Իրաքի, Սիրիայի, այնպես էլ Իսրայելի, Եգիպտոսի, Թունիսի ու Լիբիայի հետ: Փաստի առջեւ կանգնեցնելու փորձերով նա միաժամանակ խնդրահարույց էր դարձել ԱՄՆ-ի ու ԵՄ-ի համար:

Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին, ապա այդ առումով հատկանշական են Լյուքսեմբուրգի արտգործնախարար Յան Ասելբորնի ասածները «Շափգելի» թղթակցին, թե չպետք է թույլ տալ, որ ռուս-թուրքական տարաձայնությունների պատճառով ՆԱՏՕ-ն հակամարտության մեջ մտնի Ռուսաստանի հետ, որովհետեւ ՆԱՏՕ-ի կանոնադրության հավաքական պաշտպանության մասին հողվածն ուժի մեջ է մտնում «միայն անդամ երկրի վրա բացահայտ հարձակման դեպքում»¹⁶:

Փաստորեն Թուրքիան մեկուսացել էր ինչպես անմիջական հարեւաններից ու

տարածաշրջանի երկրներից, այնպես էլ երբեմնի դաշնակիցներ ԱՄՆ-ից ու ԵՄ-ից: Միևչդեռ՝ մերձենալով Ռուսաստանին, Թուրքիան կարողանում էր ճեղքել մեկուսացվածությունը, այդ մերձեցմամբ հավասարակշռում ԱՄՆ-ի ու ԵՄ-ի ճնշումները եւ խուսանավում նրանց միջեւ: Ըստ երեւույթին, այս հանգամանքն էլ ստիպեց նախագահ Էրդողանին հունիսի 27-ի նամակով դիմել Վլադիմիր Պուտինին: Հիմք ընդունելով երկլեզու այդ նամակի թուրքերեն տեքստը, պետք է ասել, որ այնտեղ արտահայտված «ներողությունը» անհասցե է: Համենայն դեպս՝ Ռուսաստանի Դաշնությունից Թուրքիայի պաշտոնական ներողության բնույթ չի կրում: Նույնը վերաբերում է փոխհատուցում վճարելու՝ Էրդողանի պատրաստակամությանը:

Դրանով հանդերձ՝ նախագահ Պուտինն ընդառաջեց Էրդողանին եւ օգոստոսի 9-ին նրանք հանդիպեցին Սանկտ Պետերբուրգում: Այս հանդիպումը նույնիսկ չհանգեցրեց Թուրքիայի քաղաքացիների նկատմամբ Ռուսաստանի սահմաններում կիրառվող վիզային պայմանակարգի վերացմանը: Պարզապես կողմերը բարի կամք դրսևորեցին ռուս-թուրքական հարաբերությունների նախկին մակարդակը վերականգնելու համար: Ռուսական կողմը բավարար չի համարում նույնիսկ Թուրքիայի պաշտոնական ներողությունը Ռուսաստանից: Հարաբերությունների վերականգման համար նա պահանջում է, որ Թուրքիան եապես վերանայի Իրաքի եւ Սիրիայի նկատմամբ որդեգրած քաղաքականությունը:

Դա պատահական չէ, այլ պայմանավորված է տարածաշրջանում Ռուսաստանի ռազմաքաղաքական ներկայությունն ապահովելու՝ Վլադիմիր Պուտինի նկատառումներով: Ռուսաստանն այդ հնարավորությունը ստացել է՝ միջամտելով Սիրիայի քաղաքական զարգացումներին եւ, «Մոնդ»-ի դիպուկ արտա-

հայտությամբ, դառնալով իրադրության լիարժեք տերը: Այդ միջամտությամբ Ռուսաստանը Արեւմուտքի ուշադրությունը շեղեց ուկրաինական ճգնաժամից եւ Ուկրաինայում ծավալվող ռուս-ամերիկյան մրցակցությունը տեղափոխեց Սիրիայի տարածք: Մտում է, որ նա թուրքերին հրապուրի հարաբերությունների վերականգման հեռանկարով, որպեսզի Թուրքիան ստիպված չլինի կառչել Արեւմուտքից՝ տարածաշրջանում վերջինիս ծրագրերին ծառայելու պատրաստակամությամբ: Այլ կերպ՝ իզուր չէ, որ Պուտինն ընդառաջել է Էրդողանին:

Ամփոփում

Հետխորհրդային շրջանում ռուս-թուրքական հարաբերությունները, թեկուզ ամենտրատնտեսական ոլորտում, անշեղորեն զարգանում էին, եւ քաղաքական տարածայնությունները չէին խաթարում դրանց ընթացքը: Սակայն Ռուսաստանի միջամտությունը Սիրիայի քաղաքական զարգացումներին ոչ միայն փոխեց ռազմաքաղաքական իրավիճակն այդ երկրում, այլեւ ի չիք դարձրեց նախագահ Ասադին տապալելու միջոցով այնտեղ նոր իշխանություններ ձեւավորելու՝ Թուրքիայի հաշվարկները: Ռուսական ինքնաթիռի խոցումը Ռուսաստանի միջամտության թուրքական արձագանքն էր: Ակնհայտ է, որ սեփական նախածեռնությամբ իշխանություն ձեւավորելու դեպքում Թուրքիան դիրքեր էր ամրապնդելու Սիրիայում՝ տարածելու այնտեղից իր ազդեցությունը տարածաշրջանի երկրների վրա, իրականացնելու տարածաշրջանային գերտերություն դառնալու իր վաղեմի երազանքը:

ՀՂՈՒՄՆԵՐ

- 1 Տժւ. Հ. Չաքրյան, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Եր. 1998, էջ 9
- 2 Տժւ. A.Koplay, Türkiye-Rusya İlişkileri: Genel Bakış. politikakademi.org/2013/07/yazi-dizisi-turkiye-rusya-ilişkileri-genel-bakis/
- 3 Տժւ. E.Hasanoglu, Yeniden Bicimlenen Dunyada Türkiye-Rusya ilişkileri. aso.org.tr/kurumsal/media/kaynak/TUR/asomedyasubat2005/buyutec-subat2005.html
- 4 Ibid
- 5 Ibid
- 6 Տժւ. A. Koplay
- 7 Տժւ. E. Goksedef, Putin Donemi Turk-Rus İlişkileri. www.aljazeera.com.tr/al-jazeera-ozel?putin-donemi-turk-rus-iliskileri
- 8 Ibid
- 9 Տժւ. Hurriyet, 5 Eylül, 2012
- 10 Տժւ. Takvim, 5 Agustos, 2015
- 11 Տժւ. Hurriyet.com.tr, 24 Kasim, 20015
- 12 Տժւ. www.bbc.com/turkce/haberler/2-015/12/151204-rusya-krizin-10-gunu
- 13 Տժւ. BBC-Turkce, 25 Kasim, 2015.
- 14 Տժւ. www.1in.am/2001694.html
- 15 Տժւ. http://www.tr.mehrnews.com/news/1857782/Türkiye-nin-Rusya-krizinden-zararı-20-milyar-dolar
- 16 Տժւ` ԱԶԳ օրաթերթ, 26.02.2016

Աոօ Չաքրյան

Րոսսիյսկո-տուրեքիյ կրիզիս և երո վոզմոժնյե օսլեդստվիյա նա եոօլիտիկեսկիյ Բալանս վ ղեյոնե

Վ օստսօվետսկիյ օերիոդ րոսսիյսկո-տուրեքիյե օղնոսիյա ղեյե վ տրոցօվո-եոնոմիկեսկոյ սօօրե նեյկլոննո րա-

Վիվալիսյ և օլիտիկեսկիյ րազնոցլասիյա նե օրեյաթստվօվալիսյ օտոյու հօդս սօբյիտիյ. Օղնաօկո վմեշաթելստվօ Րոսսիյա վ րազ-Վիտիե օլիտիկեսկիյ օրօցեսսօվ Տուրքիյա նե տօլկօ իզմեոիլօ եոօլիտիկեսկիյ սիտուալիյո վ օտօյ սթրանե, նօ ի աննուլի-րօվալօ րաճաթեյա Տուրքիյա նա օրմիրօվա-նիե տա նօվօյ վլաթի օուեմ սվերձեոյա ղրեզիդենթա Ասաղա. Տուրեքիյոմ օղղօլօ-սկօմ վմեշաթելստվօ Րոսսիյա յալիօլսյե սնիչոցիլօյեո րօսսիյսկօյ սօմօլետա. Օչեվիղնօ, Չի վ սլաչաե օրմիրօվա-նիյա վլաթի օօ սօբսթեննօյ ինիլիաթիվե, Տուր-չիյա սրեքիլա Յի սվօյ օօզիլիյո վ Տուրքիյա, րաճրօստրալնիվ օղղա սվօե վլիյալնիե նա սօսեղնիե սթրանյո և օսուշչեստվա Յի ղա-ղեթնյույե մեչու սթաթ սվերհղեյաղաՎօյ վ ղեյո-նիյոնե.

Hakob Chakryan

Russian-Turkish Crisis and Its Possible Impact on the Geopolitical Balance in the Region

Russian-Turkish relations have developed steadily in trade and economic sphere in the post-Soviet period, and even political disagreements did not interfere with that course of events. But Russian intervention in Syrian political processes not only changed the geopolitical situation in the country but canceled the Turkish calculations on the formation of a new government there by overthrowing President Assad. Turkish reaction to Russian intervention was destruction of a Russian plane. Obviously, in the case of forming the government on its own initiative, Turkey would have strengthened its position in Syria, extending out its influence on neighboring countries and carried out a cherished dream to become a superpower in the region.

Իրան-Ադրբեջան փոխհարաբերությունները եւ արցախյան հիմնահարցը



ԼՄՍԱ ԲԵԳԻՉԱՆՅԱՆ

Իրանագետ, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի մեկնարան

1991թ. դեկտեմբերին ԽՍՀՄ փլուզմամբ եւ Միջին Ասիայի ու Հարավային Կովկասի հանրապետությունների անկախացմամբ Եական փոփոխությունների ենթարկվեց Իրանի աշխարհաբաղաբական եւ երկրաբաղաբական դիրքը: Այդ փոփոխությունները հիմնականում դրական էին, քանի որ վերացավ գերտերությունների երկուստեք ճնշումն այդ երկրի վրա՝ Թեհրանին ընձեռելով տարածաշրջանի ամենաազդեցիկ երկրներից մեկը դառնալու լայն հնարավորություններ:

Իսկ հարավկովկասյան հանրապետությունների անկախացումը Իրանի համար խիստ կարեւոր էր նաեւ երկրառազմավարական տեսանկյունից, քանզի Թուրքիան այլեւս կորցրել էր Իրանը ցամաքով Եվրոպային կապելու իր մենաշնորհային դիրքը: Ավելին՝ Իրանցի քաղաքագետներից շատերը՝ այդ թվում Սադաֆի Ամերին, ընդգծում են, որ ԽՍՀՄ փլուզումն աշխարհաբաղաբական տեսանկյունից նշանակում

է հյուսիսից Իրանի անվտանգության գլխավոր սպառնալիքի վերացում, որովհետեւ ավելի քան 200 տարի ցարական Ռուսաստանը, այնուհետեւ Խորհրդային միությունը Իրանի նկատմամբ ռազմական սպառնալիքների լուրջ ներուժ էին, ինչը պատմության որոշ ժամանակահատվածներում գործնական բնույթ է կրել: Կարեւորելով սառը պատերազմի ավարտի նշանակությունը, Ամերին շեշտում է, որ Արեւելքի ու Արեւմուտքի հնարավոր բախման դեպքում առաջին ճակատում գտնվող Իրանը կվերածվեր ռազմադաշտի, ինչպես տեղի ունեցավ Առաջին եւ Երկրորդ աշխարհամարտերի ընթացքում:

Այսուհանդերձ՝ Իրանում հնչում են նաեւ մտահոգություններ ԽՍՀՄ փլուզմանը հաջորդող զարգացումների առիթով՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ. «Աշխարհում համայնավարական խոշորագույն տերության փլուզման առնչությամբ իրանցիների ուրախությունը երկար չտևեց, որովհետեւ հետագա իրադարձություններն Իրանի ազգային անվտանգության ոլորտում նոր, ավելի լուրջ մտահոգություններ են առաջացրել²»: Այլ կերպ ասած՝ ԽՍՀՄ փլուզմամբ աշխարհաբաղաբական դիրքի առումով Իրանը շահեց, սակայն խոցելի դարձավ համաթուրանական նկրտումների հանդեպ՝ սահմանակցելով անկախ Ադրբեջանին: Իրանը փաստացի դարձավ իր տարածքային ամբողջականությանը սպառնացող Ադրբեջանի հանրապետության համաթուրանական քաղաքականության թիրախը, քանի որ, անկախ իշխող վարչակարգի բնույթից, այդ երկրի արտաքին քաղաքականության մեջ կայուն տեղ ունեն Իրանի Ադրբեջան նահանգը «Հարավային Ադրբեջան» ան-

վանելն ու դրա հանդեպ տարածքային հավակնություններ փայփայելը:

Ադրբեջանի ստեղծումը Օսմանյան Թուրքիայի բուռն ջանքերի արդյունքն է: Այն արհեստականորեն ձեւավորվել է 1918թ. համաթյուրքական «Մուսավաթ» կուսակցության միջոցով եւ Իրանի Ադրբեջան նահանգի անվանը համահունչ կոչվել է հեռահար նպատակով՝ սպասարկել համաթյուրանականության նկրտումները: Չէ որ Յարավային Կովկասում, մասնավորապես մահմեդաբնակ հատվածում, Ադրբեջան անունով անգամ որեւէ գյուղ չի եղել: Յարավային Կովկասի մահմեդաբնակ շրջաններն Ադրբեջան անվանելու հարցին ու դրա դրդապատճառներին անդրադարձել են բազմաթիվ պատմաբան-գիտնականներ ու վերլուծաբաններ: Դուրսոր Էնայաթլիսի Ռեզան գրել է. «Արան եւ Շիրվան շրջաններն Ադրբեջան անվանելը եղել է Թուրքիայի ցանկությանը»: Յենվելյով պատմական ծանրակշիռ փաստերի վրա, նա ընդգծել է, որ Յարավային Կովկասի մահմեդաբնակ տարածքների «Ադրբեջան» անվանումը կեղծ է եւ քաղաքական նպատակներ է հետապնդում³:

Թեւեւ 1918թ. Իրանի մտավորականությունն ու ազգային գործիչները երկրի մամուլում իրենց բողոքի ձայնը բարձրացրին այդ առնչությամբ, իսկ պաշտոնական Թեհրանը բողոքեց շինծու անվանակոչության դեմ Ազգերի լիգային, սակայն այդ ժամանակահատվածում Իրանն ի գորու չէր լուրջ քայլեր ձեռնարկել:

Խորհրդային ժամանակաշրջանում պահպանվեց «Ադրբեջան» անունը, որի վերաբերյալ այդ ժամանակի ականավոր արեւելագետ Բարտոլոյը նշել է. «Ադրբեջան անվանումն Ադրբեջանական հանրապետության համար ընտրելու դրդապատճառը եղավ այն, որ եւթադրվում էր, թե Իրանի Ադրբեջանը կմիանա Ադրբեջանական հանրապետությանը⁴»:

1991թ. դեկտեմբերին 18-ին ԽՍՀՄ փլուզման հետեւանքով անկախացավ նաեւ Ադրբեջանը: 1992թ. հունվարի 4-ին Եվրոպայի եւ Ամերիկայի հարցերով Իրանի ԱԳ երբեմսի փոխնախարար, հետագայում կապի եւ տեխնոլոգիաների նախարար Մահմուդ Վաեզիի՝ Բաթուկատարած պաշտոնական այցի ընթացքում Իրանի հյուպատոսությունն այդ քաղաքում պաշտոնապես վերածվեց դեսպանության եւ բացվեց արտակարգ ու լիազոր դեսպանի մակարդակով: Այն փաստորեն առաջին օտարերկրյա դեսպանությունն էր Ադրբեջանում՝ քայլ, որով պատմամշակութային, կրոնական ընդհանրություններ ունեցող երկու հարեւան երկրների փոխհարաբերություններում նոր փուլ սկզբնավորվեց⁵: Ի դեպ, որոշ աղբյուրների համաձայն՝ 1991թ. դեկտեմբերի 29-ին Ադրբեջանում անկախության հանրաքվե անցկացվեց, որից հետո Իրանն առաջինը ճանաչեց Ադրբեջանի անկախությունը⁶: Վաեզի-Մութալիբով հանդիպմանը վերջինս ուղերձ հղեց Իրանի իշխանություններին՝ խնդրելով աջակցել Ադրբեջանի անդամակցությանը միջազգային կազմակերպություններին, այդ թվում՝ Տնտեսական համագործակցության կազմակերպությանը (ECO), Յամաշխարհային բանկին եւ այլն⁷:

Երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատվելուց հետո այդ ոլորտում համագործակցության շրջանակներում Իրանը ջանքեր գործադրեց ECO-ին, Իսլամական համաժողով կազմակերպությանը (ICO) եւ ՄԱԿ-ին Ադրբեջանի անդամակցության ուղղությամբ: Արդյունքում Ադրբեջանը խորհրդային նախկին հանրապետություններից առաջինն էր, որ դարձավ ICO-ի լիիրավ անդամ: Բացի դրանից, ԻՀՀ-ն աշխարհի տարբեր երկրներում իր դեսպանություններին

կարգադրել էր անհրաժեշտ ծառայություններ մատուցել ադրբեջանցի անփորձ դիվանագետներին: Իսկ 2013թ. Իրանի ջանքերով Ադրբեջանը դարձավ Նաեւ Չմիացած երկրների կազմակերպության անդամ:

Սակայն Իրանի նման վերաբերմունքը բնավ չխանգարեց, որպեսզի 100 տարի առաջ ձեւավորված Ադրբեջանի հանրապետությունը հետամուտ լինի իր ստեղծման դրդապատճառներին՝ համաթուրանական նկրտումներին: Դրանք ուղղված են Իրանի տարածքային ամբողջականության դեմ, իսկ Բաքուն այդ առնչությամբ որեւէ առիթ բաց չէր թողնում, անգամ խորհրդային իշխանության օրոք, երբ Մոսկվայի ու Բաքվի շահերը համընկնում էին: Եվ ահա Երկրորդ աշխարհամարտից հետո ԽՍՀՄ-ը ոչ միայն հրաժարվեց իրանական Ադրբեջանից դուրս բերել զորքերը՝ համաձայն ստորագրված պայմանագրի, այլեւ ԽՄԿԿ քաղցյուրոյի անդամ, Ադրբեջանական ԽՍՀ կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Միրջաֆար Բադիրովի ղեկավարությամբ, ով «մեծ Ադրբեջան» էր երազում ԽՍՀՄ կազմում, լայն գործունեություն ծավալեց Իրանի Ադրբեջանում՝ այն Իրանից պոկելու, Ադրբեջանական ԽՍՀ-ին միացնելու ուղղությամբ: Սակայն այդ հարցը վերածվեց ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի միջեւ լուրջ տարաձայնության եւ, ի վերջո, Իրանի դիվանագիտության ու ԱՄՆ-ի ճնշման ներքո Կարմիր բանակի զորամիավորումները 1946թ. դուրս բերվեցին Իրանից: Բադիրովի երազանքը չիրականացավ:

Բայցեւայնպես՝ հանուն համաթուրանական գաղափարների ծնված Ադրբեջանի հանրապետությունը ամուր միախուլված է այդ երազանքին, եւ ադրբեջանցիները դաստիարակվում են այդ ոգով՝ ծնված օրից, դպրոցական, բուհական ու ակադեմիական դասագրքերով, թե ԽՍՀՄ օրոք եւ թե դրանից առաջ ու հետո: Բաքվի կատարած քայլերն այդ

ուղղությամբ շարունակական ու բազմաթիվ են:

ԽՍՀՄ փլուզումից հետո Նախիջեւանի ինքնավար հանրապետության Գերագույն խորհուրդը 1991թ. դեկտեմբերին 16-ին, հիմք ընդունելով 1989թ. Նախիջեւանցիների՝ Իրանի սահմանը հատելու փորձը եւ այն գնահատելով որպես Արաքսի երկու ափերում գտնվող ադրբեջանցիների միավորման ձգտում, դեկտեմբերի 31-ը հայտարարեց «Աշխարհի ադրբեջանցիների համերաշխության եւ միավորման օր»: Չնայած բացառված չէ, որ Նախիջեւանցիների նման քայլը պայմանավորված էր Նախիջեւանի հայկական տարածք լինելու գիտակցումով, ինչի պատճառով էլ սարսափահար լիւր էին այն: Սակայն Ադրբեջանը դա մեկնաբանեց որպես Իրանի Ադրբեջանում «ազգային հանրապետության»⁸ փլուզումից հետո, որն, ըստ Բաքվի, երկու Ադրբեջանների վերջնական բաժանման պատճառ էր դարձել, կրկին միավորվելու առիթ⁹: Ավելի ուշ Ադրբեջանի ազգայնամոլ Նախագահ Էլչիբեյը դեկտեմբերի 31-ը պաշտոնապես ճանաչեց, իսկ 1993թ. Ալիեւ ավագն այդ օրն օրինականացրեց իբրեւ ոչ աշխատանքային՝ տոնական օր, եւ ամեն տարի տոնվում է մեծ շուքով: Ադրբեջանցիների չափանիշներով, կարելի է ասել, նման միավորման հաջորդ հնարավորությունը ստեղծվեց թերեւս Արցախյան պատերազմի ընթացքում, մասնավորապես 1993թ., երբ ադրբեջանցիները բախումների գոտուց փախուստի դիմելով՝ ձգտում էին ապաստան գտնել Իրանում, ինչը հավանաբար ուղղորդված էր: Զայլ, որի նպատակը ոչ միայն «ազգակիցներին միանալու» ձգտումները կարող էին լինել, այլեւ Իրանին հակամարտության մեջ ներքաշելը եւ Իրանի ադրբեջանցիների շրջանում անջատողական ու հակահայ տրամադրություններ բորբոքելը: Սակայն իրանական կողմը խելամիտ քայլ որդեգրեց. փակեց սահմանները՝

հայտարարելով, թե փախստականներին բազմակողմանի աջակցություն կցուցաբերի հենց Ադրբեջանում մերձսահմանային տարածքներում ճամբարներ ստեղծելով, ինչը բնականաբար լուրջ դժգոհություն առաջացրեց Բաքվում: Այսուհանդերձ՝ Իրանն իր խոստումը կատարեց՝ բազմակողմանի աջակցություն ցուցաբերելով փախստականներին, ընդհուպ ամուսնացողներին օժիտ տալով: Իսկ Նախիջեւանը, որը սահմանակից է Նաեւ Թուրքիային, մինչեւ 90-ականների կեսերը գրեթե գոյատևեց Իրանի ցուցաբերած օգնության հաշվին:

Արցախյան առաջին պատերազմի ընթացքում Իրանի աջակցությունն Ադրբեջանին այսքանով չի սահմանափակվել: Այդ մասին առայսօր Իրանում հաճախ են բարձրաձայնում թե՛ իշխանական եւ թե՛ ՉԼՄ-ների ու վերլուծական շրջանակներում՝ մատնանշելով Ադրբեջանի ապերախտությունը: Ընթացիկ տարվա փետրվարի 23-ին, երբ պաշտոնական այցով Իլիամ Ալիեւն Իրանում էր, Արեւելյան Ադրբեջանի կենտրոն Թավրիզ քաղաքում տեղի ունեցավ «Մտորումներ Իրան-Ադրբեջան փոխհարաբերությունների մասին» թեմայով գիտաժողով, նահանգի հետազոտողների, դասախոսների ու գիտնականների մասնակցությամբ, որտեղ հնչած տեսակետներում արտացոլված էին Իրանի շահերը: Թերեւս համաժողովի օրվա եւ վայրի ընտրությունը պատահական չէր՝ հաշվի առնելով, որ ադրբեջանցի ազգայնամուլները Թավրիզը համարում են իրենց իսկական մայրաքաղաքը: Գիտաժողովին կովկասագետ դոկտ. Ալի Զյաֆաշը հանդես է եկել «Ադրբեջանի իշխանությունների վարքաբանությունը» զեկույցով, որտեղ անդրադարձել է նաեւ ԼՂՀ-Ադրբեջան պատերազմի ընթացքում Իրանի կողմից Բաքվին ցուցաբերված օգնություններին եւ նշել, որ Թեհրանը մահմեդական ադրբեջանցիներին աջակցել է

պատասխանատվության զգացումով՝ տնտեսական բոլոր բնագավառներում, օգնել ռազմական ոլորտում, անգամ այդ նպատակով երկրի տարածքն է տրամադրել, բժշկական անգնահատելի օգնություն ցուցաբերել, եւ այս ամենն արժանացել է Ադրբեջանի ապերախտությանը¹⁰: Միաժամանակ նա Ադրբեջանին մեղադրել է «Դարի պայմանագիր» կոչվող նավթային կոնցերսիումից Իրանին հեռացնելու, հակաիրանական կազմակերպություններին հովանավորելու, ուսումնական հաստատություններում պատմությունը խեղաթյուրված մատուցելու եւ այլ անվայել քայլերի համար: Իսկ կովկասագետ Ջալալ Մոհամադին քննադատել է Իրանի իշխանություններին՝ Ադրբեջանի թշնամական վերաբերմունքին համարժեք հակազդեցություն ցուցաբերելու, լռության մատնելու համար: Քաղաքագիտության դոկտոր Ջամշիդ Ռադը եւս Իրանի կառավարությանը խիստ քննադատել է Ադրբեջանի հանդեպ Թեհրանի որդեգրած մեղմ քաղաքականության ու «Ճեպիտի դիվանագիտության» համար՝ շեշտելով, որ Ադրբեջանի հետ փոխհարաբերություններում հաճախ անտեսվում են ազգային շահերը եւ անգամ անվտանգությունը:

Իրանցի քաղաքագետների արտահայտած տեսակետներն անհիմա չեն: Դրա վառ օրինակը Ադրբեջանի պատմության դասագրքերն են՝ տարրական դպրոցից մինչեւ համալսարանների ու ակադեմիական մակարդակ, որոնցում Իրանը ներկայացվում է իբրեւ «զավթի», Ադրբեջանի թշնամի, ինչպես հայն ու Չայաստանը:

Իրանը եղբայրական, բարեկամական երկիր է համարվում զուտ շահադիտական առումներով, դիվանագիտական բառապաշարում, ինչպես խոստովանել է Ալիեւը «Վիկիլիքսի» բացահայտումներում: Դրանցից մեկի համաձայն՝ 2010թ. փետրվարի 25-ին, Բաքվում

ԱՄՆ նախկին փոխպետքարտուղար Ուիլյամ Բրոնսի¹¹ (2008-2011թթ.) եւ Ալիեւի գաղտնի բանակցությունների ժամանակ Ալիեւը, ի պատասխան Իրանի եւ Նրա միջուկային ծրագրերի, ԱՄՆ-ի եւ ՄԱԿ-ի կիրառած սահմանափակումների շուրջ Բրոնսի բացատրություններին, շեշտել է. «Թեեւ արտաբուստ Թեհրան-Բաքու փոխհարաբերությունները բնականոն են, սակայն դրանց էությունը խիստ տարբերվում է երեւացող կողմից»: Ալիեւը նշել է, որ Բաքուն միանգամայն կողմնակից է Իրանի տնտեսական մեկուսացմանը՝ համոզմունք հայտնելով, որ եթե միջազգային հանրությունն Իրանի դեմ սահմանափակումների հարցում լրջորեն համագործակցի, դրանք արդյունավետ կլինեն: Միաժամանակ դժգոհել է Եներգետիկայի ոլորտում եվրոպական ընկերություններից, որոնք խախտել են սահմանափակումների կանոնները¹²:

Բայցեւայնպէս՝ Թեհրանն ու Բաքուն՝ մի կողմ թողնելով իրենց փոխհարաբերությունների բուն էությունը եւ փոխադարձ անվստահությունը, հայտարարում են, թե քանի որ Ադրբեջանը չի մասնակցել Արեւմուտքի կողմից Իրանի դեմ կիրառված պատժամիջոցներին, հետեւաբար դրանց վերացումից հետո Իրանի հետ տնտեսական փոխհարաբերություններ հաստատելու հարցում արտոնյալ դիրքում է: Եվ ահա կողմերի միջեւ տարբեր ոլորտներում ստորագրված բազում համաձայնագրերը, այդ թվում 11-ը ստորագրվել է Ալիեւի՝ փետրվարի 23-ին Թեհրան կատարած այցի ընթացքում: Իսկ օգոստոսի 7-8-ը Հասան Ռուհանին երկօրյա պաշտոնական այցով Բաքվում էր: Ըստ պաշտոնական տեղեկատվության, Ռուհանի-Ալիեւ հանդիպմանը քննարկվել են երկկողմ առեւտրատնտեսական կապերի ընդլայնմանը, մաքսային սակագների կրճատմանը, տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների,

բնապահպանության ու Եներգետիկայի ոլորտներում համագործակցությանն ու համատեղ ահաբեկչական պայքարին առնչվող հարցեր: Օգոստոսի 7-ին կողմերը փոխգործակցության 6 համաձայնագիր ու հուշագիր են ստորագրել, այդ թվում՝ Հյուսիս-հարավ երկաթգծի, կապի ու էլեկտրոնային անվտանգության եւ ստանդարտացման ոլորտներում, ինչի առիթով Ռուհանին հայտարարել է, թե Իրանի եւ Ադրբեջանի ժողովուրդներն ու կառավարությունները փոխհարաբերություններն ընդլայնելու գործում հաստատակամ են:

Թեհրանի դեմ կիրառված պատժամիջոցների վերացումից հետո երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական հարաբերությունները, մասնավորապես վերջին ամիսներին, ակնհայտորեն աշխուժացել են, եւ առաջին եռամսյակում աճը կազմել է 53 տոկոս: Մամուլի համատեղ ասուլիսի ընթացքում Ռուհանին նշել է, որ ջանքեր են գործադրվում Ադրբեջանում ավտոմեքենաների համատեղ արտադրություն գործարկելու ուղղությամբ, որը տարեկան 10 հազար ավտոմեքենա կտա Ադրբեջանի ներքին սպառման եւ արտահանության նպատակով: Բացի դրանից, Սոււմգայիթի քիմիական համալիրում կկառուցվի դեղորայքի արտադրության համատեղ գործարան, կիրականացվի 34 միլիոն դոլար արժողությամբ նախագիծ: Ադրբեջանը խիստ շահագրգիռ է Հյուսիս-հարավ երկաթգծի կառուցման հարցում եւ պատրաստակամություն է հայտնել ներդնելու երկաթգծի իրանական հատվածի կառուցման համար անհրաժեշտ մեկ միլիարդ դոլարի 50 տոկոսը:

Հատկանշական է, որ նախագահների մակարդակով այցերը պաշտոնապես դիվանագիտական եւ քաղաքական առումով խիստ կարեւոր են գնահատվում, մինչդեռ իրանցի փորձագետների կարծիքով՝ դրանք ավելի շուտ արարողակարգային, պաշտոնական բնույթ են

կրում եւ կողմերի միջեւ առկա խնդիրները քննարկման առարկա չեն դառնում, բացառություն չի կազմել նաեւ վերջին այցը¹³: Այսուհանդերձ՝ ակնհայտ աշխուժություն է նկատվում Թեիրան-Բաքու փոխհարաբերություններում ապրիլյան պատերազմից հետո, մասնավորապես բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցելությունների առումով:

Թեիրան-Բաքու փոխհարաբերությունների առնվազն ոչ բարեկամական բնույթի վերաբերյալ կարելի է ներկայացնել տասնյակ խոսուև փաստեր, սակայն կողմերը ջանք չեն խնայում դրանք բարեկամական, եղբայրական ներկայացնելու ուղղությամբ: Իսկ ինչո՞վ է դա պայմանավորված եւ ինչն է Իրանին ետ պահում Հայաստանի հետ ռազմավարական գործընկեր դառնալուց, երբ կան ընդհանուր շահեր եւ փոխվստահություն: Առաջին հերթին՝ Իրանում կրոնապետական վարչակարգի առկայությունը, որի շրջանակներում Թեիրանը ձգտում է իսլամական աշխարհում առաջնորդի դեր ստանձնել եւ հովանավորել իսլամական երկրներին ու նրանց շահերը: Այս համատեքստում առաջնահերթությունը տրվում է իսլամի շիա ուղղության դավանողներին, իսկ Ադրբեջանի բնակչության շուրջ 80 տոկոսը շիաներ են: Եվ քանի որ Իրանի արտաքին քաղաքականության հայեցակարգում դա խիստ կարեւոր հանգամանք է, հաճախ շահարկվում է, թե՛ Ադրբեջանի եւ թե՛ իսլամական տարբեր երկրների կողմից: ԼՂՀ-Ադրբեջան 90-ականների պատերազմի ընթացքում Ադրբեջանը եւ իսլամական որոշ երկրներ Իրանից պահանջում էին հոգուտ Ադրբեջանի ճնշում գործադրել Հայաստանի վրա: Ավելին՝ իսլամի սունի ուղղությունը դավանող մի քանի երկրներ՝ Պակիստանի իսլամական հանրապետությունը, Եմենը եւ վահաբական Սաուդյան Արաբիան Հայաստանի անկախությունն առաջօր չեն ճանաչել՝ մեր երկիրը համարելով իսլամական տարածքների զավթիչ: Սաուդյան Արաբիան Ադրբեջանի անկախացումից ի վեր այդ երկրին նյութական աջակցություն ցուցաբերելուն զուգահեռ՝ վահաբականություն է քարոզում, ինչը, բնականաբար, ընդդեմ Իրանի է: Բացի դրանից, Իրանում թերեւս կրկնակից ավելի մեծ է թուրքերենի ադրբեջանական բարբառով խոսողների թիվը, որոնք ոչ միայն Ադրբեջանի եւ Թուրքիայի համաթուրանական քարոզչության հուժկու ալիքի գլխավոր թիրախն են, ինչն ապարդյուն չի անցնում, այլեւ հոգուտ Ադրբեջանի լրբբիստական գործունեություն են ծավալում: Իրանը չի կարող անտեսել նաեւ իր երկրի հասցեին Բաքվի հնչեցրած մեղադրանքները՝ Հայաստանին ցուցաբերած, հաճախ մտացածին, օգնության համար: Ուստի Թեիրանն իր հայաստանյան քաղաքականության հարցում նկատի է առնում նաեւ հիշյալ գործոնները: Արդյունքում Իրանը երբեմն հարկադրված անտեսում է Հայաստանի հետ ունեցած ընդհանուր շահերը, հանուն իր գերակա շահերի: Նշյալ եւ բազում այլ շահեր ու հանգամանքներ պատնեշում են Հայաստան-Իրան դաշնությանն ու լիարժեք համագործակցությանը: Այդ թվում՝ հայ-ռուսական սերտ փոխհարաբերությունները, որոնք խանգարում են Հայաստանի արտաքին փոխհարաբերություններում անկախ քաղաքականություն որդեգրելուն: Ավելին՝ Բաքվում Իրանի նախկին դեսպան Աֆշար Սոլեյմանիի կարծիքով՝ Մոսկվան ձգտում է Իրանին հեռու պահել դարաբաղյան հիմնահարցից՝ նշելով, որ հրադադարի վերաբերյալ 1992թ. թեիրանյան բանակցությունները տապալվեցին Ռուսաստանի մեղքով, քանի որ դրանում դերակատար չէր¹⁴:

Իրանի հանդեպ Ադրբեջանի երեսպաշտական քաղաքականությունն ու

մտահոգությունը պայմանավորված են երկու երկրների՝ նույն կրոնի դավանությամբ, ավելի հստակ՝ շիակա-նության կարեւոր ինստիտուտներից «Մարջա-ե թաղլիդի»¹⁵ առկայությամբ: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր շիա մուսուլման՝ չափահաս դառնալով, իգական սեռը 9 տարեկան, արականը՝ 15, պարտավոր է ընտրել իր առաջնորդին, ում հրահանգներին ու խորհուրդներին պետք է ենթարկվի անվերապահորեն՝ կրոնական պարտականությունները կատարելիս, եւ կյանքի կոչի նրա հրապարակած բոլոր «Ֆաթվաները» (կրոնական վճիռ): «Մարջան» (աղբյուր) պետք է օժտված լինի 8 կարեւոր հատկանիշներով՝ հասուն տղամարդ, շիա, արդարամիտ, «մոջթահեդ»¹⁶, կենդանի, օրինաժին եւ գրած լինի կրոնական ատենախոսություն: Այս ինստիտուտը սահմաններ չի ճանաչում եւ վերազգային է: Յետեւաբար՝ ադրբեջանցիներից շատերի համար կարող են «մարջա» լինել իրանցի «մոջթահեդները», որոնք, բացառված չէ, որ բողոքի ցույցերը, անհնազանդությունը անհրաժեշտ համարեն ընդդեմ իշխանությունների: Ավելին՝ այժմ յուրաքանչյուր տարի հարյուր հազարավոր ադրբեջանցիներ ուխտագնացության են մեկնում Իրանում գտնվող շիաների 3 կարեւոր սրբավայրեր, ինչը նպաստում է Իրանի հոգեւոր կենտրոնների հետ հավատացյալների կապի ամրապնդմանը: Բացի դրանից, ոչ թե տարեցտարի, այլ օրեցօր աճում է իրանցի հոգեւորականների «Մարջա» ընդունող ադրբեջանցիների թիվը, որոնք իրենց կյանքն ու կենցաղը ավելի շատ համաձայնեցնում են կրոնական կանոնակարգով եւ ոչ թե վարչակարգի աշխարհիկ օրենքներով¹⁷: Յոջաթի կարծիքով՝ սա ճշմարտություն է, որը, անկախ ադրբեջանական ՉԼՄ-ների ու պաշտոնական մեկնություններից, Բաքուն չի կարող անտեսել: Այլ խոսքով՝ հենց սրանով են պայմանավորված իսլամական կազմա-

կերպությունների հետ Բաքվի իշխանությունների համագործակցությունը եւ Իրան-Ադրբեջան փոխհարաբերությունները «բարեկամական» ներկայացնելու հանգամանքը: Միաժամանակ Ադրբեջանը՝ մտահոգվելով Իրանի հոգեւորականության ազդեցությունից եւ այդ երկրում դրա լուրջ տարածումից, խիստ վերահսկողության տակ է պահում թե՛ հոգեւորականներին եւ թե՛ կրոնական կառույցները, երբեմս էլ լինում են ձերբակալություններ: Թեհրանը կարեւորում է շիաների միասնությունը¹⁸, որով կարող է զինաթափել համաթուրանական գաղափարախոսությունը՝ հաշվի առնելով, որ Թուրքիան սունի է, ինչի նշանակությունն Անկարան ձգտում է անկարեւոր ներկայացնել՝ շեշետը դնելով ոչ թե ուղղությունների, այլեւ իսլամի վրա:

Նշվածից գատ՝ Ադրբեջանում կան նաեւ իրանական ծագումով ազգություններ՝ թալիշներ եւ թաթեր, որոնց եղբայրներն Իրանում որեւէ խտրականության չեն ենթարկվում եւ կարող են Իրանին միանալու ձգտումներ բորբոքել նրանց շրջանում:

Իրան-Ադրբեջան հարաբերությունների փոխադարձ անվստահության իրադրությունում անդրադառնալով ԼՂՀ հիմնախնդրի վերաբերյալ պաշտոնական Թեհրանի դիրքորոշմանը, այն կարելի է գնահատել որպես հավասարակշիռ, ինչը թերեւս պայմանավորված է նրանով, որ 90-ականների պատերազմում Իրանը երկու կողմին էլ օգնել է: Սակայն Ադրբեջանին ցուցաբերած աջակցությունն անհամեմատ մեծ է եղել: Դրանից գատ՝ նման դիրքորոշումը պետք է դիտել դաբադյան խնդրի առնչությամբ իսլամական աշխարհի դիրքորոշումների համատեքստում, որոնք ընդհանուր առմամբ ադրբեջանամետ են, երբեմս՝ ակն-

հայտ հակահայ: Իրանը սահամանակից է թե՛ Հայաստանին, թե՛ ԼՂՀ-ին եւ թե՛ Ադրբեջանին ու Նախիջեւանի ինքնավար հանրապետությանը, ինչպես նաեւ Թուրքիային: Այլ կերպ ասած՝ ԼՂՀ-ի խնդրի հետ անմիջական կապ ունեցող բոլոր կողմերի հետ: Ուստի հենց միայն այս հանգամանքով պայմանավորված՝ ակնհայտ է, որ Իրանն առավելապես շահագրգիռ է Արցախյան հիմնահարցի խաղաղ կարգավորմամբ եւ հրադադարով, քանի որ պատերազմի բռնկումն այդ երկրի համար վտանգավոր է տարբեր առումներով:

Ահա թե՛ ինչու հարցի խաղաղ կարգավորման առնչությամբ Իրանը բազմիցս միջնորդության առաջարկ է արել կողմերին, սակայն՝ կախված հանգամանքներից, մերժվել է մերթ՝ մեկի, մերթ՝ մյուսի կողմից: Իսկ առհասարակ՝ հաշվի առնելով Իրանի պաշտոնական դիրքորոշումը, միջնորդությունը ԼՂՀ-ի համար շահեկան չի լինի: Մինչդեռ Իրանի ազգային անվտանգության շահերից է բխում ոչ միայն ԼՂՀ-ի հետ նրա ներկա սահմանների պահպանումը, այլև դրանց էլ ավելի ընդլայնումը: Նման իրավիճակի դեպքում Իրանը՝ վերոհիշյալ հանգամանքներից ելնելով, անշուշտ արտաբուստ կդատապարտեր ԼՂՀ-ին, միգուցե նաեւ զավթիչ անվաներ, սակայն դա հավասարազոր կլիներ Ադրբեջանին բարեկամական, եղբայրական երկիր անվանելուն:

Թերեւս այդ հանգամանքով պետք է բացատրել, որ Բաթուն երբեմն թերահավատությամբ է վերաբերվում Իրանի պաշտոնական դիրքորոշմանը եւ պահանջում ավելին, չնայած այդ դիրքորոշումն անշուշտ ձեռնտու է Ադրբեջանին: Ուստի առիթը բաց չի թողնում Իրանին հարկադրել պարբերաբար եւ տարբեր մակարդակի հանդիպումներում կրկնել դա: Ահավասիկ, օգոստոսի 7-ին Բաքվում Ռուհանի-Ալիեւ համատեղ ասուլիսին վերջինս հայտնել է, որ Իրանի նա-

խագահին է ներկայացրել Ղարաբաղի հարցի շուրջ վերջին զարգացումները, ապա հավելել, թե խնդրի լուծումը շատ պարզ է՝ Հայաստանը պետք է զորքերը դուրս բերի «գրավյալ» տարածքներից՝ ըստ միջազգային համաձայնությունների: Ի պատասխան՝ Ռուհանին անթույլատրելի է համարել տարածաշրջանում սահմանների փոփոխությունը՝ հույս հայտնելով, թե հարցը կկարգավորվի բանակցային ուղով՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակում:

* * *

100 տարի առաջ արհեստականորեն ստեղծվել է Ադրբեջան հանրապետությունն ընդդեմ Իրանի տարածքային ամբողջականության եւ իր առաքելությունը կատարելու ուղղությամբ որեւէ առիթ բաց չի թողնում: Այդ մասին են վկայում պատմական փաստերը, ինչպես տեղի ունեցավ Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ Ադրբեջանի ԽՍՀ կոմկուսի առաջին քարտուղար Միրջաֆար Բադիրովը ջանքեր գործադրեց ԽՍՀՄ կազմում «Մեծ Ադրբեջան» ստեղծելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է ԽՍՀՄ փլուզումից հետո Իրան-Ադրբեջան փոխհարաբերություններին, ապա դրանք ի սկզբանե եւ առայսօր խարսխված են փոխադարձ անվստահության վրա, ուստի ընթացել եւ ընթանում են սուր ելելեչներով: Ադրբեջանը մտավախություն ունի այդ երկրում իրանցի հոգեւորականների ազդեցության բերումով իսլամական հեղափոխությունից, իսկ Իրանը Բաքվի համաթուրանական նկրտումներից ու Իրանում անջատողական տրամադրություններ բորբոքելուց: Այսուհանդերձ՝ Բաթուն ջանք չի խնայում տարբեր բնագավառներում ընդլայնելու Իրանի հետ փոխառնչությունները, ինչը թերեւս հաջողվում է: Ավելին՝ կողմերի տեսանկ-

յունից փոխհարաբերությունները եղբայրական են, ինչի համար հիմքեր եւս կան, հաշվի առնելով կրոնամշակութային ընդհանրությունները, ինչպեսեւ ծովով ու ցամաքով սահմանակից լինելը: Բացի դրանից, Իրանում թուրքերենի ադրբեջանական բարբառով խոսողները լրբբիստական գործունեություն են ծավալում հոգուտ Բաքվի: Մյուս կողմից՝ Ադրբեջանը մտահոգվելով Իրանի հոգեւորականության ազդեցությունից եւ այդ երկրում վերջինիս լուրջ ազդեցության տարածումից, խիստ վերահսկողության տակ է պահում թե՛ հոգեւորականներին եւ թե՛ կրոնական կառույցները: Այլ կերպ ասած՝ «եղբայրական հարաբերությունների» փոխադարձ անվստահության մթնոլորտ է: Բացի դրանից, լուրջ տարածայնություններ կան Կասպից ծովի կարգավիճակի եւ այնտեղ գտնվող էներգակիրներով հարուստ «Ալբորզ» կոչվող հատվածի պատկանելության վերաբերյալ, որը պետք է լուծվի կարգավիճակի համար մերձկասպյան երկրների մասնակցությամբ: Թեեւ գործնական եւ դիվանագիտական առումներով Թեհրանի քաղաքականությունն ադրբեջանամետ է, այսուհանդերձ, Բաքուն Թեհրանին մեղադրում է Երեւանի հետ բարեկամական փոխհարաբերություններ ունենալու համար: Մյուս կողմից՝ Չայաստանի հետ ռազմավարական շահեր ունեցող Իրանը, բազմաթիվ եւ լուրջ հանգամանքների բերումով, չի կարող լիարժեք համագործակցել, սակայն շահագրգիռ լինելով Չայաստանի եւ ԼՂՀ-ի հզորացմամբ ու կայունությամբ, չի անտեսում նաեւ վերջիններիս շահերը, ձգտում է աջակցել՝ որքան հնարավոր է, որքանով թույլ կտան պայմաններն ու հանգամանքները: Ուստի Չայաստանն էլ իր հերթին պետք է արդյունավետորեն օգտագործի ստեղծված պատեհությունը՝ սերտացնելու Իրանի հետ կապերը:

ՅՈՒՄՆԵՐ

- 1 Նասեր Սադաֆի Ամիրի, հետառապատերազմյան ռազմավարությունը եւ աշխարհաբաղաբական զարգացումները, Թեհրան, 2004թ., էջ 116:
- 2 Mahmud Deqan Tazjani, The Iranian Foreign Relations With its Neighbors During the Second Decade of Islamic Revolution, Tehran, 2000, p. 38.
- 3 www.geocities.com/aryannews/aran.htm, «Քահբեջան» ամսագիր, դոկտ. Ռեզա, Ադրբեջանն Արանն է, հոկտեմբեր, 1997թ., 53-րդ համար:
- 4 В. В. Бартольд, сочинения, том 2, часть 1, Москва, 1963, с. 703
- 5 World Rights Reserved, MB Medien and Bucher Verlagsgesellschaft mb H, Bonn, march, 1993. p. 93.
- 6 Ամիրահամադյան Բ., Իրան-Ադրբեջան փոխհարաբերությունները, Թեհրան, 2005թ., էջ 180
- 7 World Rights Reserved... էջ 93:
- 8 Խոսքը Իրանի Ադրբեջանում Բաղիրովի ու Կարմիր բանակի ջանքերով ստեղծված «Չանրապետության» մասին է:
- 9 www.yurd.net, 15 դեկտեմբերի 2011թ.:
- 10 www.arannews.com, 23 փետրվարի 2016թ.:
- 11 William Joseph Burns.
- 12 Բորհան Յոջաթի, «Իրան-Ադրբեջան փոխհարաբերությունները պաշտոնական եւ ժողովրդական մակարդակներում», www.arannews.com, 6 մարտի 2016թ.:
- 13 Նույն տեղում:
- 14 www.wd.de, 5 ապրիլի 2016թ.:
- 15 Շարքային շիան դիմում է իր համար կրոնագետ հոգեւոր առաջնորդին:
- 16 Բարձրաստիճան հոգեւորական, որը բնականաբար պետք է ատենախոսություն պաշտպանած լինի կրոնական հարցով:

- 17 Բորհան Յոջաթի, «Իրան-Ադրբեջան փոխհարաբերությունները պաշտոնական եւ ժողովրդական մակարդակներում», www.arannews.com, 6 մարտի 2016թ.:
- 18 Իրանում կան տեսակետներ, համաձայն որոնց՝ Արաբսի հյուսիսային տարածքներն իրանական են, որոնք բաժանվել են Գյուլիստանի եւ Թուրքմենչայի պայմանագրերով, եւ պետք է դրանք վերադարձնել:

Эмма Бегиджянян

Взаимоотношения Иран–Азербайджан и арцахская проблема

Создание в 1918 году усилиями Османской империи на мусульманонаселенных территориях Южного Кавказа одноименного государства в соответствии с названием штатов Иранского Азербайджана было направлено против территориальной целостности этого государства и продолжает оставаться таким в настоящее время. Став независимым в 1991 году, Азербайджан установил взаимоотношения с Ираном, которые протекают с серьезными подъемами и спадами в условиях взаимного недоверия. Азербайджан опасается религиозного влияния Ирана и исламской революции, а Иран – к протурецкому стремлению Азербайджана. Однако экономические взаимоотношения расширяются, в частности, в течение последнего года. С другой стороны, несмотря на то, что охрана нынешних границ НКР исходит из интересов национальной безопасности Ирана, однако при приоритетных для этой страны других интересах, Тегеран стремится не игнорировать армянские интересы. При этом официальная позиция про-азербайджанская.

Emma Begjanyan

Iran-Azerbaijan Relations and the Artsakh Issue

Creation of a Caucasian state named after the Iranian province Azerbaijan in the Muslim-populated territories of South Caucasus in 1918, by the efforts of the Ottoman Empire, was directed against the territorial integrity of that state [Iran] and continues to be so today. After becoming independent in 1991, Azerbaijan has established relations with Iran, but with serious ups and downs and in conditions of mutual distrust. Azerbaijan is concerned about religious influence of Iran and the Islamic Revolution, and Iran is worried about pro-Turan aspirations of Azerbaijan. However, their economic relations are expanding, particularly over the last year. On the other hand, although the maintenance of MKR current borders is in the interests of national security of Iran, but Tehran's official position is pro-Azerbaijani due to the priority of its other interests, at the same time seeking not to ignore Armenian interests.

Եկեղեցու եւ պետության համագործակցության քաղաքականության վերանայման անհրաժեշտությունը



ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի նախագահ

Նախաբան

Խորհրդային շրջանում կրոնը դուրս էր մղված հանրային կյանքից, սակայն խորհրդային հանրապետություններում ավանդական կրոնական կազմակերպությունները խորհրդանշում էին ազգային ավանդույթներն ու մինչխորհրդային անցյալը, որի պատճառով ազգայնական շրջանակներն ի դեմս ավանդական կրոնական կառույցների, տեսնում էին իշխանությունների կողմից հալածվող ազգային ինստիտուտներ, որոնք չէին տեղավորվում Խորհրդային միության պաշտոնական գաղափարախոսության շրջանակներում (ինտերնացիոնալիզմ եւ արթիզմ): Հավատքը երբեմն ընկալվում էր դիսիդենտական շարժման ձեւերից մեկը եւ խորհրդային կարգերին ընդդիմության ձեւ:

Անկախ հանրապետության հռչակումից հետո եկեղեցու եւ ազգային խորհրդանիշի վերածված Վազգեն Ա կաթողիկոսի վարկանիշը չափազանց բարձր էր: Շատ էին նաեւ սպասելիքները, սակայն եկեղեցին լուրջ մարտահրավերի առջեւ

էր հայտնվել՝ ազգային խորհրդանիշից վերածվելով գործուն հանրային կառույցի եւ գտնել իր դերակատարությունը պետական ու հանրային կյանքում արդեն նոր իրավիճակում:

1991-ից ի վեր Հայաստանյայց առաքելական եկեղեցին նպատակասլաց կերպով ընդլայնում էր իր ներկայությունը հանրային եւ պետական կյանքում, սակայն անկախության հռչակումից երկու տասնամյակ անց նրա տեղի ու դերի խնդիրը դարձել է բուռն քննարկման թեմա: Եթե մինչ այդ ոչ ոք կասկածի տակ չէր դնում եկեղեցու ոչ միայն պատմական, այլեւ հայ ժողովրդի ինքնության հարցում ունեցած բացառիկ դերակատարումը, ապա այսօր եկեղեցուց հանրային սպասելիքները չեն արդարանում: Դրա հետեւանալով հասարակության ու եկեղեցու միջեւ առաջացել է ճեղքվածք, որն արտահայտվում է ՉԼՍ-ներում եկեղեցուն եւ նրա սպասավորներին ուղղված երբեմն ծայրահեղ քննադատություններով ու կոպտագույն որակումներով:

Կարծում ենք՝ պատճառն այն է, որ եկեղեցին չունի «եկեղեցի-պետություն» եւ «եկեղեցի-հասարակություն» հարաբերությունների վերաբերյալ որեւէ հայեցակարգային մոտեցում, որը համահունչ լինի արդի իրավիճակին:

Հողվածում համառոտակի վերլուծվում են եկեղեցու դերի ավանդական կարծրատիպերի ու իրականության հակասությունները, այս հարցում սահմանադրական դրույթների բովանդակությունը եւ քրիստոնեական քաղաքակրթությանը պատկանող երկրներում եկեղեցի-պետություն հարաբերությունների փոխակերպումները: Հողվածի նպատակն է՝ հասկանալ այն մարտահ-

րավերները, որոնք ծառայել են Հայ եկեղեցու առջև եւ որոնց, մեր կարծիքով, պարտավոր է արձագանքել եկեղեցին:

«Ազգային եկեղեցի» հասկացության ձեւավորման պատմական ուղին եւ ներկայիս պետական քաղաքականությունը

Արժարժված հարցերի պատասխանը գտնելու եւ եկեղեցու ներկայացուցիչների հռետորաբանության ենթատեքստը ընկալելու համար անհրաժեշտ է կարճառոտ պատմական ակնարկ կատարել՝ հասկանալու համար այսօրվա Հայ եկեղեցու դավանած արժեքային համակարգը, որը դասավանդվում է ուսումնական հաստատություններում եւ քարոզվում անգամ ուժային կառույցներում՝ որպես անհերքելի ու միակ ճշմարտություն: Մենք չենք դիտարկի խորն անցյալը, այլ կփորձենք հակիրճ կերպով արտացոլել վերջին հարյուրամյակների իրողությունները:

Հայերեն լեզվում «ազգ» եւ «էթնոս» հասկացությունների խառնաշփոթ կա, որն ունի որոշակի պատճառներ: Հայերը՝ կորցնելով պետականությունը, հարյուրավոր տարիներ կրոնական համայնքի կարգավիճակով գտնվում էին իսլամական տիրապետության տակ՝ հիմնականում Օսմանյան Թուրքիայում եւ Պարսկաստանում: Իսլամի ավանդական պետաիրավական պատկերացումներում կրոնական համայնքները՝ միլիթները կամ ումմաները, էթնիկ միավորների դեր էին կատարում, այսինքն՝ էթնիկ եւ կրոնական պատկանելությունը նույնականացվում էր: Հայերը պաշտոնապես համարվում էին «հայ քրիստոնյաներ», այլ ոչ թե պարզապես հայեր: Դեռեւս Կոստանդնուպոլսը նվաճած սուլթան Մեհմեդ Ֆաթիհը սկսեց պետական բարեփոխումներ իրականացնել, որի իմաստը կրոնական համայնքների վրա հիմնված կորպորատիվ պետության կառուցումն էր¹:

Այդ համայնքներից յուրաքանչյուրը պետության կողմից ճանաչվում էր որպես լայն իրավունքներով օժտված իրավական կառույց:

Օսմանյան Թուրքիայում հայերը կրոնական պատկանելությունը փոխելու դեպքում ստիպված էին մեկ միլիթից անցում կատարել այլ միլիթի, ինչն ընկալվում էր որպես «ազգային դավանանություն»: Հայկական պատմական խրոնիկայում կան բազմաթիվ հաղորդումներ, երբ քաղկեդոնական² հայերին ոչ քաղկեդոնական հայերը պարզապես անվանում էին հույներ կամ վրացիներ: Իսլամ ընդունած հայերը դադարում էին հայ համարվելուց, իսկ կաթոլիկ եւ բողոքական հայերը չափազանց բարդ փոխհարաբերությունների մեջ էին գտնվում «հայ քրիստոնյաների» հետ: Ահա այս համատեքստում են ձեւավորվել «հայ քրիստոնյա» եւ «ազգային եկեղեցի» հասկացությունները:

Կարելոր հասկացություն էր նաեւ «գոյապահպանությունը»³: Դեռեւս խորը միջնադարում Հայ եկեղեցին «հայ քրիստոնյաների» հանրային կյանքի հիմնական իմաստը տեսնում էր «ազգի» գոյության պահպանման կամ, ավելի պարզ ասած, վերարտադրության մեջ, որում զարգացման որեւէ նպատակ դրված չէր, ինչն ուներ օբյեկտիվ պատճառներ: Պետականությունից զուրկ համայնքը չէր կարող ինքնուրույն քաղաքականություն վարել: «Ազգ» եւ «էթնոս» եզրերի դեռեւս գոյություն ունեցող նույնականացումը այսօր իր բացասական ազդեցությունն է թողնում քաղաքացիական արժեքների ձեւավորման վրա: Հայաստանյայց առաքելական եկեղեցին այդ պատկերացումներն այսօրվա Հայաստանում փորձում է վերակենդանացնել, ինչը հակասության մեջ է հայտնվում գործող Սահմանադրության եւ իրավական համակարգի հետ: Իշխանությունների կողմից վարվող քաղաքականությունն իր հերթին նպաստում

Է դրան: Սահմանադրության մեջ եւ իրավական այլ փաստաթղթերում պետության ու քաղաքացիական հասարակության հոմանիշը հանդիսացող «ազգ» եզրը հանրային կյանքում, պետական պաշտոնյաների շուրթերին եւ դպրոցական դասագրքերում օգտագործվում է որպես «Էթնոսի» հոմանիշ՝ մարդկանց մտքերում առաջացնելով իրավական պատկերացումների խառնաշփոթ:

Այսպիսով՝ այսօրվա եկեղեցու հիմնական քարոզչական թեզերն են (եթե հետեւենք եկեղեցու սպասավորների հրապարակային ելույթներին եւ դպրոցական դասագրքերի բովանդակությանը).

- **հայերը քրիստոնեությունը պետականորեն ընդունած՝ աշխարհի առաջին ազգն են,**
- **եկեղեցու նպատակն է՝ զբաղվել «հայապահպանությամբ»,**
- **ազգի հիմնական առաքելությունը գոյապահպանությունն է,**
- **Յայ եկեղեցին ազգային եկեղեցի է,**
- **նա, ով հայ առաքելական չէ, հայ չէ,**
- **պետությունն ու ազգը պարտք են եկեղեցուն, եւ այդ պարտքը պետք է վերադարձվի:**

Մյուս բնորոշ թեզը լայնորեն գովազդվում է հեռուստատեսությամբ ու գովազդային վահանակներում. «**Մեկ ազգ, մեկ մշակույթ, մեկ եկեղեցի**»:

Կրոնական թեմաներին նվիրված մամուլ մշտադիտարկումների վերլուծությունները⁴ եւ հանրակրթական դպրոցներում դասավանդվող դասագրքերի վերլուծությունները⁵ ցույց են տալիս, որ եկեղեցու դերը ներկայիս Հայաստանում քարոզվում է ճիշտ այնպես, ինչպիսին այն եղել է Օսմանյան Թուրքիայում:

2014-ին Մայր Աթոռի թանգարանների եւ գրապահոցների տնօրեն Ասողիկ քահանա Կարապետյանը հայտարարեց, որ աթեիստ հայը լիարժեք հայ չի կարող

լինել⁶: Խորհրդային աթեիզմի պայմաններում դաստիարակված հասարակության համար նման հարցադրումն անհասկանալի էր, եւ շատերը կարծում էին, որ թյուրիմացություն է տեղի ունեցել: Սակայն մյուս եկեղեցականների կողմից⁷ այս տեսակետի վերահաստատումը ցույց տվեց, որ դա եկեղեցու հստակ դիրքորոշումն է: Հետաքրքրական է Շիրակի թեմի առաջնորդ Արքեպիսկոպոս Աջապահյանի բացատրությունը. «Հայ Առաքելական եկեղեցին հայ ժողովրդի միասնության շաղախն է: Այն եկեղեցիները, որոնք այս իմաստով Էթնիկ ուղղվածություն չունեն, նրանք համար հասկանալի չէ մեր պահվածքը»⁸:

Հայ եկեղեցու եւ պետության սերտաճումը ձեռք է բերել համակարգային բնույթ: 2008թ. սեպտեմբերի 28-ին եկեղեցական մի արարողության ժամանակ Սերժ Սարգսյանն արել է հետեւյալ հայտարարությունը. «Հարյուրամյակներ շարունակ չունենալով պետականություն, եկեղեցին առաջնորդել է մեր ժողովրդին մինչեւ 21-րդ դար: Հայոց պետականության յուրաքանչյուր պետական ծառայող պետք է իր պարտքը վերադարձնի եկեղեցուն, որպեսզի մեր եկեղեցին ավելի հզորանա եւ մեր հավատը մեզ առաջնորդի դեպի ավելի լավ ապագա»⁹:

Դասագրքերի միջոցով աշակերտներին ներշնչվում է Հայ եկեղեցու եւ հայ ազգի նույնականացման թեզը. «Զայլենք մեր նվիրական իղծերի իրականացման վճռականությամբ՝ որպես մեկ եկեղեցի, մեկ պետություն եւ ազգ»¹⁰: «Հայոց եկեղեցին, փաստորեն, դավանանքը դարձրեց ազգային հոգեւոր նկարագրի կարեւորագույն հատկանիշներից մեկը»¹¹:

Գիտության եւ կրթության նախկին նախարար Արմեն Աշոտյանն այսպես է տեսնում եկեղեցու դերը դպրոցներում. «Դպրոցը նաեւ դաստիարակության վայր է, դպրոցը հայի ինքնության պահպանման, վերարտադրման, հայոց պե-

տության քաղաքացի կերտելու վայր է: Եվ այստեղ իմ ապավինել, եթե ոչ Մայր Աթոռի, մեր սուրբ եկեղեցու աջակցությանը: Եկեղեցու հետ համագործակցությունը թույլ է տալիս մեզ, մեր երեխաներին՝ ներմուծել բարոյականություն, բարոյագիտություն եւ արժեքներ, թույլ է տալիս մեր աշակերտներին կոփել որպես հայեր եւ թույլ է տալիս առաջին անգամ իրենց համար բախել հոգեւոր իմաստության դռները»¹²:

2014-ի մարտի 3-ին Հայաստանի ԳԱԱ որոշմամբ պատվավոր դոկտորների կոչում է շնորհվել հայ եկեղեցու երեք եպիսկոպոսների: Ակադեմիայի նախագահն այսպես է բացատրել այդ որոշումը. «Սա առաջին դեպքը չէ. ակադեմիան մշտապես ուշադրություն է դարձնում հոգեւորականների հայագիտական եւ պատմական գործունեությանը», ինչպես նաեւ «հայ ժողովուրդը դարեր շարունակ պետականություն չի ունեցել եւ ապավինել է եկեղեցուն, որտեղ կրթվել են հայոց հոգին եւ միտքը»¹³: Հայտնի են դեպքեր, երբ գիտական թեզերը գրախոսության համար ուղարկվում են եկեղեցու «Քրիստոնեական դաստիարակության» կենտրոնին¹⁴:

Այդ միտումներն ավելի ակնհայտ են դառնում 2010թ. փետրվարին Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ընդունած չափորոշիչներից, որոնցով պետք է առաջնորդվեն Հայաստանի տարածքում գրանցված ռադիո- եւ հեռուստատեսային ընկերությունները: Փաստաթղթում մանավորապես սահմանվում է, որ անչափահասների առողջության, մտավոր ու ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն հաղորդումները, որոնք «նսեմացնում եւ վարկաբեկում են ազգային եկեղեցուն ու նրա քարոզած արժեքները»¹⁵: Նման հաղորդումներն, ըստ այդ փաստաթղթի, արգելվում են: Մյուս կրոնական

կազմակերպությունների նսեմացման արգելքի կետ այդ փաստաթղթում չկա:

Հայ եկեղեցին ձգտում է իր ազդեցությունը տարածել այն ոլորտներում, որտեղ ձեւավորվում է հանրային կարծիքը՝ դպրոցներ, գիտություն, լրատվամիջոցներ: Սակայն չի զլանում ազդեցություն ձեռք բերել նաեւ ուժային կառույցներում: 1997-ից Հայաստանի զինված ուժերում գործում է զինվորական կապելանի ինստիտուտը: 2014-ին «Քայքայիչ պաշտամունքները եւ փողոցային արատավոր բարքերը որպես պաշտպանունակության սպառնալիք» թեմայով ՀՀ պաշտպանության նախարարությունում մեկնարկած գիտագործնական խորհրդաժողովի ժամանակ պաշտպանության նախարարն ասել է. «Աղանդները բացասաբար կարող են ազդել զինուժի վրա: Չեմ ուզում մտածել այդ մասին, բայց սարսափելի է պատկերացնել, թե ինչ կարող է կատարվել մարտական դիրքում, եթե այնտեղ կանգնած զինվորի հավատամքն այլ լինի»¹⁶: Պաշտպանության նախարարությունը «Քայքայիչ պաշտամունքների եւ փողոցային արատավոր բարքերի դեմ» ծրագրի շրջանակում մշակել է ճանապարհային քարտեզ, ըստ որի սպաները եւ հոգեւորականները դպրոցներում միասին պայքարելու են «քայքայիչ աղանդների» դեմ եւ նույնիսկ դպրոցականներին բաժանելու են ավետարաններ: 2014-ի հունիսին ՀՀ Ոստիկանության Երեխաների իրավունքների պաշտպանության վարչության պետը հայտարարել է, որ աղանդների դեմ պայքարի շրջանակում ոստիկանները Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչների հետ համատեղ դաստիարակչական աշխատանքներ են տարել դպրոցներում «աղանդավոր» երեխաների հետ, այդ թվում «այդ պայքարին» ներգրավել նրանց ընկերներին¹⁷:

Իրավական դաշտի փոխակերպում-ները

Եկեղեցի-պետություն հարաբերությունների պետական քաղաքականությանը նվիրված որեւէ հայեցակարգ գոյություն չունի, սակայն որոշակի կռահումներ մենք կարող ենք անել՝ վերլուծելով սահմանադրական դրույթները:

2005թ. Սահմանադրության մեջ ասվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում: Ուշագրավն այն է, որ այս ձեւակերպումը գրեթե նույնությամբ կրկնվում է Վրաստանի սահմանադրության մեջ, սակայն մեկ էական տարբերությամբ. Վրաստանի դեպքում շեշտվում է Վրաց եկեղեցու բացառիկ դերակատարությունը Վրաստանի պետության մեջ, մեր դեպքում՝ հայ ժողովրդի կյանքում եւ «ինքնության պահպանման գործում»: Այսինքն՝ առկա են երկու հայեցակարգային տարբերություններ՝ մեկի դեպքում եկեղեցին պետականաստեղծ կառույց է դիտարկվում, մյուսում՝ ազգային, կամ ավելի հստակ ձեւակերպման դեպքում՝ Էթնիկ ինքնության վերարտադրության գործոն: Վրացական իրականության մեջ եկեղեցու միջոցով ասիմիլյացվում են մյուս ժողովուրդները, իսկ մեր դեպքում՝ առանձնանում ենք մյուս ժողովուրդներից:

2015-ին ուժի մեջ մտած նոր Սահմանադրության 17-րդ հոդվածում նշվում է, որ երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների ազատությունը, ինչպես նաեւ ասվում է, որ կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից: Հայաստանի՝ աշխարհիկ պետություն լինելու մասին որեւէ հիշատակում չկա: Հաջորդող՝ 18-րդ հոդվա-

ծով 33-ը ճանաչում է Հայ առաքելական եկեղեցու բացառիկ առաքելությունը.

«Հոդված 17. Պետությունը եւ կրոնական կազմակերպությունները

1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:

2. Հայաստանի Հանրապետությունում կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից:

Հոդված 18. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին

1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում:

2. Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել հատուկ համաձայնագրով:

17-րդ հոդվածում, ի տարբերություն Նախորդ Սահմանադրության համապատասխան հոդվածի, «Պետությունը անջատ է եկեղեցուց» ձեւակերպումը փոխարինված է «կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից» դրույթով: Հիմքեր կան ենթադրելու, որ փորձ է արվում օրենսդրորեն տարանջատել «կրոնական կազմակերպություն» իրավական կարգավիճակը Հայ եկեղեցու իրավական կարգավիճակից եւ, կարծես թե, պատահական չէ, որ Սահմանադրության նախագծում Հայ եկեղեցուն առանձին հոդված է նվիրված (Հոդված 18), որտեղ խոսվում է Հայ առաքելական եկեղեցու «բացառիկ» դերակատարության մասին: Այ-

սինքն՝ փորձ է արվում տարանջատել «կրոնական կազմակերպություն» եւ «Հայաստանյայց առաքելական եկեղեցի» հասկացությունները, դրանք, ըստ էության, դառնում են տարբեր իրավական կատեգորիաներ:

Փաստորեն Սահմանադրության մեջ կան նախադրյալներ, որոնք վկայում են, որ օրենսդրական հետագա փոփոխությունների օգնությամբ Հայաստանը կարող է վերածվել ոչ աշխարհիկ երկրի, ինչի հիմքերն առկա են մի շարք օրենքներում:

Վատիկանի II ժողովի որոշումները

Ուղղափառ եկեղեցիները՝ մասնատված լինելով ըստ ազգային պատկանելության, այդպես էլ չկարողացան միասնական քաղաքականություն վարել կամ գոնե առանձին-առանձին գնալ արմատական բարեփոխումների: Ուղղափառ եկեղեցիները չեն կարողանում աստվածաբանական հիմնավորում գտնել Մարդի իրավունքների հարցում, իսկ որոշ դեպքերում դա համարում են հերձված¹⁸: Բողոքական եկեղեցիները խիստ մասնատված են: Դրանք տատանվում են ծայրահեղ առաջադեմ հայացքներից մինչև ծայրահեղ պահպանողականություն, ուստի դրա քննարկումը՝ որպես միասնական երեւոյթի, անհնարին է: Ինչ վերաբերում է Արեւելյան ուղղափառ եկեղեցիներին, որոնց մեջ ընդունված է ներառել նաեւ Հայաստանյայց առաքելական եկեղեցին, ապա նրանց գերակշիռ մասը՝ չունենալով ազգային պետականություն եւ հիմնականում լինելով իսլամական պետություններում քրիստոնեական ումմայի կարգավիճակում, օբյեկտիվորեն չեն կարող իրականացնել հիմնարար բարեփոխումներ:

Այս առումով ուշագրավ են բարեփոխումները կաթոլիկ եկեղեցում, որն այս կամ այն չափով կարողացավ դիմագրավել եւ գտնել այն մարտահրավերներ-

րի լուծումները, որոնց մի մասը բնորոշ է նաեւ Հայ եկեղեցուն եւ կարող է դիտարկվել որպես դրական փորձ Հայ եկեղեցու բարեփոխումների իրականացման համար:

Կաթոլիկ եկեղեցին, ի տարբերություն ուղղափառ եկեղեցիների, ենթարկվելով ծայրահեղ քննադատության, այնուամենայնիվ, իր մեջ ուժ գտավ եւ արդիականացվեց ժամանակակից աշխարհի մարտահրավերին համահունչ: Բարեփոխումների գագաթնակետը Վատիկանի II ժողովի որոշումներն էին: Վատիկանի II ժողովը հիմնարար ազդեցություն է ունեցել արդի քրիստոնեական քաղաքակրթության վրա: Նրա որոշումները կարելի է համարել հեղափոխական եւ աննախադեպ: Ժողովի որոշումներին ընդդիմացող պահպանողական կղերականների դիմադրությունը եւս ուժգին էր, ավելին՝ նրանց մի մասը նույնիսկ հեռացավ կաթոլիկ եկեղեցուց եւ ստեղծեց իր այլընտրանքային կաթոլիկ համայնքը:

Վատիկանի II ժողովը նախաձեռնել էր Հովհաննես XXIII պապը 1962-ին, եւ այն տեւել է մինչեւ 1965թ., որն ավարտին է հասցրել է արդեն հանգուցյալ Հովհաննես XXIII պապին փոխարինած Պողոս VI պապը: Ժողովի որոշումներն այնքան կարեւոր էին, որ արդեն հաջորդ երկու պապերը՝ որպես իրենց անուն, ընտրեցին ժողովը վարած պապերի միավորված անունները՝ Հովհաննես-Պողոս I եւ Հովհաննես-Պողոս II, դրանով ցանկանալով շեշտել, որ շարունակելու են այդ պապերի քաղաքականությունը: Հողվածը չձանրաբեռնելու համար կաշխատեմք շատ համառոտ թվել ժողովի հիմնական որոշումները, իսկ դրանց ավելի մանրամասն ծանոթանալ կարելի է ժողովին նվիրված հարուստ գրականությունից:

Ժողովը, ինչպես նշվեց վերը, սկսվել է 1962-ին եւ ավարտվել 1965-ին շատ լարված միջազգային իրավիճակում՝ Սառը պատերազմի ու Եվրոպայում

ձախ քաղաքական շարժումների աշխուժացման պայմաններում: Ընդունվել են եկեղեցական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող մի շարք կարեւորագույն փաստաթղթեր՝ 4 սահմանադրություն, 9 դեկրետ եւ 3 հռչակագիր: Այդ ամբողջ ծավալուն նյութին, բնականաբար, չենք անդրադառնա, սակայն չենք կարող չխոսել այն փաստաթղթերի մասին, որոնք հետաքրքրություն են ներկայացնում սույն հոդվածի բուն թեմայի առումով:

Բացման խոսքում Յովհաննես XXIII պապը ուղենշել է հավաքի հիմնական նպատակը՝ եկեղեցին պետք է բացվի աշխարհի առջև, «ոչ թե մերժել, այլ քննարկել ժամանակակից աշխարհի իրողությունները եւ իրականացնել վաղուց հասունացած բարեփոխումները»:

Եկունենիզմին վերաբերող **Nostra aetate** (լատիներեն՝ «Մեր ժամանակներում») հռչակագրում ասված է, որ բոլոր անհատները տարբեր եկեղեցիներում որոնում են նույն հարցերի պատասխանը, եւ եկեղեցիների նպատակն է աջակցել անհատների ու ազգերի միասնությանը եւ սիրուն: Հատուկ նշվում է, որ կաթոլիկ եկեղեցին ոչինչ չի մերժում մյուս կրոններում, ինչը «ճշմարիտ ու սուրբ» է: Մյուս կրոնների ներկայացուցիչներին պետք է վերաբերվել խոհեմությամբ ու սիրով: Հատուկ անդրադարձներ կան հուդայականությանը, հինդուիզմին եւ իսլամին: Հռչակագրի եզրափակիչ մասում անընդունելի է համարվում ազգային կամ կրոնական հողի վրա մարդկանց խտրականությունը: Հավատաքննությամբ եւ կրոնական արյունալի պատերազմներով անցած կաթոլիկ եկեղեցու համար այդ հռչակագիրը պատմական նշանակություն ունի, մյուս կողմից՝ Երկրորդ աշխարհամարտից հետո արեւմտյան երկրներում ընդունված՝ Մարդու իրավունքների կոնվենցիաներին եկեղեցին չէր կարող չանդրադառնալ եւ դրանք ընդունել: Որոշիչ էր ժո-

ղովի դերը միջեկեղեցական երկխոսություն սկսելու գործում:

Orientalium Ecclesiarum (լատիներեն՝ «Արեւելյան եկեղեցիներ») դեկրետն ուղղակիորեն վերաբերում է նաեւ Հայ կաթողիկե եկեղեցուն: Կաթոլիկ եկեղեցին ճանաչում է արեւելյան կաթողիկե եկեղեցիների իրավունքը՝ ունենալու իր կանոնակարգն ու «մաքուր» վիճակում պահպանելու արեւելյան պաշտամունքային ծեսերը: Այս մոտեցումը թույլ է տալիս հայ կաթոլիկներին պահպանել Հայ եկեղեցու առանձնահատկություններն ու ծեսերը: Եվ Հայ կաթողիկե եկեղեցին սփյուռքում Հայ եկեղեցու հետ միասին հնարավորություն է ստանում այս առանձնահատկությունների շնորհիվ զբաղվել հայապահպանությամբ: Ըստ որոշ ոչ պաշտոնական գնահատականների, աշխարհում հայ կաթոլիկների թիվը հասնում է մինչեւ 700 հազարի: Դեկրետի մյուս հատվածն արդեն վերաբերում է արեւելյան ոչ կաթոլիկ եկեղեցիներին, որոնց թվին է դասվում նաեւ հայ Առաքելական եկեղեցին: Դեկրետում ասվում է, որ պետք է եղբայրական հարգանքով վերաբերվել՝ մի կողմ դնելով տարբերություններն ու առանձնահատկությունները: Ավելին՝ արեւելյան եկեղեցիների հետեւորդները ցանկության դեպքում կարող են հաղորդություն ընդունել կաթոլիկ եկեղեցիներում, մյուս կողմից՝ կաթոլիկներն իրենց հերթին կարող են այդ եկեղեցիներում խնդրել քրիստոնեական խորհուրդների մատուցումը: Դեկրետում նշվում է կաթոլիկ եւ արեւելյան եկեղեցիների ծեսերի ու խորհուրդների կանոնական հավասարությունը, եւ դրանով իրենց հարգանքն են մատուցում այդ եկեղեցիներին: Ի դեպ, ուղղափառ եկեղեցիները նման մոտեցում չունեն, նրանց համար անընդունելի է, օրինակ, հաղորդություն ընդունելը Հայ եկեղեցում եւ հակառակը, քանի որ պաշտոնապես Հայ եկեղեցին համարում են հերձվածող:

Հատուկ կարեւորություն ունի կրոնական ազատությունների մասին հռչակագիրը՝ «Dignitatis humanae» (լատիներեն՝ «Մարդ-անհատի արժանապատվությունը»): Այս հռչակագրի ընդունմանը դեմ էին եկեղեցու պահպանողական շրջանակները՝ Հռոմի Կուրիայի բազմաթիվ ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Իտալիայի եւ Իսպանիայի շատ եպիսկոպոսներ, սակայն պահանջկոտ գունդեցին ԱՄՆ-ից ժամանած եպիսկոպոսները: Հռչակագրում ամրագրված է, որ իշխանությունը, որքէէ սոցիալական խումբ եւ որքէէ անհատ կրոնական ոլորտում չի կարող որքէէ պարտադրանք կիրառել, եւ այդ ազատությունը հիմնված է մարդու արժանապատվության վրա ու դրված է մարդու բնության հիմքում: Նաեւ ասվում է, որ մարդն իր բոլոր արարքներում պետք է հետեւի իր խղճին, որպեսզի կարողանա հասնել Աստծուն, եւ չի կարելի մարդուն խոչընդոտել իր խղճի մտք գործելու, հատկապես՝ կրոնական ոլորտում: Ժողովի ընթացքում եպիսկոպոսական կոչում ստացավ առաջին սեւամորթ հոգեւորականը:

Ժողովը կոչ էր անում երկխոսություն սկսել բոլոր կրոնների, հարանվանությունների ու անվանակարգությունների ներկայացուցիչների, ինչպես նաեւ աթեիստների եւ մնացած բոլորի հետ: Շրջանառության մեջ մտավ «Զույր եկեղեցիներ» հասկացությունը: Ժողովի աշխատանքներին մասնակցելու համար, առանց ձայնի իրավունքի, հրավիրվել էին մյուս հարանվանությունների պատվիրակությունները: Մի շարք առանցքային փաստաթղթեր էին ընդունվել սոցիալական արդարության, կանանց, ընտանիքի եւ այլ խնդիրների վերաբերյալ, որոնց այս հոդվածում չենք անդրադառնա:

Ժողովն ունեցավ նաեւ կարեւոր քաղաքական նշանակություն, որովհետեւ պապը սկսել էր հարաբերություններ կառուցել խորհրդային ճամբարի երկրների

հետ՝ հաղթահարելով այդ պատճառով իր հանդեպ սկսված սուր հարձակումները: Հովհաննես III պապի քննադատները նրան անվանում էին «Կարմիր պապ», սակայն տարիներ անց Հովհաննես-Պողոս II պապի ժամանակ նրան դասեցին սրբերի շարքը:

Կարեւոր մի հանգամանք եւս, որը կարող է լավ օրինակ լինել Հայ եկեղեցու այսօրվա բարձրաստիճան հոգեւորականների համար. պապը ծնվել է գյուղում՝ աղքատ ընտանիքում, եւ նրա մայրը մինչեւ կյանքի վերջն ապրել է իր գյուղական տանը՝ մերձավորների պես համեստ սոցիալական պայմաններում:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու արդի մարտահրավերները

XIX դարի վերջում եւ XX դարում կաթոլիկ եկեղեցին սուր քննադատության թիրախում էր, որի հիմնական կետերը սոցիալական ու ազգային խնդիրներն էին: Եթէ, օրինակ, Իտալիայում եւ Գերմանիայում եկեղեցին դիտարկվում էր որպես վերազգային կառույց, որը խոչընդոտում էր այդ երկրների վերամիավորմանը, ապա բանվորական շարժումների ու սոցիալիստական ուսմունքի տարածմանը զուգընթաց՝ այն սկսեց ընկալվել որպես շահագործող դասակարգի գործիք: Կաթոլիկ եկեղեցին մեծ շանքեր գործադրեց իրավիճակը փոխելու եւ եկեղեցու նոր սոցիալական ու քաղաքական հայեցակարգեր մշակելու համար:

Սոտավորապես նման իրավիճակում է հայտնվել Հայաստանյայց եկեղեցին: Երկրի քաղաքական ու սոցիալական կյանքի հանրային դիսկուրսի հիմնական առանցքը անարդարությունների մասին խոսակցություններն են՝ ընտրախախտումները, սոցիալական անարդարությունները, անվստահությունը դատական համակարգի ու առհասարակ արդարության հանդեպ եւ այլն: Այս պայմաններում եկեղեցու վերնախավը հանրային

դիսկուրսում սկսել է դիտարկվել որպես հասարակական լեգիտիմություն չունեցող համակարգի սպասավոր: Առանձին բարձրաստիճան հոգեւորականներ կոռուպցիոն սկանդալների հիմնական հերոսներից¹⁹ են, ովքեր հայտվելով քննադատության կենտրոնում, այնուամենայնիվ, շարունակում են պաշտոնավարել:

Դրան նպաստում է նաեւ եկեղեցու բյուջեի փակ լինելն իր հետեւորդների համար, ինչի պատճառով հանրային անվստահություն կա եկեղեցու վերնախավի նկատմամբ: Եկեղեցին պետությունից ստանում է հարկային արտոնություններ եւ արդեն վերածվել է խոշոր հարկատուի²⁰ ու կյուլթական մեծ ունեցվածքի սեփականատիրոջ, սակայն եկեղեցու բյուջեի եւ ֆինանսական գործունեության ոչ թափանցիկ լինելն իր հերթին հանրային կասկածների համար հարուստ ենթահող է հանդիսանում:

Մյուս կարեւորագույն խնդիրը կրոնական ազատությունների հանդեպ վերաբերմունքն է: ՀՀ սահմանադրության եւ օրենսդրության հիմնարար դրույթներից է խղճի ազատության սկզբունքը, սակայն, եկեղեցականների հրապարակային հռետորաբանության մեջ այդ սկզբունքը քննադատվում է: Ավելին՝ կրոնական ազատությունները դատապարտվում եւ ներկայացվում են իբրեւ հակազգային դրույթ, ինչը լուրջ խնդիր է առաջացնում սահմանադրականության եւ օրինականության մասին հանրային ընկալումներում: Կրոնական ազատությունների դեմ բացեիբաց հանդես գալով՝ եկեղեցին փորձում է օրենքից դուրս դնել մյուս կրոնական կազմակերպություններին՝ նրանց որակելով որպես «աղանդ» եւ ապազգային կառույցներ: Ուշագրավ ձեւակերպում է տվել Շիրակի թեմի պահպանողական առաջնորդ Միքայել սրբազան Աջապահյանը. «Առաքելությունն ամեն մեկը պետք է իրականացնի իր հոտի, այլ ոչ թե ուրիշի հոտի սահմաններում, կամ պետք է իրականացնի այն-

տեղ, որտեղ չկա կրոն, անկրոնության մեջ: ...Որեւէ մեկ այլ դավանական հավաքականության մեջ հավատի քարոզչությունը հոգեորություն է, սա պարզ բան է, որ ցանկացած հոգեւորական՝ որ եկեղեցուց ուզում է լինել՝ առաքելական, կաթոլիկ կամ ավետարանական, հասկանում է, եւ ուրիշներին շփոթեցնել այս իմաստով՝ պետք չէ»²¹: Փաստորեն Հայ եկեղեցին ընդունում է մյուս եկեղեցիներին, սակայն՝ ոչ հայկական էթնիկ շրջանակում: Հիմնական խնդիրներից մեկն էլ ազգային եւ կրոնական պատկանելության նույնականացման դրույթն է, որը միլիթթական անցյալի կաղապարներից է եւ Հայ եկեղեցու քարոզչության հիմնական թեզը:

Այս համառոտ հոդվածի եզրափակիչ մասում երկար չծավալվելու համար փորձենք կարճ ձեւակերպել այն հիմնական խնդիրները, որոնց պարտավոր է անդրադառնալ Հայ եկեղեցին ժամանակին համընթաց քայլելու եւ կուտակված հարցերին լուծում տալու համար: Սա անհրաժեշտ է ոչ միայն եկեղեցուն, այլեւ հայկական պետականության կայացման հրամայականին: Դրանք են.

ա/ Հրաժարվել ազգի եւ կրոնի նույնականացման դրույթից.

բ/ Ձեւակերպել եկեղեցու պաշտոնական վերաբերմունքը կրոնական ազատությունների իրավունքի առնչությամբ, որը կհամապատասխանի ՀՀ սահմանադրությանն ու Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին.

գ/ Սկսել երկխոսություն այլ կրոնների, հարանվանությունների ու կոնֆեսիաների պատկանող հայկական համայնքների հետ՝ ներազգային համերաշխության եւ փոխօգնության մթնոլորտ ձեւավորելու համար.

դ/ Պատրաստել իր սոցիալական հայեցակարգը՝ հստակ արտահայտելով սոցիալական արդարության,

սեփականության իրավունքի, ընտանիքի, միայնակ մայրերի և հանրային օրակարգի հանգուցային այլ խնդիրների վերաբերյալ եկեղեցու տեսակետները.

ե/ Ձեւակերպել եկեղեցի-պետություն համագործակցության կանոնները.

զ/ Հրապարակել և իր հետեւորդներին ներկայացնել եկեղեցու բյուջեն, տարեկան ծախսերը, գույքի և ունեցվածքի, տնտեսվարող կառույցների ցանկերը, եկեղեցու բանկային հաշիվներն ու նվիրատվությունների մասին հանգամանալի հաշվետվությունները:

Անշուշտ, դժվար է փոքրիկ մի հողվածում ներկայացնել եկեղեցու առջեւ կանգնած վիթխարի խնդիրների ողջ ներկայակնը, այդ թվում՝ դավանաբանական ձեւակերպումների հստակեցման հարցը, որի առաջին պատմական քայլը 1996թ. դեկտեմբերի 13-ին Վատիկանում կատարեց Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսը՝ Յովհաննես-Պողոս Երկրորդի հետ ստորագրելով Հիսուս Զրիստոսի հանդեպ միասնական հավատքի մասին հռչակագիրը²²: Աստվածաբանները քրիստոնեությունը հաճախ անվանում են «կենդանի հավատք», որն ի գործ է նոր իրողությունների պայմաններում արձագանքել ժամանակի մարտահրավերներին: Ցավոք, Հայաստանյայց առաքելական եկեղեցու միաբաններն իրենց հռետորաբանության մեջ միշտ ջանում են վերադառնալ անցյալի կաղապարներին, և վերափոխման անհրաժեշտության զգացողությունը հրապարակային ելույթներում չի նշմարվում:

ՀՂՈՒՄՆԵՐ

- 1 Имперские структуры управления и этноконфессиональные общины в Османском султанате, Сергей Олюнин, журнал международного права и международных отношений 2012 — № 1, <http://evolutio.info/content/view/1931/232/>
- 2 Հայկական եկեղեցին 451-ի Զաղկեդոնական Տիեզերական Ժողովի որոշումները չի ընդունել: Զաղկեդոնի ժողովի որոշումներն ընդունած եկեղեցիների հետեւորդներին միջևդարում անվանում էին քաղկեդոնականներ, իսկ այն չընդունածներին՝ հակաքաղկեդոնականներ:
- 3 Էջմիածնի կաթողիկոսության հիմնադրման քաղաքական և աստվածաբանական հանգամանքները, Վարդան Ջալոյան, <http://www.religions.am/arm/articles/էջմիածնի-կաթողիկոսության-հիմնադրման-քաղաքական-և-աստվածաբանական-հանգամանքներ/>
- 4 Ստեփան Դանիելյան, Արա Ղազարյան, Հովհաննես Հովհաննիսյան, Արթուր Ավթանդիլյան, «Կրոնական կրթության խնդիրները Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում», Երեւան 2012
- 5 Religious Tolerance in Armenia, Stepan Danielyan, Vladimir Vardanyan, Arтур Avtandilyan, <http://www.osce.org/yerevan/67674?download=true>
- 6 Gohar Hakobyan, priest Karapetyan does not step back from his words. “Pagan Armenia is not a full Armenian”, Aravot, 19 May, 2014, <http://en.aravot.am/2014/05/19/165292/>
- 7 Архиепископ Паргев: «Если ты не христианин — ты уже не армянин», Regnum, May 2015, <http://www.regnum.ru/news/polit/1922012.html>
- 8 Արթուր Ավթանդիլյան, Հարցազրույց Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Եպիսկոպոս Աջապահյանի հետ, www.religions.am, Մարտ 2010, <http://www.religions.am/arm/interviews>
- 9 Հայոց պետականության յուրաքանչյուր պետական ծառայող պետք է իր պարտքը վերադարձնի եկեղեցուն. Նախագահ, aaa.ar.newsarmenia.ru, Սեպ-

- տեմբեր 2008, <http://ar.newsarmenia.ru/arm/1/20080929/41957028.html>
- 10 Ա.Ա.Ղուկասյան, Ռ.Յ.Գասպարյան, Վ.Ռ.Պարսամյան, Ա.Վ.Գյուլբուրդադյան, Վ.Ա.Ղանդիլյան, Հայոց եկեղեցու պատմություն, 8-րդ դասարան, 2004թ., Երեւան, Կրթության ազգային ինստիտուտ, էջ 121
- 11 Է. Ղազարյան, Վ. Ղանդիլյան եւ ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, 10-րդ դասարան, 2005թ., Երեւան, Կրթության ազգային ինստիտուտ, էջ 30
- 12 Մայր Աթոռ, Կլոր սեղան-քննարկում՝ նվիրված «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, Մայիս 2012, http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20120221_21&flag=am
- 13 Օվ.Սանդախյան, Պատվավոր դոկտորի կոչում՝ երեք բարձրաստիճան հոգեւորականների, Առավոտ, Հունիս 2014, <http://www.aravot.am/2014/07/04/476851>
- 14 Sara Khojayan, A Scientific Research Failed for Religious Motives: The Church Intervenes into Science, February 2014, <http://kron.armhels.com/?p=900&lang=en>
- 15 Նմանակէք, բայց դատապարտէք, Առավոտ օրաթերթ, Փետրվար 2010, <http://www.aravot.am/2010/02/16/354249/>
- 16 Սարսափելի է պատկերացնել, թե ինչ կկատարվի, եթե մարտական դիրքում կանգնած զինվորի հավատամքն այլ լինի. Սեյրան Օհանյան, MediaMall, Ապրիլ 2014, <http://topnews.mediamall.am/?id=77317http%3A%2F%2Ftopnews.mediamall.am%2F%3Fid%3D77317http%3A%2F%2Ftopnews.mediamall.am%2F%3Fid%3D77317>
- 17 «Շատ կարեւոր է մեր եկեղեցու ներկայացուցիչների մուտքը դպրոց», Religions.am, Հունիս 2014, <http://www.religions.am/arm/news/>
- 18 Հատված Ռուս ուղղափառ եկեղեցու պատրիարք Կիրիլի ելույթից. «Այսօր ավելի ու ավելի ուժգին, արդեն ողջ մուլտրակի մասշտաբով, զարգանում է այդ գաղափարը՝ կյանք առանց Աստծո, եւ մենք տեսնում ենք, թե ինչպես են ջանքեր ներդրվում, այդ թվում օրենսդրական դաշտում, նաեւ շատ զարգացած երկրներում, օրենքով ամրագրելու յուրաքանչյուր մարդու ցանկացած ընտրության իրավունքը, այդ թվում նաեւ ամենամեծ մեղքի, որը հակասում է Աստծո խոսքին, սրբությանը, Աստծո հասկացությանը, եւ ունենք ժամանակակից մարդկության ամենավտանգավոր երեւոյթը, որը «ապաքրիստոնեականացում» անվանումն է ստացել: Եվ երեւի հնարավոր չլինել փիլիսոփայական այդ հայացքներն անվանել հերձված, եթե շատ քրիստոնյաներ չլինեին դրանք եւ Մարդու իրավունքների ավելի մեծ տեղ չտային, բան Աստծո խոսքին: Այդ իսկ պատճառով մենք այսօր խոսում ենք գլոբալ հերձվածողության մասին՝ մարդապաշտության մասին, մի նոր կռապաշտության մասին, որը մարդու հոգուց դուրս է մղում Աստծուն: Նման բան գլոբալ առումով երբեք չի եղել...», <https://www.youtube.com/watch?v=GkiUZeRzBoQ>
- 19 «ԶԻ». Կճոյանը 1 մլն ԱՄՆ դոլար է պահանջել իր սանիկի միջոցով՝ ԿԲ Լախագահ Տիգրան Սարգսյանի ցուցումով, <http://hetq.am/arm/news/7750/chiktchoyany-1-mln-amn-dolar-e-pahanjelir-saniki-mijocov-kb-nakhagah-tigran-sargsyani-cucumov.html>
- 20 Հայ առաքելական եկեղեցին կդիմի՞ դատարան, Ելույթի աղբյուրը՝ hrarak.am, <http://hrarak.am/?p=72867&l=am%2Fhay+aragelakan+ekexecin+kdimi+dataran>
- 21 «Հայոց Աշխարհ», 27 հունիսի 2009 #121/292127
- 22 Можно ли называть еретиками и монофизитами Армянскую Апостольскую Церковь?, Radio Vatikan, 13/06/2016, http://ru.radiovaticana.va/news/2016/06/13/армянская_апостольская_церковь_-_еретическая/1236802

Степан Даниелян

Необходимость пересмотра политики сотрудничества церкви и государства

В статье поднимается вопрос необходимости проведения фундаментальных реформ в Армянской Апостольской церкви. В 1991 году после приобретения независимости в вопросе государственного строительства Армения оказалась перед новыми вызовами и в этом контексте нужно рассматривать вопрос реформ церкви. Восстановление старых моделей, основанных на национальной и религиозной идентификации, уже анахронизм. В статье, как удавшийся пример реформ, приводятся решения II собрания Ватикана католической церкви, которые могут быть полезны для Армянской церкви.

Stepan Danielyan

The Need to Revise Policy of Cooperation between Church and State

The article addresses the need for fundamental reforms in the Armenian Apostolic Church. Armenia faced new challenges related statehood after gaining its independence in 1991. And the issue of reforms of the church should be considered in this context. The restoration of old molds, based on national and religious identity, is anachronistic. The author, as an example of successful reforms, is pointing to the decisions of the Catholic Church's 2nd Vatican Council which may be useful for the Armenian Church.

Արցախյան հիմնախնդիրը եւ միջազգային իրավունքը. առասպելաբանություններն ու իրականությունը



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԶԱՆԱՆԵԱՆ
Քաղաքագետ

Նախաբան

Հայաստանյան եւ, առհասարակ, հայոց քաղաքական կյանքին բնորոշ են շատ երեւոյթներ, որոնք քաղաքագիտական վերլուծության դասական չափանիշների տեսանկյունից լիովին կամ միանշանակ դժվար է մեկնաբանել: Այդ երեւոյթների մի մասը հայության շուրջ հազարամյա պետականագուրկ գոյության հետեւանք է, իսկ մյուս մասը, իմ անձնական համոզմամբ, ժառանգվել է դեռեւս Մեծ Հայքի Արշակունյաց շրջանում արմատացած պետական համակարգի ավանդույթներից¹: Հիշյալ ավանդույթների կենսունակ պատմութային² բնույթը, հանրային գիտակցության վրա ազգային պատմության արհավիրքների թողած համակողմանի հոգեբանական հետքը եւ նորագաղութային պետական գոյության միջավայրը, ի թիվս

պետականակերտման այլ խնդիրների, նպաստել էին բուն քաղաքական իրապաշտության հետ աղերսներ չունեցող, արհեստականորեն կարծրացած՝ իբր բացառիկ եւ անայլընտրանք առասպելաբանություններից կառչելու «տարապայման մտամոլութայնը»³:

Երրորդ Հանրապետության կյանքում «տարապայման մտամոլութայն» կնիք կրող ամենացայտուն քաղաքական հայեցակարգերից են միմյանց սերտորեն փոխկապակցված՝ Արցախյան հիմնախնդիրն «առանց տարածքների հանձնման» կարգավորելու անհնարինություն, ԼՂՀ անկախության ճանաչման անայլընտրանքություն, միջազգային իրավունքի տարողության, ինքնորոշման իրավունքի ըմբռնման եւ ցեղասպանության տարածքային հետեւանքների վերացման շուրջ առկա հայտնի առասպելաբանությունները:

Նախորդ տարիներին մի քանի ժամանակագրական փուլ⁴ անցած հանրային վերարժեւորման գործընթացը հանգեցրել է «տարածք հանձնելու» անխուսափելիության առասպելաբանության եւ վերջինիս ջատագով քաղաքական շրջանակների ու գործիչների հանրային լուսանցքայնացմանը: Ներկայումս աճող լուսանցքայնացման է ենթարկվում Արցախի անկախության ճանաչման անայլընտրանքության մասին առասպելաբանությունը, որին ի հակակշիռ գործեղանում եւ հանրային համընդհանուր աջակցություն ստանալու միտում է արձանագրում Արցախի «միացման» հայեցակարգը⁵: Վերոհիշյալ առասպելաբանությունների վերագնահատմանը եւ հաղթահարմանը զուգահեռ հայաստանյան քաղաքագիտական շրջանակների ոչ կաղապարյալ ներկայացուցիչ

ները հետզհետե շրջանառության մեջ են դնում միջազգային իրավունքի առասպելագերծ եւ հռչակագրային իդեալիզմով ու պաթոսով չնեղաթյուրված իրապաշտ մեկնաբանությունները:

Այս հոդվածի շրջանակում մենք անդրադառնալու ենք Արցախի «միացման» քաղաքական հայեցակարգի առանձին կետերին եւ միջազգային իրավունքի էության, քաղաքական տարողության եւ տեղայնացված կիրառելիության հարցի որոշ բաղադրիչներին:

Միջազգային իրավունքի էությունը եւ քաղաքական տարողությունը. առանձին դիտարկումներ

Ինչպես արդեն նշել ենք առաջաբանում, հայ քաղաքագիտական մտքի եւ վերջինիս հետ փոխադարձաբար ածանցյալ ՀՀ վարած պաշտոնական քաղաքականության օրակարգի համակարգային թերությունները հաճախ բացատրվում են ոչ միայն երկրի առջեւ ծառայած ռազմավարական հրամայականներին, ներկայիս քաղաքական վերնախավի անհամապատասխանությամբ, այլեւ միջազգային քաղաքականության ու «իրավունքի» հիմնավորապես սխալ ընկալմամբ⁶: Որոշակիորեն պարզունակեցնելով «միջազգային իրավունք» երեւոյթի հանդեպ հանրային ու փորձագիտական մեծօրյա մտադեբրումները՝ կարելի է տարրորշել երկու գերիշխող մոտեցում: Առաջին մոտեցմանը հարող անձինք հակված են «միջազգային իրավունքին» ընծայել սուկ անվանական արժեք: Նրանց գնահատմամբ աշխարհն, ինչպես եւ միշտ, կառավարվում եւ փոփոխվում է բացառապես «ուժեղ-թույլ» խաղի կանոններով, իսկ «միջազգային իրավունք» ասվածն ընդամենը ծառայում է հաղթանակած կողմի հարափոփոխ ձեռքբերումներին իրավական շղարշ եւ հիմնավորում հաղորդելու համար: Մյուս մոտեցման ջա-

տագովներն, ընդհակառակը, հակված են ավելորդաբար գերազնահատել «միջազգային իրավունքի» հռչակագրային փաստաթղթերի դերը համաշխարհային քաղաքական ժամանակակից զարգացումները պայմանավորելու, ուղղորդելու եւ դրանց արդյունքները կանխորոշելու հարցում:

Իրականությունը, բնականաբար, այսչափ միակողմանի կամ պարզունակ չէ. այն ինքնին շատ բարդ համակարգ է, որը վերջինիս ձեւավորմանը մասնակցող ամենատարբեր տարրերի ու տարաբնույթ սուբյեկտիվ գործոնների հարափոփոխ ազդեցության պատճառով, ըստ էության, ենթակա չէ որեւէ կայուն սահմանման: Նպատակ չունենալով խորանալու «միջազգային իրավունք» երեւոյթի քաղաքագիտական եւ պատմափիլիսոփայական հայեցակետերի քննության մեջ՝ բավարարվենք ընդամենը մի քանի ակնհայտ իրողությունների արձանագրմամբ: «Միջազգային իրավունքը» թե՛ պատմական կտրվածքով եւ թե՛ ներկա «ինստիտուցիոնալացված» կարգավիճակում խիստ հարաբերական ու հակասական, հիմնականում նախադեպային, բոլոր մակարդակների ընթացիկ ռազմաքաղաքական լուծումներն ըստ գերակա կողմի/կողմերի կոնյունկտուրային նպատակահարմարության կարգավորող անկայուն համակարգ է: «Միջազգային իրավունքի» բազմազան, գործնականում միմյանց ըստ էության հակասող եւ նպատակահարմարային կամայականությամբ մեկնաբանվող ու պարտադրվող դրույթներն ընդամենը սահմանում են խաղի կանոնների որոշակի ճկուն շրջանակ: Պետությունների կամ աշխարհաքաղաքական միավորումների մրցակցային դիմակայության ընթացիկ դրսեւորումներն ու արդյունքները պատճառաբանվում, արդարացվում եւ հաստատագրվում են ըստ «միջազգային իրավունքի» ընձեռած «հնարավորությունների պատուհանի»՝

յուրաքանչյուր ոք՝ յուրաքանչյուր դեպքում՝ ըստ ունեցած փաստացի կշռի եւ հարակից տարատեսակ հանգամանքների նպաստավորության:

Այսուհանդերձ, «միջազգային իրավունքը» սոսկ ձեւական երեւույթ չէ⁷: Բոլոր ժամանակներում միջպետական ու միջազգային հարաբերությունների դաշտը կարոտ էր որոշակի կարգավորման: Որոշակի «վարքականոններն» անվանապես գործել են անգամ պատմության անցումային կամ ճգնաժամային ժամանակահատվածներում: Երկրորդ աշխարհամարտից հետո համընդհանուր պատերազմի դառնագույն պտուղները ճաշակած Արեւմուտքն ինքնաբերաբար հակված էր հաստատելու այնպիսի աշխարհակարգ, որը հնարավորինս կբացառեր խոշոր հակամարտությունների ծագումն ու տարածումը, որոնք կարող էին հանգեցնել երկու բեւեռների միջեւ միջուկային ընդհարման: Ձեւավորվել է ՄԱԿ-ը, սահմանվել եւ ընդունվել են պետությունների փոխադարձ նկրտումները եւ մարդկայնության դեմ հանցագործությունները տեսականորեն զսպող հայտնի հիմնարար սկզբունքներ, միջազգային կոնվենցիաներ, այլեւայլ վեհաժողովների եզրափակիչ ակտեր, միջազգային տարբեր կազմակերպությունների անդամ-պետությունների համար (հաճախ սոսկ անվանապես) պարտադիր որոշումներ եւ այլն: Սակայն այս բոլոր միջազգային փաստաթղթերի գործնական տարողությունը՝ միջազգային քաղաքական զարգացումները կանոնավորելու, սահմանափակելու կամ ուղղորդելու առումով բավական տարբեր է՝ ելնելով ժամանակահատվածի ու գործող դերակատարների որպիսությունից:

Ինչպես արդեն նշել ենք, Երկրորդ աշխարհամարտից հետո ծանրագույնս ուժասպառ եղած եւ նոր համաշխարհային առճակատումից խուսափել ձգտող մարդկությունը՝ ի դեմս առաջատար տերությունների, հիմնադրել էր միջազ-

գային անվտանգության որոշակիորեն արդյունավետ համակարգ, որին ցայսօր սպասարկում է 1945թ. հաստատված եւ 1975թ. Յելսինկյան⁸ եզրափակիչ ակտով վերաշարադրված ու բազմաթիվ այլ միջազգային ակտերով համալրված «միջազգային իրավունքի» ներկա խմբագրությունը: Յետպատերազմյան հարաբերական խաղաղությունը եւ արեւմտյան երկրների տնտեսական զարգացման ու բարեկեցության մակարդակի անսխառոտ աճը շատերի, այդ թվում եւ լուրջ փորձագետների շրջանում նպաստել էին «պատմության ավարտի»⁹ կեղծ պատմափիլիսոփայական կաղապարի առաջացմանը: Շատերին թվացել էր, որ միջազգային հանրությունն իսկապես հասել է ներքին կայունության, համաշխարհային գործընթացների հարաբերական վերահսկելիության այնպիսի մակարդակի, որն այսուհետ բացառում է հաստատված աշխարհակարգի, ուստի եւ՝ պետությունների քայքայման, տրոհման, ռազմակալման կամ սահմանների կտրուկ փոփոխության հնարավորությունը: Սակայն վերջին երկու տասնամյակների պատմությունն ինքնին վկայում է սույն հոգեբանորեն ըղձալի հույսերի տապալման մասին: Ոչ ոք, անգամ ամենահզոր գերտերությունն իսկ, ի վիճակի չէ կասեցնել պատմական ընթացքի անշեղ ու վերժամանակյա օրինաչափությունները կամ «սառեցնել» դրանք: Այլ բան է, որ «միջազգային իրավունքը», ինչպես ամեն մի օրենսդրական համակարգ, դրսեւորում է հասկանալի մղումներով սնվող «պահպանողականություն»՝ ձգձգելով նոր միտումների եւ կայացած իրողությունների «օրինական» ճանաչումը եւ, հատկապես, դրանց համընդհանուր «իրավական» կիրառելիության ամրագրումը: Անիրաժեշտ է ժամանակ, որպեսզի «միջազգային իրավունքի» ներկա խմբագրության գործադրման ավանդույթին հակասող նախադեպերը, միմյանց վրա կուտակ-

վելով, առաջացնեն «միջազգային իրավունքի» հիմնովին վերաշարադրված նոր խմբագրության եւ, հատկապես, վերջինիս քաղաքական կիրառման նոր ավանդույթների օրինականացումը: «Միջազգային իրավունքի գործադրման ավանդույթներ» հասկացությունն, իհարկե, հեղինակի «բառաբարդման» հանդեպ սիրո արգասիք է: Միջազգային քաղաքական գործընթացները քննող անձը պետք է հստակորեն տարանջատի «միջազգային իրավունքի» ընդհանուր տեսությունը վերջինիս գործնական կիրառելիության ուրույնություններից: Այդ ուրույնություններն ամեն մի ժամանակահատվածում եւ ըստ տարբերակման չափորոշիչների սանդղակի, ձեւավորում են յուրօրինակ «կիրառելիության ավանդույթներ», որոնք զգալիորեն կանխորոշում են, թե ինչպես է մեկնաբանվելու եւ ում օգտին է ծառայելու «միջազգային իրավունքի» այս կամ այն տեսական դրույթը: «Կրկնակի չափանիշների» եւ միեւնույն քաղաքական խնդրին տրվող (եւ միջազգային իրավունքի տեսանկյունից երկուստեք հիմնավոր) իրավական գնահատականները ոչ թե արժեզրկում են երեւակայաբար «արդար» ու «անկողմնակալ» միջազգային իրավունքը, այլ միանգամայն բնական կերպով արտացոլում են վերջինիս հարաբերական ու կոնյունկտուրային էությունը: Այս խորապատկերին հայրենի մի շարք իրավագետների՝ «միջազգային իրավունքին» քաղաքական համապատկերից դուրս ինքնուրույն (առավել եւս՝ որոշիչ) արժեք ընծայելու ճիգերը հարկ է համարել անլուրջ: Համարյա նույնքան անլուրջ է կառուցել սեփական քաղաքականությունը «միջազգային իրավունքին» իբր բացառապես համապատասխանող առանձին վերցված որեւէ նեղ տիպօրինակի հիման վրա՝ անառողջ երկյուղ տածելով միջազգային հանրության թվացյալ անհանդուրժողականության առջեւ՝ խնդիրների կարգավորման այլընտրանքային սեփական նախադեպը մշակելու եւ իրագործելու հարցում:

Հարկ է մեկընդմիջտ հասկանալ, որ ներկա «միջազգային իրավունքի» սահմանած խաղի կանոնները բավականին լայն են եւ ինքնին սպասարկու են համաշխարհային թատերաբեմի դերակատարների շահերին: Եթե որեւէ հարցի շուրջ առկա է շահագրգիռ կողմերի (գերտերությունների, աշխարհաքաղաքական միավորումների, տարածաշրջանային պետությունների, հակամարտող երկրների եւ այլն)՝ որեւէ ռազմաքաղաքական իրողությունը *դե ֆակտո* կամ *դե յուրե* ճանաչելու, գործնականում հանդուրժելի համարելու կամ ներկա փուլում փոփոխության չենթարկելու վերաբերյալ գեթ ընթացիկ համաձայնություն, ապա այդ կացությունը ստանում է «միջազգային իրավունքի» գործեղարանով նախատեսված ինչ-ինչ ամրագրում: Պատժամիջոցները կամ ռազմական միջամտությունը պայմանավորված են ոչ թե որեւէ քաղաքական իրողության՝ «միջազգային իրավունքի» տառին չհամապատասխանելու, այլ շահագրգիռ ազդեցիկ կողմերի միջեւ այլ ուժի (կամ ազդեցության այլ միջոցների) կիրառմամբ փոփոխելու վերաբերյալ ձեռք բերված հրապարակային կամ լռելյայն համաձայնությամբ: Երբեմն էլ՝ դերակատարների մի խմբի նշանակալից գերակայությունը թույլ է տալիս իսպառ անտեսել այլ դերակատարների դիրքորոշումն ու շահերը: Կարիք չկա հավելելու, որ այդ ամենը հիմնավորվում ու արդարացվում է «միջազգային իրավունքին» կատարվող անշեղ հղումներով, մանավանդ, որ վերջինիս հարաբերական ու քաղաքականից ածանցյալ բնույթն այն ենթակա է դարձնում նպատակահարմարությունից ելնող ցանկացած մեկնաբանության: Հետեւաբար, որեւէ արտաքին քաղաքական գործընթաց, այդ թվում եւ հայթուրքական հակամարտության «արցախյան» ուղղությունում տեղի ունեցող

ռազմաքաղաքական գործընթացները մեկնաբանելու ժամանակ պետք է հրաժարվել «միջազգային իրավունքը» մանկամտորեն «բացարձակ» եւ «ինքնին որոշիչ» համարելու մերօրյա անհեթեթ տեղայնական «ավանդույթից»: Քաղաքական հաջողությունները կերտվում են երկրի ռազմաքաղաքական, տնտեսական ու ժողովրդագրական ներուժը բյուրեղացնելու եւ ներպետական օրինակաւորությունը հաստատելու ճանապարհով: Ճկուն դիվանագիտությունն էլ ապահովում է համաշխարհային գերագոր եւ տարածաշրջանային դերակատարների շահերից բխող սպառնալիքների մեղմացումը կամ չեզոքացումը՝ արտաքին շահերը սեփական երկրի օգտին հնարավորինս արդյունավետ ծառայեցնելու միջոցով:

Միացում, թե՛ անկախության ճանաչում

Արցախյան շարժումն ի սկզբանե ուներ ընդամենը մեկ նպատակ՝ միացում¹⁰: 1989թ. դեկտեմբերի 1-ին¹¹ միացումը ներհայաստանյան օրենսդրության տեսանկյունից դարձել էր կատարված իրողություն՝ ի հեճուկս փուլզվող ԽՍՀՄ միութենական կենտրոնի արտահայտած մերժողական դիրքորոշման¹²: 1990թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագրում¹³, որն ընկած է անկախ Չայաստանի բոլոր սահմանադրությունների հիմքում¹⁴, Արցախի հայությունը՝ մնացյալ Չայաստանի բնակչության հետ միասին, հանդես է եկել որպես Չայոց անկախ եւ ինքնիշխան պետականության հիմնադիր: Արցախից ընտրված ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորները¹⁵ լիարժեք եւ իրավահավասար կարգավիճակով մասնակցում էին Չայաստանի ներքին քաղաքական կյանքին եւ օրենսդիր գործունեությանը:

Սակայն արդեն 1991թ. ՀՀ իշխանության բարձրագույն շրջանակում

տեղի ունեցող անցուդարձին անտեղյակ հանրության լայն շերտերի համար արցախյան քաղաքականությունը ենթարկվել է «անսպասելի» արմատական շրջադարձի. պաշտոնական Երեւանը որոշել է հրաժարվել *դե ֆակտո* եւ ներհայաստանյան օրենսդրությամբ *դե յուրո* կայացած միացումից եւ Արցախի ղեկավարությանը «համոզել», այսինքն՝ պարտադրել է տրամագծորեն փոխել քաղաքական դիրքորոշումն ու ընթանալ առանձին «հանրապետություն» եւ ապա վերջինիս անկախություն հռչակելու ճանապարհով: Այս քայլն արդարացնելու համար ներքին շրջանառության մեջ էր դրվել դիվանագիտական «հանճարեղ խաղի» առասպելաբանությունը, որի «շնորհիվ» միջազգային ասպարեզում Չայաստանն իբր խուսափում էր «տարածքային վեճ» հրահրող եւ «ազդեցոր» պետություն դիտվելուց:

Այնուամենայնիվ, բավականաչափ ակնհայտ է, որ այդ պահին գործող հայաստանյան օրենսդրության տեսանկյունից Արցախը Չայաստանից «անկախացնելու» պատճառն ավելի «պրոզայիկ» էր. պաշտոնական Երեւանն ի դեմս խիստ «զգուշավոր» արտաքին քաղաքական ուղեգծի ջատագով ՀՀ առաջին նախագահի, սկսվող Արցախյան առաջին պատերազմին ընդառաջ ամեն կերպ ջանում էր վայր դնել եւ իրենից հեռացնել հիմնախնդրի համար ռազմական եւ արտաքին քաղաքական պատասխանատվությունը:

Ի թիվս հարակից հանգամանքների, հիշատակելի է այն, որ ԽՍՀՄ «վերահսկելի կազմաբանուման» եւ ԱՊՀ ձեւաչափի ստեղծման հեղինակներից Բ.Ելցինը եւ տարածքային վեճերից ծագած վայրիվերումներից հասկանալի պատճառներով խուսափել ձգտող համաշխարհային այլ՝ նախեւառաջ արեւմտյան ուժի կենտրոնները հակված էին ճանաչել միութենական հանրապետությունների նախկին վարչական սահմանները՝ որ-

պես նոր պետական սահմաններ: Պաշտոնական Երեւանն այս անգամ եւս Ելցինին հաճոյանալու եւ Հայաստանի Հանրապետության պետաիրավական իրավասության ու քաղաքական պատասխանատվության գոտուն Արցախի չպատկանելը նոր քաղաքական ակտով հռչակագրելու համար՝ 1991թ. դեկտեմբերի 21-ի Ալմա Աթայում տեղի ունեցած ԱՊՀ գագաթաժողովում ճանաչել է այդ կազմակերպությանը միացած բոլոր երկրների՝ այդ թվում եւ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը¹⁶:

Եթե փորձենք հասկանալ, թե ինչ է շահել Հայաստանն Արցախի «անկախության» տիպորինակի ակներեւաբար արհեստական բեմադրումից, ապա զնահատման առարկայական չափանիշների տեսանկյունից հարկադրված ենք լինելու խոստովանել, որ «անկախության» տիպորինակի մատուցած ռազմաքաղաքական, իրավական կամ բանակցային առավելությունները միանգամայն թեական են եւ անշոշափելի: Արցախի անկախության բեմադրումը միջազգային ոչ մի դերակատար, բնականաբար, լուրջ չի ընդունել: Ավելին՝ արեւմտյան աշխարհաքաղաքական բեւեռի քաղաքականությունն իրավական հարթությունում սպասարկող վերպետական «տիպային» կառույցներից մեկը՝ Սարդու իրավունքների եվրոպական դատարանը, 2015թ. հունիսի 16-ի վճռով¹⁷ եւս մեկ անգամ՝ իրականությանը միանգամայն համապատասխանող իրավաբանական ձեւակերպմամբ, հաստատել է, որ Արցախի ներկայիս ողջ տարածքում առկա իրավիճակի եւ գործընթացների պատասխանատու է ճանաչում Հայաստանի Հանրապետությանը:

Հայաստանից Արցախի «անկախության» բեմադրման իսկությանը ներքին ագրեսիվ քարոզչության ազդեցությամբ մասամբ հավատացել է միայն հայաստանյան եւ սփյուռքյան հասարակությունը: Միաժամանակ, իբր «արտաքին

օգտագործման» համար նախատեսված «անկախության» բեմադրումը սկիզբ է դրել համազգային ու համապետական վտանգավորության մակարդակի մի շարք հեռահար գործընթացների՝ արցախյան առանձին քաղաքական վերնախավի ձեւավորման մեկնարկին, ՀՀ արցախաբնակ քաղաքացիների մի շարք հիմնարար սահմանադրական իրավունքների, մասնավորապես համապետական ընտրական իրավունքի ոտնահարմանը, հայաստանյան հասարակության՝ ըստ հայրենակցական սկզբունքի արհեստական տրոհմանը, Արցախում ժողովրդավարացմանն ու քաղաքացիական հասարակության ձեւավորմանը միտված հանրային շարժումների Եական թուլացմանը եւ առանձին պետականությունն լինելու անհիմն մասնակի հանրային համոզման վրա հիմնված Եթնօտարման (դեռեւս սաղմնային, բայց արդեն որոշակիորեն ուրվագծվող) երեւույթներին:

Արցախի «անկախության» տիպորինակի ընտրությունը՝ իրական լուծում չտալով ներկա հայոց պետականության առջեւ ծառայած գեթ մեկ ռազմավարական Նշանակության մարտահրավերի, առաջացնում է Հայաստանի ազգային անվտանգության հիմնարար կարելություն՝ հանրորեն դեռեւս լիովին չզիտակցվող մի շարք հարցադրումներ, որոնցից մեկը վերաբերում է ՀՀ արեւելյան (այդ թվում եւ արցախյան հատվածի) միջպետական սահմանի խնդրին: Հուսալ, որ վերջինիս արցախյան հատվածը ճանաչվելու է ներկա սահմաններում (կամ առանց սահմանների հստակեցման) լուրջ միամտություն է: Միջազգային իրավունքը գերազանցապես նախադեպային է. ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին վիճահարույց ինքնավարությունների ճանաչումները (ի դեպ՝ միայն մասնակի) ընթացել են բացառապես «ճանաչվող» պետական միավորների նախկին վարչական սահմանների

շրջանակում՝ Կոսովո, Աբխազիա, Հարավային Օսիա: Այլ երկրների կողմից Արցախի «ճանաչման» գինը համարյա անխուսափելիորեն ներառելու է տարածքներ հանձնելու բաղադրիչը՝ «տարածք՝ խաղաղության դիմաց» հայտնի միջազգային բանաձևի շրջանակում: Բոլոր ինքնավարությունների նախորդ՝ միջազգային իրավունքի տեսանկյունից նախադեպային ճանաչումները հուշում են, որ մեկ կամ մի քանի երկրի կողմից Արցախի անկախության ակնկալվող ճանաչումը (բնույթով՝ մասնակի) անխուսափելիորեն տեղի է ունենալու նախկին ԼՂԻՄ վարչական սահմաններում (լավագույն դեպքում՝ Բերձորի հատվածում նեղ միջանցքով հանդերձ): Ուստի «անկախության» այսպիսի մասնակի ճանաչումն էապես բարդացնելու է «ճանաչված» սահմաններից դուրս հայտնվելիք ներկայիս Արցախի տարածքի 2/3 հատվածի պահպանման անհրաժեշտության իրավաբանական փաստարկումը:

Արցախի սահմանների խնդրին սերտորեն առնչվում է Երրորդ հանրապետության արցախյան քաղաքականության հիմնաքար համարվող Արցախի բնակչության ինքնորոշման իրավունքի վկայակոչումը: Ինչ էլ խոսվի նախկին «ադրբեջանահայության»՝ Ադրբեջանից տարածքային տեսքով փոխհատուցում ստանալու ենթադրյալ իրավունքի մասին¹⁸, փաստն այն է, որ ներկայիս Արցախի մեծագույն մասի օտար բնակչությունը 1988-1991թթ. չէր ինքնորոշվել Հայաստանին միավորվելու օգտին եւ 1991-1993թթ. անկախ Ադրբեջանի «մաս» է կազմել: Սոսկ ինքնորոշման իրավունքի վկայակոչումը՝ անկախ Հայաստանին միավորվելու կամ անկախություն հռչակելու տարբերակներից, խախտու իրավական հիմքեր է ապահովում Արցախի ներկայիս տարածքի նկատմամբ հայկական վերահսկողությունը միջազգային իրավունքի արդի «բառապաշարով» պատշաճորեն ձե-

ւակերպելու եւ փաստարկային հարիր հիմնավորումներով օժտելու համար: Այն առավել եւս սակավօգուտ է՝ Ադրբեջանի Նոր ազրեսիային ի պատասխան ազատագրվելիք տարածքների հայաստանապատկանությունն իրավական հավակնության տեսքով ձեւակերպելու համար: Ուստի Հայաստանի պարագայում տարածքային վեճի հայեցակարգը՝ ինքնորոշման իրավունքի հարակից օժանդակ վկայակոչմամբ, այլընտրանք չունի¹⁹:

Հայաստանի ազգային քաղաքականության հիմքում պետք է դրվի ցեղասպանության հետեւանքների վերացման հայեցակարգը: Համաշխարհային բոլոր դերակատարներին քաջ հայտնի է (թեեւ ներկա փուլում՝ գերազանցապես ոչ ձեռնտու), որ Հայաստանի թուրք-խորհրդային ապօրինի բաժանումը, խորհրդային Մոսկվայի վերահսկողության ներքո հայտնված Հայաստանի տարածքների մեծ մասը հարեւան հանրապետություններին կամայականորեն կցելու եւ դրանք հայաթափելու հանգամանքն իրավական տեսանկյունից բավարար հռչակագրային հիմք են՝ Կուր գետով ՀՀ պետական սահմանը հաստատելու համար: Բնական է, որ այս մասին տեղին կլինի խոսել միայն այն դեպքում, երբ Հայաստանին հաջողվի ձերբազատվել ներկա քրեաօլիգարխիկ-գաղութային իշխանությունից եւ ապահովել համաշխարհային դերակատարների հիմնական մասի անհրաժեշտ նվազագույն չեզոքությունը Ադրբեջանի լիակատար ռազմական պարտության եւ Կուր գետով վերջնական սահմանազատումն իրականացնելու հարցում:

Ըստ էության՝ անհիմն է նաեւ այն պնդումը, թե ԼՂՀ միջազգային ճանաչումն ապահովելու է անվտանգության հավելյալ երաշխիքներ: Նախ կրկնենք, որ իրական միջազգային ճանաչում՝ ՄԱԿ-ում անդամակցությամբ հանդերձ, երբեք չի լինելու, իսկ թեականորեն են-

թաղրվող մասնակի (մեկ կամ մի քանի պետության կողմից՝ առանց ՄԱԿ անդամակցության) ճանաչումն անխուսափելիորեն կունենա այնպիսի գին, որն ինքնին զրոյացնելու է անվտանգության բոլոր այն իրական երաշխիքները, ինչպիսիք են վերահսկվող ներկայիս տարածքի ամբողջականությունը, Արցախում բացառապես հայաստանյան գինված ուժերի ներկայությունը եւ այլն:

Հարկ է մշտապես հիշել նաեւ այն, որ համաշխարհային արեւմտյան ուժային բեւեռի կողմից նախկին դաշնային հանրապետությունների կամ ինքնավարությունների (Կոսովո) մասնակի ճանաչումը, որպես կանոն, ուղեկցվում էր պաշտոնապես կամ առնվազն լռելյայն արձանագրվող՝ այլ պետությունների հետ չմիավորվելու նախապայմանով: Նույնը Բոսնիա-Հերցեգովինայի տարածքում ձեւավորված Սերբական հանրապետության հանգամանքն է: Կարծել, թե Արցախի «անկախության» ճանաչումից հետո Արցախը «հաջորդ իսկ օրը», այսինքն՝ ճանաչումից հետո կարճ կամ միջնաժամկետ ժամանակահատվածում միավորվելու է Հայաստանին՝ լուրջ միամտություն է: Համաշխարհային ազդեցիկ ուժի կողմից «անկախ» ճանաչված Արցախի մարզային քաղաքական վերնախավը նախկին «մետրոպոլիտանից» քաղաքականապես առանձին «ինքնիշխան» պետություն դառնալու գայթակղությունից ոգեւորիչ գլխապտույտ է ապրելու: Հատկապես, որ դրանով անտարակույս մեծապես շահագրգռված կլինի Արցախի անկախության ճանաչման քայլին դիմած տերությունը:

Վերոնշյալից անկերեւաբար բխում է, որ Արցախի անկախության ճանաչումը նպաստելու է ոչ թե տարածաշրջանում հայության ռազմաքաղաքական դիրքերի ամրակոչմանը, այլ ներազգային ավելի խորն ու վտանգավոր մակարդակի պառակտմանը, Արցախում առանձին կենտրոնախույս քաղաքական վեր-

նախավի ձեւավորմանը, Հայաստանի հետ վերամիավորման հեռանկարի համակարգային տապալմանը, անվտանգության մակարդակի նվազմանը, տարածքային կորուստների սպառնալիքի շեշտակի աճին եւ, որպես հետեւանք, շահագրգիռ այլ պետությունների «խաղաղարար» զորամիավորումների ռազմակալող ներթափանցմանը:

Արցախի անկախության ճանաչման հայեցակարգի ջատագովները, այսպիսով, պետք է պատրաստ լինեն ստանձնելու Արցախ-ժնացյալ Հայաստան ներազգային պետական պառակտման, ուստիեւ Հայոց պետականության վերահաս կործանման բարոյական, քաղաքական եւ պատմական պատասխանատվությունը: Հայաստանը գտնվում է աշխարհագրական այնպիսի միջավայրում, որ Սերբիա-Չեռնոգորիա, Գերմանիա-Ավստրիա, Ռուսիա-Մոլդովա օրինակով էթնոտրոհման նմանակումը հայության համար հղի է անվտանգության միջավայրի եւ պատմական հեռանկարի անվերականգնելի տապալմամբ:

Միացման հայեցակարգն ու «միջազգային հանրությունը»

Կարծել, թե (ըստ արտաքին աշխարհում ընդունված պատկերացումների) Ադրբեջանի «միջազգայնորեն ճանաչված» տարածքի շուրջ «20%-ը բռնազավթած» Հայաստանը միջազգային համընդհանուր դատապարտության, կործանարար պատժամիջոցների կամ անհաղթահարելի դիվանագիտական մեկուսացման չի ենթարկվել ազգերի ինքնորոշման իրավունքի հռչակագրային իրացմամբ «ԼՂՀ անկախությունը» բեմադրելու պատճառով, պարզապես անլուրջ է:

Իրականությունը բոլորովին այլ է: Անխտիր բոլոր միջազգային դերակատարները գիտեն, որ Արցախի շուրջ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առկա

Է փաստացի տարածքային վեճ: Բոլորին հայտնի է, որ Արցախը *դե ֆակտո* հատուկ կարգավիճակով Հայաստանի Հանրապետության մարզ է: Միաժամանակ՝ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում եւ հարակից տարածաշրջանում («Հարավային Կովկաս») համաշխարհային ուժի կենտրոններից եւ հարեւան տարածաշրջանային տերություններից ոչ մեկն այլոց նկատմամբ չունի բացարձակ ռազմաքաղաքական գերակայություն՝ հայ-թուրքական հակամարտության հայ-ադրբեջանական բաղադրիչը սեփական հայեցողությամբ «հանգուցալուծելու» կամ ընթացիկ միակողմանի «տնօրինում» ապահովելու համար: Փոխադարձաբար ինքնազսպվող հակադիր շահերի հարատեւ խաչաձեւումը Հայաստանի համար բացառիկ դրական մեկնարկային հնարավորություններ է ստեղծում՝ արտաքին քաղաքական սուբյեկտության հայտ ներկայացնելու եւ ազգային պետականակերտման ու ցեղասպանության հետեւանքների փուլային վերացման քաղաքականություն կարելու համար:

Հայաստանի վերահսկողությունն Արցախի ներկայիս տարածքի նկատմամբ գործնականում վաղուց «մարսված» կլիներ (զգալի չափով այն արդեն իսկ «մարսված» է), եթե ազատագրված տարածքի բնակֆոնդն ու բոլոր ենթակառուցվածքները Երեւանի ուղիղ հրամանով ոչնչացվելու փոխարեն օգտագործվեին 90-ականների սկզբներին Հայաստանում ապաստանած հարյուր հազարավոր փախստականների ու երկրաշարժի պատճառով անտուն մնացած քաղաքացիների վերաբնակեցման համար: Հայաստանի դեմ **Ադրբեջանի հրահրած ցեղասպանական պատերազմում լիակատար ձախողման շնորհիվ ձեւավորվել էր այժմյան «ստատուս քվո»:** Մեր վերահսկողությունից դուրս էին մնացել նախկինում հայաբնակ եւ պատմաիրավական հիմնավոր-

ման ենթակա Հայաստանին պատկանող ընդարձակ տարածքներ:

Տեղի էր ունեցել հայ եւ ադրբեջանական բնակչության վերատեղաբաշխում՝ ըստ վերահսկողության գոտիների: Համանման լուծումներ կիրառվել եւ վավերացվել են միջազգային հանրության կողմից 1945թ. Եվրոպայի հետպատերազմյան կարգավորման ժամանակ՝ Սիլեզիայում, Պոմերանիայում, Արեւելյան Պրուսիայում եւ Սուդետներում, իսկ վերջերս՝ Բոսնիայում, Խորվաթիայում, Կոսովոյում: Ցավոք, սեփական նախաձեռնությամբ Արցախի ներկայիս տարածքի 2/3-րդը հիմնավեր հրկիզած պաշտոնական Երեւանի անսկզբունք պահվածքը միջազգային դերակատարներին դնում է մի վիճակում, երբ նրանցից յուրաքանչյուրը ձգտում է առավելագույն օգուտը քաղել անընդհատ խոստացվող տարածքային զիջումներից: Անգամ կասկածելի հանգամանքներում սկսված ապրիլյան պատերազմը չի օգտագործվել տարածք հանձնելու օրակարգը բանակցային գործընթացից իսպառ եւ վերջնականապես արտամղելու համար:

Ընդհանուր եզրահանգումներ

Արցախյան խնդրի իրական, կայուն եւ երկարաժակետ լուծումը նվազագույն իսկ աղերս չունի ներկայիս բանակցային գործընթացի բովանդակության, «Մադրիդյան» եւ դրանից ածանցված կարգավորման փաթեթների, «խաղաղարար առաքելությունների» եւ այս ամենի հետեւում՝ որպես նախապայման դրված տարածքների հանձնման պահանջի (կամ ակնկալիքի) հետ: Տեւական խաղաղության ու երկրի զարգացման անհրաժեշտ նախադրյալներն ապահովելու համար հարկ է համակարգորեն նպաստել երկրի ապագադրությամբ եւ ինքնիշխանության վերականգնմանը: Հայաստանում ազգային-պետական իշխանության հաստատումից անմիջա-

պես հետո լռեյայն վերացվելու են Արցախը Հայաստանի Հանրապետության մացած մասից տարանջատող սակավաթիվ ներքին անհարկի ակտեր: «ԼՂՀ Նախագահի» Նոր ընտրության փոխարեն Արցախի տարածքում ձեւավորվելու են ՀՀ չորս Նոր մարզեր²⁰ Վարանդա՝ մարզկենտրոն ք. Շուշի, Դիզակ՝ մարզկենտրոն ք. Գետահատ²¹, Խաչեն՝ մարզկենտրոն ք. Հաթեռք եւ Բաշաթաղ՝ մարզկենտրոն ք. Բերձոր: Այս մարզերում համապատասխանաբար Նշանակվելու են (կամ ազգային Նոր Սահմանադրությամբ ընտրվելու են) Նոր մարզպետներ: Վերականգնվելու է 1995 թվականից ի վեր արցախաբնակ ՀՀ քաղաքացիների համապետական ընտրությունների միջոցով երկրի բարձրագույն իշխանությունը ձեւավորելու կոպտորեն ոտնահարված հիմնարար սահմանադրական իրավունքը: Այս բոլոր քայլերը կատարվելու են առանց նվազագույն իսկ ցուցադրականության կամ հռչակագրային պերճությունների: Ստորագրվելու են ՀՀ վարչատարածքային բաժանման մասին Նոր օրենքը եւ գերատեսչական մի շարք այլ ակտեր ու հանձնարարականներ...

Արցախի միացումն ու միջազգային արձագանքը

Ի պատասխան Արցախը Հայաստանի Հանրապետության մացած մասից տարանջատող անհարկի մի շարք ակտերի աշխատանքային ընթացակարգով տեղի ունենալիք չեղարկման, սպասելի են համարյա բոլոր համաշխարհային դերակատարների ցուցադրական դժգոհության (մեծամասամբ հերթապահ կարգի) դրսևորումներ, լուրջ ջղաձգումներ Բաքվում, Անկարայում, Պակիստանում եւ իսլամական մի քանի այլ երկրներում, թերեւս՝ որոշակի լարվածության աճ շփման գծում: Չուզահեռաբար տեղի կունենան Հայաստանի տարածաշրջանային դերի վերազնահա-

տում եւ հեղինակության աճ: Ընդ որում՝ Հայաստանի արտաքին քաղաքականությունն ու բանակցային գործընթացը վերջապես կբերվեն ազգային անվտանգության հիմնարար հրամայականների եւ առկա անվերափոխելի իրողությունների դաշտ: Ադմուկը հետզհետե կմարի, իսկ մեր տարածաշրջանային դիրքերը միանգամայն կամրապնդվեն:

Այն առարկությունը, թե Հայաստանին Արցախի միացումը վերահաստատող ակտերը միջազգային հանրության համար երբեք ընդունելի չեն լինի՝ անտեղի է արդեն իսկ այն պատճառով, որ Արցախի անկախությունն էլ այդ Նույն միջազգային հանրությունը ցայսօր չի ճանաչել: Եվ այն երբեք չի ճանաչի Հայաստանի համար շահեկան տարբերակով (դա սկզբունքորեն անհնար է): Մինչդեռ միացումը, ի հեճուկս ժամանակավրեպ քաղաքագիտական առասպելաբանությունների, այս խնդիրը լուծում է ինքնաբերաբար եւ փաստացի կերպով:

Պետք է հիշել, որ Հայաստանի Հանրապետությունը միջազգայնորեն լիովին ճանաչված պետությունն է, Նաեւ՝ ՄԱԿ անդամ: Հայաստանն ունի անկախ, ինքնիշխան պետության միջազգայնորեն ճանաչված տիտղոս: Տարբեր երկրներ կարող են սեփական պատկերացումներն ունենալ Հայաստանի տարածքային տարողության վերաբերյալ: Շատերը, ինչպես օրինակ՝ Մեծ Բրիտանիան, ՀՀ անկախությունը ճանաչելիս կարող են հատուկ նշել, որ Արցախը Հայաստանի մաս չէն համարում: Միանգամայն բնական վիճակ, որն, այնուամենայնիվ, ինքնին հյուժիչ պատժամիջոցներ կամ ռազմական միջամտություն չի ենթադրում, եթե Նախապես առկա չէ համաշխարհային եւ տարածաշրջանային ուժի կենտրոնների կամ նրանց մի մասի (տվյալ պահին՝ գերիշխող) միջեւ հստակ դիրքորոշում՝ որեւէ տարածքային փոփոխություն ամեն գնով չհանդուրժելու, կանխելու կամ վերաձեւելու վերաբեր-

յալ: Օրինակ՝ Գոլանի բարձունքների իսրայելապատկանությունը, Քաշմիրի հյուսիսային հատվածի պակիստանապատկանությունը եւ նմանատիպ այլ նախադեպեր միջազգայնորեն դեռ լիովին «ճանաչված» չեն: Բայց արտաքին աշխարհի համար այս *դե ֆակտո* նախադեպերը տասնամյակներով հանդուրժվում են՝ մինչեւ անորոշ պատեհ ապագայում դրանց իրավական ճանաչումը: Միաժամանակ, չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր երկրում, որպես կանոն, գործնականում գերակա է ներքին ազգային օրենսդրությունը: Որեւիցե ընկերություն այն պահից, երբ ոտք է դնելու Հայաստան, հարկավ ստիպված է լինելու առաջնորդվել ներհայաստանյան օրենսդրությամբ, համաձայն որի՝ Արցախը Հայաստանի ինքնիշխան տարածքի մասն է: Այսօր էլ օտարերկրյա դեսպանատները լռելյայն ճանաչում են այս իրողությունը՝ ընդունելով Արցախի բնակչության՝ ՀՀ քաղաքացի լինելու իրավական իրողությունը: Ասենք, քջջային կապի օպերատորը՝ մուտք գործելով Հայաստան, չի կարողանա հրաժարվել ապահովել իր ծառայություններն այն տարածքում, որը ներհայաստանյան իրավունքի տեսանկյունից հռչակված է պետության ինքնիշխան տարածքի մաս:

Մոտակա մեկ-երկու տասնամյակների ընթացքում աշխարհում կուտակվելու են միջազգային իրավունքի արդի խմբագրությանը չհամապատասխանող այնքան փաստացի «չեղումներ»՝ տարածքային վերաձեւումներ, նախկին պետությունների տրոհումներ եւ այլն, որ դրանց ճանաչումն ինքնին անխուսափելի է դառնալու: Միջազգային իրավունքն իր բնույթով ու գործառույթներով հարկավ պետք է պահպանողական լինի, բայց այն եւս որոշակի փոխում վերահամապատասխանեցվելու է համաշխարհային զարգացումներից առաջացած ճգնաժամային քանակի ու որակի նոր իրողություններին:

Վերջաբանի փոխարեն

Արցախի միացումը որպես պետարավական իրողություն, հրապարակավ պահպանելու դեպքում Հայաստանը 1991-ին կարող էր ձեւավորել ուրույն միջազգային նախադեպ: Շատ ցավալի է, որ Երրորդ հանրապետության իշխանություններն այդ սկզբունքայնությունն ու համարձակությունը չունեցան: Այսօր էլ պետության մարմնի վրա շահամոլ ապապետական մակաբուծումից դուրս որեւէ փաստացի սկզբունք չունեցող ներկայիս վարչակարգը վարում է առավելագույնս անողնաշար արտաքին քաղաքականություն Արցախյան հիմնախնդրին առնչվող ոլորտում: Նրանք ձգտելու են գնալ արտաքին ուժի կենտրոններին կրավորաբար հաճոյանալու՝ հայանպաստ որեւէ դիրքորոշում կամ նախաձեռնողականություն բացառող ճանապարհով: Երրորդ հանրապետության ուղիղ վարչազաղափարական ժառանգականությամբ միմյանցից ածանցված իշխանական համակարգից ինքնիշխան պետականակերտմանը եւ ցեղասպանությամբ ոտնահարված ազգային-պետական իրավունքների վերականգնմանը միտված որեւէ քայլ ակնկալելը միամտություն է: Ինքնիշխան եւ իրավական պետություն կերտելու նախադրյալներն ի հայտ կգան միայն համակարգային իշխանափոխությունից, ապագադրությամբ գործընթացի մեկնարկից եւ երկրում ազգային-պետական իշխանության հաստատումից հետո:

ՀՂՈՒՄՆԵՐ

- 1 Մեծ Հայքի Արշակունյաց շրջանին բնորոշ պետության ներքին կյանքի, թագավորական և նախարարական տների կառավարչական իրավասությունների բաշխման ու հավասարակշռման «պարթեադիր» ավանդույթները լավագույնս ուսումնասիրված են Փարվանեհ Փուրշարիաթի հետեյալ մենագրությունում՝ Parvaneh Pourshariati, Decline and Fall of the Sasanian Empire. The Sasanian-Parthian Confederacy and the Arab Conquest of Iran, London, 2008: Գրքի՝ արդի քաղաքագիտական «աչքով» ընթերցումն ակներեւ հստակությամբ ցույց է տալիս հայոց ազգային հասարակություններում՝ իշխանական իրավասությունների համակարգման և պետական իշխանության փոխտեմայության հիշյալ ժամանակաշրջանից սերող և ցայսօր վերապրող հիմնարար մի շարք ավանդույթների կենսունակությունը:
- 2 Այսինքն՝ narrative՝ փոխադարձաբար շաղկապված իրական կամ երեւակայական իրադարձությունների միաձուլյ պատմություն, որը ներկայանում է գրավոր կամ բանավոր բառերի և պատկերավոր նկարագրությունների որոշակիորեն կայուն հաջորդականությամբ:
- 3 «Տարապայման մտամուլություն» բառակապակցությունը 19-րդ դարի արեւմտահայ կրոնափոխության կապակցության մեջ լայնորեն տարածված եզրույթ էր, որը կիրառվում էր փաստարկման կլուռ տրամաբանական մեթոդաբանությունից զուրկ, մտացածին, սոր կամ միանգամայն արհեստական երեւույթներին կեղծ պահպանողականության մղմամբ վաղեմի կամ անվիճարկելիորեն արմատական արժեք ընծայելու մտասեւեռումը բնութագրելու համար:
- 4 1994թ. հրադարարի կնքումից հետո հրապարակային քաղաքական դիրքորոշումներում և հակրության շրջանում գերիշխում էր այն համոզմունքը, թե նախկին ԼՂԻՄ շուրջ ազատագրված տարածքների մեծ կամ մի մասը կարգավորման գործընթացի վճռորոշ փուլում պետք է հանձնվի Ադրբեջանին՝ միջազգային հակրության և Բաքվի կողմից Արցախի անկախ պետական կարգավիճակի ճանաչման, անվտանգության միջազ-

- գային պատշաճ երաշխիքների ստացման և ռազմական հետագա ունեցումների բացառման դիմաց: Տարածքային զիջումների անհնարինության և կործանարար հետեւանքների մասին գերազանցապես ոչ հրապարակայնորեն արտահայտվող անձինք սակավաթիվ էին և ընդհանուր ֆոնին՝ համարյա աննկատ: 2001-2006 թթ. «Ազատագրված տարածքների պաշտպանություն» նախաձեռնության և փորձագիտական շրջանակի պատասխանատու ներկայացուցիչների ջանքերով «տարածք չհանձնելու» դիրքորոշումը ապալուսանցթայնացվել և ձեռք է բերել հանրային ճանաչելիություն, լայն ընդունելություն և քաղաքական որոշակի ազդեցիկություն: Այս շրջանի փորձագիտական աշխատանքի յուրօրինակ պատկեր էր քաղաքագիտության դոկտոր Արմեն Այվազյանի խմբագրությամբ 2006թ. լույս տեսած «Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախյան հիմնախնդիրը» ժողովածուն: Տես՝ http://www.hayq.org/upload/files/LiberatedTerritory_ARM.pdf Երրորդ փուլը, որը պայմանականորեն ներառում է 2006-2011 թթ. միջև ընկած ժամանակահատվածը, «տարածք հանձնելու» դիրքորոշման նկատմամբ հանրային անհանդուրժողականության հաստատման շրջան էր, որի ավարտին սեփական ինքնուրույն քաղաքական վարկանիշով մտահոգված քաղաքական գործիչներն այլևս խուսափում էին հրապարակավ խոսել տարածքային զիջումների նպատակահարմարության կամ անխուսափելիության մասին: Նույն շրջանում բացառությամբ ՀՀ նախագահի, ԱԺ-ի և բարձրագույն իշխանության այլ մարմիններին պատկանող կայքերի, «ճիշտ», այսինքն՝ ներկայիս Արցախն ամբողջությամբ պատկերող քարտեզը ստացել էր համընդհանուր տարածում՝ Ազգային Ատլասում, Կաղաստրային փաստաթղթերում, դպրոցական դասագրքերում և հեռուստատեսային եթերում: Ներկայումս «տարածք հանձնելու» թեման զգալիորեն արտամղվել է մինչև իսկ իշխանական շրջանակի հրապարակային հռետորաբանությունից, բայց ընդլայնվող բանակցային գործընթացից:
- 5 Արցախի անկախության ճանաչման հայեցակարգի աննպատակահարմարության, դրա վերահաս միջնաժամկետ ու հեռահար սպառնալիքների մասին

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը ողջունեց Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից ճեղասպանության ժխտումը քրեականացնող Նոր օրինագծի ընդունումը: «Միանգամայն ողջունելի է Ֆրանսիայի կառավարության նախաձեռնած օրինագիծը, որը միաձայն հաստատվեց խորհրդարանի կողմից՝ համապատասխան որին փոփոխություններ են մտցվում Ֆրանսիայի Հավասարության եւ քաղաքացիության օրենքի մեջ՝ քրեականացնելով ցեղասպանությունների, մարդկության դեմ հանցագործությունների ժխտումը եւ, համապատասխանաբար, նաեւ Հայոց ցեղասպանության ժխտումը», - հայտարարել է Հայաստանի արտգործնախարարը:

3 հուլիսի

Նշվեց Հայ առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկը՝ Զրիստոսի Պայծառակերպության տոնը

(Վարդավառը): Վարդավառը շարժական տոն է: Հայ եկեղեցին Զրիստոսի Պայծառակերպությունը տոնում է Չառլից 98 օր հետո՝ հունիսի 28-ից մինչեւ օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

4 հուլիսի

ՀԱՊԿ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարները Երեւանում հանդես եկան դարաբաղյան հակամարտությանը վերաբերող համատեղ հայտարարությամբ, որում մասնավորապես նշված է. «Հաստատելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, աջակցություն ենք հայտնում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ ուղղված հակամարտության կարգավորմանը՝ միջազգային իրավունքի սկզբունքներով, ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի դրույթների, մասնավորաբար ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, պետությունների տարածքային ամբողջականության, իրավահավասարության եւ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հիման վրա»: Հայտարարությունը ստորագրել են Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի եւ Տաջիկստանի արտաքին գործերի նախարարները:

7 հուլիսի

Հովիկ Աբրահամյանի գլխավորած կառավարական պատվիրակությունն աշխատանքային այցով մեկնեց Ռուսաստանի Դաշնություն:

Հայաստանի կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ՝ Սանկտ Պետերբուրգում Աբրահամյանը հուլիսի 8-ին կմասնակցի Հա-

յաստանի եւ Ռուսաստանի միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստին:

8 հուլիսի

Աշխատանքային այցով Վարշավայում գտնվող Սերժ Սարգսյանը երեկոյան հանդիպում ունեցավ Միացյալ Նահանգների պետքարտուղար Ջոն Զերրիի հետ: Սարգսյանը Լեհաստանում մասնակցում էր ՆԱՏՕ-ի անդամ եւ ոչ անդամ պետությունների ու կառավարությունների ղեկավարների ձեռագրված հանդիպմանը:

ՆԱՏՕ-ի գագաթաժողովի շրջանակում կայացավ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի եւ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի հանդիպումը: Reuters լրատվական գործակալության փոխանցմամբ՝ երկու երկրների ղեկավարները քննարկեցին Բուկրեստի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւի ընդունումից հետո Գերմանիայի եւ Թուրքիայի հարաբերություններում առաջացած լարվածությունը հաղթահարելու ուղիները:

11 հուլիսի

Իրանի նախարարների կաբինետը որոշում ընդունեց «Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ մուտքի արտոնագրային ռեժիմի վերացման վերաբերյալ»: Կաբինետի կայացրած որոշմամբ՝ մուտքի արտոնագիր այլեւս անհրաժեշտ չի լինի դիվանագիտական ու սովորական անձնագիր, ինչպես նաեւ ճամփորդական փաստաթուղթ ունեցող՝ 33-ի եւ Իրանի քաղաքացիների համար: Ավելի վաղ Իրանի ու Հայաստանի արտգործնախարարները ստորագրել էին համաձայնագիր՝ երկու պետությունների միջեւ վիզային պայմանակարգի վերացման վերաբերյալ: Հայաստանի եւ Իրանի քաղաքացիները, ովքեր ունեն սովորական կամ դիվանագիտական անձ-

նագրեր, կարող են մյուս երկրում մնալ առավելագույնը 90 օր:

12 հուլիսի

Նախագահ Սերժ Սարգսյանը ստորագրեց Ազգային ժողովի ընդունած՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ, «Իրավական ակտերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքները: Այդ մասին հաղորդում է Հայաստանի նախագահի աշխատակազմի հասարակայնության եւ տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչությունը՝ հիշեցնելով, որ Ազգային ժողովը հունիսի 29-ին նախագիծն ընդունել էր առաջին, իսկ հաջորդ օրը՝ երկրորդ ընթերցմամբ:

14 հուլիսի 2016թ.

Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանն ընդունեց ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջել Կասպրիզիկին: «Արմենարեսի» փոխանցմամբ՝ հանդիպմանը քննարկվել են Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեյջանի զինված ուժերի շփման գծում տիրող իրավիճակին վերաբերող մի շարք հարցեր: ԼՂ ԱԳՆ կայքի տեղեկացմամբ՝ Անջել Կասպրիզիկին այսօր ընդունեց նաեւ ԼՂ արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանը: Ի մասնավորի՝ անդրադարձ կատարվեց ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ գրասենյակի ընդլայնման հարցին: Երկուստեք կարելի էրեցին շփման գծում իրավիճակի կայունության պահպանումը:

16 հուլիսի

Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂ նախագահ Բակո Սահակյանի եւ աշխատանքային այցով Ղարաբաղ մեկնած՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը: ԼՂ նախագահի պաշտոնական կայքէջի փոխանցմամբ՝ «քննարկվել են հայկական երկու պետությունների փոխգործակցությանը եւ դրա ընդլայնմանը վերաբերող մի շարք հարցեր»:

17 հուլիսի

Ազգային անվտանգության ծառայությունը հաղորդագրություն տարածեց, որում, մասնավորապես, ասվում է. «Այսօր առավոտյան մի խումբ զինված անձինք մուտք են գործել ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածք եւ բռնության սպառնալիքով պահում են այնտեղ գտնվող անձանց»: Հաղորդագրության համաձայն՝ զինված խմբի հետ վարվում են բանակցություններ՝ իշխանություններին նրանց խաղաղ հանձնելը կազմակերպելու համար:

«Հիմնադիր խորհրդարանի» անդամ Վարուժան Ավետիսյանը ֆեյսբուքյան իր էջում հայտարարեց, որ իրենք ապստամբություն են սկսել եւ ոստիկանական շենք գրավել: Ավետիսյանի խոսքով՝ ոստիկանությունը դիպակահարներ է տեղակայել հարակից շենքերի տանիքներին՝ փորձելով գրոհել իրենց դիրքերը, ինչի հետեւանքով կան վիրավորներ: Ապստամբները ոստիկանության սահմանափակ թվով ծառայողների ազատման դիմաց պահանջում էին ազատ արձակել մոտ մեկ ամիս առաջ մի խումբ անձանց կողմից ապօրինի կերպով զենք-ռազմամթերք ձեռք բերելը, փոխադրելը եւ պահելը կազմակերպելու մեղադրանքով կալանավորված ժիրայր Սեֆիյանին:

18 հուլիսի

«Խաղաղության կոչով, բոլոր քաղբանտարկյալների ազատության կոչով» երթ տեղի ունեցավ Երեւանի կենտրոնում: Ազատության հրապարակում հավաքված քաղաքացիները քննարկում էին, թե ինչպես կարելի է հանգուցալուծել ստեղծված իրավիճակը: «Ութի Հայաստան» նախաձեռնության անդամ Դավիթ Սանասարյանը խոսում էր բարձրախոսով, երբ նրան իր մոտ հրավիրեց Երեւանի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանը եւ հայտնեց, որ երթ դեպի Խորենացու փողոց չի կարող

տեղի ունենալ: Դրանից հետո Դավիթ Սանասարյանին բերման ենթարկեցին: Այնուհետեւ անհասկանալի պատճառներով ոստիկանության եւ հավաքված քաղաքացիների միջեւ բախում տեղի ունեցավ, որի ընթացքում եւս մի քանի քաղաքացիներ բերման ենթարկվեցին: Իսկ Հյուսիսային պողոտայում ոստիկանները շղթա էին կազմել՝ թույլ չտալով շարունակել երթը:

19 հուլիսի

«Ժառանգություն» կուսակցությունը տարածեց հայտարարություն՝ դատապարտելով ոստիկանության վերջին երեք օրերի «ապօրինի գործողությունները»: «Տեղի են ունենում մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների կոպիտ խախտումներ, այդ թվում՝ «Ժառանգություն» կուսակցության անդամ Դավիթ Սանասարյանի նկատմամբ: Մենք դատապարտում ենք իշխանությունների եւ նրա հանցագործ կամայականություններն իրականացնող ոստիկանության գործունեությունը», - նշված է կուսակցության հայտարարությունում:

20 հուլիսի

Խորենացու փողոցում բախում տեղի ունեցավ ավելի քան հարյուր ցուցարարների եւ ՊՊՃ գունդ տանող տարածքը արգելափակած ոստիկանության ուժերի միջեւ: Այն բանից հետո, երբ ցուցարարների շարքերից սկսեցին քարեր նետել եւ գրոհի ձեռնարկել ոստիկանների դիրքերի վրա, ոստիկանությունը արցունքաբեր գազի, վահանների եւ մահակների կիրառմամբ ցրեց հավաքվածներին: Տեղի ունեցած բախումների արդյունքում եղան վիրավորներ:

21 հուլիսի

Մոսկվան դատապարտեց Երեւանում ոստիկանության շենքի գրավումը եւ իր աջակցությունը հայտնեց Հայաստանի իշխանությունների կատարած քայլերին:

«Մենք անընդունելի ենք համարում նման քրեական դրսեւորումները, որոնք անմիջական սպառնալիք են հանրապետության քաղաքացիների կյանքին ու անվտանգությանը», - հայտարարեց ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը՝ հուլյս հայտնելով, որ Հայաստանի իշխանությունների ձեռնարկած քայլերը թույլ կտան ամենակարճ ժամանակում կարգավորել իրավիճակը եւ պատժել մեղավորներին:

22 հուլիսի

Հայաստանի նախագահն անցկացրեց խորհրդակցություն՝ ԱԱԾ-ի, Ոստիկանության, Դատախազության եւ քննչական մարմինների ղեկավարների մասնակցությամբ: Երկրի ղեկավարին ներկայացվեցին հուլիսի 17-ին Հայաստանի ոստիկանության ՊՊՇ գնդի տարածքում տեղի ունեցած զինված հարձակման եւ դրան հաջորդած իրադարձությունների մանրամասները, ինչպես նաեւ իրականացվող միջոցների արդյունքները: Սերժ Սարգսյանն ընդգծեց, որ ստեղծված իրավիճակին խաղաղ հանգուցալուծում տալու համար պետք է ձեռնարկվեն հնարավոր բոլոր միջոցները, կարելուրեց ենթադրյալ բոլոր իրավախախտումների համակողմանի եւ անաչառ քննությունը, ինչպես նաեւ մեղավորների համար պատժի անխուսափելիության ապահովումը: «Հայաստանում բռնի ուժով, հարձակումով եւ պատանդ վերցնելով հարցեր չեն լուծվելու», - հայտատարեց Սարգսյանը՝ ՊՊՇ գնդի տարածքը գրաված զինյալներին կոչ անելով պատանդներին ազատ արձակել եւ վայր դնել զենքը:

25 հուլիսի

Բանտում գտնվող «Հիմնադիր խորհրդարանի» առաջնորդ Ժիրայր Սեֆիլյանը իր պաշտպան Արա Չաբարյանի միջոցով «Ազատությանը» հայտնեց, թե զինված խմբի հետ բանակցող Լեռնային Ղարաբաղի պատգամավոր Վիտալի Բալասանյանը ստում է՝ հայտարարելով, թե Սեֆիլյանն իբր պատրաստ

է հրաժարվել Սերժ Սարգսյանի հրաժարականի պահանջից: Չաբարյանի փոխանցմամբ՝ Սեֆիլյանը ցնցված է որոշ հայտարարություններից, որ իր անունից արել էր Վիտալի Բալասանյանը: «Իմ պաշտպանյալը երկու անգամ շփվել է Բալասանյանի հետ, եւ նրա տպավորությամբ՝ վերջինս ոչ թե միջնորդի առաքելություն է իրականացնում, այլ փաստացի ստանձնել է Սերժ Սարգսյանի պաշտպանությունը», - «Ազատությանն» ասել է Չաբարյանը:

26 հուլիսի

Ի պաշտպանություն ՊՊՇ գնդի տարածքը գրաված «Սասնա ծռեր» խմբի տղաների՝ Վանաձորի կենտրոնական հրապարակում արդեն երկրորդ օրն անընդմեջ հավաքվող մի խումբ վանաձորցիներ իրազեկման երթ անցկացրին՝ կոչ անելով համաքաղաքացիներին միանալ իրենց: Շարժվելով Վանաձորի կենտրոնական փողոցներով՝ ցուցարարները պարզել էին «Սերժիկ, հեռացիր», «Լոռին սատարում է Սասնա ծռերին», «Սասնա ծռերը տեռորիստներ չեն», «Ազատություն Ժիրայր Սեֆիլյանին», «Ազատություն Գեորգ Սաֆարյանին», «Ո՛չ սոին ու կեղծիքին» վերտառությամբ ցուցապաստառներ: «Հիմնադիր խորհրդարանի» վանաձորցի աջակիցների հավաստմամբ՝ Երեւանում իրավիճակի սրման դեպքում իրենք պատրաստ են անհնազանդության ակցիաներ սկսել:

27 հուլիսի

Խորենացու փողոցից բերման ենթարկված քաղաքացիների թիվը գնալով աճում է: Ոստիկանները փորձեցին բերման ենթարկել նաեւ դերասանուհի, ռեժիսոր Արսինե Խանջյանին, բերման ենթարկվեցին «Ժառանգության» փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանը, Երեւանի ավագանու անդամ Դավիթ Սանասարյանը: Առավոտից բերման ենթարկվածների թիվն արդեն անցնում էր 100-ից: Երեւանի ոստիկանապետ Աշոտ

Կարապետյանը Աժ պատգամավոր Նիկոլ Փաշինյանին փոխանցեց, որ ոստիկանական գործողություններն ուղղված են «արյունահեղության կանխմանը»: Խորենացու փողոցի հանրահավաքները համակարգող խումբն այսօր ժամը 7-ին այստեղ կրկին հանրահավաք էր հրավիրել:

Նույն օրը՝ ի աջակցություն Երեւանի ցուցարարների, տասնյակ գյումրեցիներ երթով անցան Գյումրիի կենտրոնական փողոցներով՝ իշխանություններին ցույց տալով «դեղին քարտ»: Երթի մասնակիցներն այսկերպ, մասնավորապես, պահանջում էին դադարեցնել անօրինական ձերբակալությունները:

28 հուլիսի

Ձերբակալվեց «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Ալեք Ենիգոմշյանը: Նրա փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի խոսքով՝ Ենիգոմշյանը կասկածվում է հուլիսի 17-ին ոստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊՇ) գնդի տարածքը գրաված զինված խմբին օժանդակելու մեջ: Փաստաբանը միաժամանակ տեղեկացրեց, որ նախաքննական մարմինը խախտումներ է թույլ տվել, ինքը դիմել է ՀՀ օմբուդսմենին եւ այժմ պատրաստվում է նրա հետ մտնել մեկուսարան՝ խախտումները վերացնելու համար:

29 հուլիսի

Սարի թաղում ոստիկանության եւ ցուցարարների բախումը լուսաբանող լրագրողներ Կարլեն Ալախյանն ու Հովհաննես Մովսիսյանը հարձակման ենթարկվեցին քաղաքացիական հագուստով անձանց կողմից: Տեղի ունեցածի հետեւանքով խոչընդոտվեց «Ազատության» աշխատանքը, Սարի թաղից ուղիղ հեռարձակումը դադարեցվեց: Քիչ անց ոստիկաններն անակնկալ կերպով հատուկ միջոցներ գործադրեցին Սարի թաղում հավաքված ցուցարարների դեմ, որոնք այստեղ էին եկել Ազատության հրապարակում ավելի վաղ կայացած

հանրահավաքից հետո: Մինչ այդ՝ ՊՊՇ գնդի տարածքում պայթյուններ էին տեղի ունենում, եւ ցուցարարները հավաքվել են իրենց աջակցությունը հայտնելու հուլիսի 17-ից ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածքը գրաված «Սասնա ծռեր» զինված խմբի անդամներին:

30 հուլիսի

Քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում հարուցվեց քրեական գործ՝ հուլիսի 29-ի ուշ երեկոյան Երեւանի եւ Նուբարաշեն վարչական շրջանում տեղի ունեցած անկարգությունների դեպքերի առթիվ: Ներկայացված նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ նույն օրը՝ ժամը 22:30-ի սահմաններում, Երեւանի եւ Նուբարաշեն վարչական շրջանում մի խումբ անձինք կազմակերպել են զանգվածային անկարգություններ, որոնց ընթացքում բռնություն է գործադրվել տվյալ տարածքում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողների նկատմամբ: «Չանգվածային անկարգությունները կազմակերպելու ու դրանց մասնակցելու կասկածանքով ձերբակալվել է 23 անձ, որոնց թվում՝ Արմեն Մարտիրոսյանը եւ Անդրիաս Ղուկասյանը», - մասնավորապես նշված է Քննչական կոմիտեի դեպարտամենտի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի տարածած հաղորդագրությունում:

31 հուլիսի

Ըստ Ազգային անվտանգության ծառայության հաղորդագրության՝ հուլիսի 17-ից ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածքը գրաված «Սասնա ծռեր» զինված խմբավորման անդամները վայր են դրել զենքը եւ հանձնվել իշխանություններին: «Տարածքի ազատագրմանն ուղղված հակաահաբեկչական օպերացիան ավարտվել է. ՀՀ իրավասու իրավապահ մարմինների հատուկ նշանակության

ստորաբաժանումներն իրենց հետեւողական ու համաձայնեցված գործողություններով ստիպել են զինված խմբի անդամներին վայր դնել զենքը եւ հանձնվել իշխանություններին: Ձերբակալվել է 20 ահաբեկիչ: ՊՊՇ գնդի տարածքն ամբողջությամբ ազատագրված է»,- տեղեկացնում է ԱԱԾ-ն՝ հերթական անգամ օգտագործելով «ահաբեկիչ» ձեւակերպումը, որից բանակցությունների ընթացքում զերծ էր մնում:

1 օգոստոսի

Երեւանի Խորենացու փողոցում եւ Սարի թաղում հուլիսի 29-30-ին տեղի ունեցած խաղաղ հավաքների ընթացքում քաղաքացիների նկատմամբ ոստիկանության ծառայողների գործադրած բռնության, նրանց կողմից հատուկ միջոցների կիրառման, դրանց հետեւանքով հավաքների մասնակիցներին, ինչպես նաեւ Սարի թաղի բնակիչներին պատճառված վնասների վերաբերյալ հաղորդումներն ու կյուրթերը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանն ուղարկել է Հայաստանի գլխավոր դատախազություն՝ քրեական հետապնդման հարուցման հարցը լուծելու նպատակով: Այսպիսի հաղորդագրություն է տարածել ՀՀ օմբուդսմենի գրասենյակը: Իսկ Արաբկիր եւ Զանաբեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ՝ «Ժառանգություն» կուսակցության անդամներ Արմեն Մարտիրոսյանի, Հովսեփ Խուրշուդյանի, Դավիթ Սանասարյանի, «Նոր Հայաստան»-ից Անդրիաս Ղուկասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվեց կալանավորումը՝ երկու ամիս ժամանակով:

2 օգոստոսի

Իսրայելի խորհրդարանի՝ Զնեսեթի կրթության եւ սպորտի հանձնաժողովը պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, հաղորդում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Հովնան Բաղդասարյանը: Ըստ

նրա, հանձնաժողովը նաեւ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչ է արել Զնեսեթին ու Զնեսեթի խոսնակ Յուլի Էդելշտեյնին, Իսրայելի կառավարությանը:

3 օգոստոսի

Ազատության հրապարակում «Սասնա ծռեր» խմբի աջակիցների կազմակերպած հանրահավաքից հետո մասնակիցները երթով շարժվեցին դեպի Նախագահական նստավայր՝ վանկարկելով «Սասնա ծռեր» խմբի անդամների անունները եւ հնչեցնելով իրենց պահանջները՝ ազատ արձակել քաղաքատարկյալներին, ոչ մի զիջում Ղարաբաղի հարցում: Նույն օրվա գիշերը կալանավորվեցին Հայաստանի ոստիկանության ՊՊՇ գնդի տարածքը գրաված «Սասնա ծռեր» զինված խմբի անդամներից Վարուժան Ավետիսյանը, Արայիկ Խանդոյանը, Վարդան Գերավետյանը, Սմբատ Բարսեղյանը, Սերգեյ եւ Արեգ Կյուրեղյանները: Նրանք մեղադրվում են ապօրինի կերպով զենք-զինամթերք ձեռք բերելու, կրելու, պատանդ պահելու մեջ: Խմբի մյուս անդամներին եւս մեղադրանքներ են առաջադրվում:

4 օգոստոսի

Հրաժարական տվեց Հայաստանի գլխավոր դատախազ Գեորգ Կոստանյանը: Դատախազությունում այսօր տեղի ունեցած կոլեգիայի նիստում Կոստանյանը տեղեկացրեց, որ առողջական խնդիրների պատճառով դիմել է Հայաստանի Նախագահին՝ խնդրելով ընդունել գլխավոր դատախազի պաշտոնից ազատվելու վերաբերյալ իր դիմումը: Նրա խոսքով՝ Նախագահի կողմից դիմումն ընդունվել է, եւ ինքը 2016թ. օգոստոսի 4-ից վայր է դնում Հայաստանի գլխավոր դատախազի իր լիազորությունները:

5 օգոստոսի

Երեւանի պազանու «Բարեւ Երեւան» խմբակցությունը նամակով դիմեց Սարդու իրավունքների պաշտպան Ար-

ման Թաթոյանին՝ խնդրելով նրա աջակցությունը «Բարեւ Երեւան» խմբակցության անդամներ Արմեն Մարտիրոսյանի եւ Դավիթ Սանասարյանի նկատմամբ խափանման միջոցը փոխելու հարցում: Հետեւելով նրանց փաստաբանների հիմնավորումներին՝ «Բարեւ Երեւան»-ը համոզմունք է հայտնում, որ «Մարտիրոսյանի եւ Սանասարյանի նկատմամբ հետապնդում է իրականացվում նրանց քաղաքական հայացքների համար, որը հակասահմանադրական է:

6 օգոստոսի

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունեց Հայաստանում Իրանի արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Զազեմ Սաջադիին: Կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ՝ գրուցակիցները քննարկել են հայ-իրանական հարաբերություններին առնչվող մի շարք հարցեր:

Կողմերը, մասնավորապես, անդրադարձել են Հայաստանի եւ Իրանի կառավարությունների միջեւ վերջերս ստորագրված՝ քաղաքացիների՝ առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին համաձայնագրին:

8 օգոստոսի

Հայաստանի ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ հրավիրեց աշխատանքային խորհրդակցություն, որի ընթացքում ներկայացրեց համակարգում կատարված կադրային փոփոխությունները: Գասպարյանը մասնավորապես տեղեկացրեց, որ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության պետ Աշոտ Կարապետյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից ու գրանցվել կադրերի ռեզերվում, իսկ նրա փոխարեն Երեւան քաղաքի վարչության պետ է նշանակվել ոստիկանության գնդապետ Սարգիս Մարտիրոսյանը, ով մինչ այս ղեկավարում էր ոստիկանության Շիրակի մարզային

վարչությունը: Վլադիմիր Գասպարյանի հրամանով կատարվել են նաեւ կադրային այլ փոփոխություններ:

8 օգոստոսի

Արմավիր քրեակատարողական հիմնարկից ազատ արձակվեց «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Ալեք Ենիգոմյանը: Դատախազի որոշմամբ նրա խափանման միջոցը՝ կալանավորումը, վերացվեց եւ որպես խափանման միջոց ընտրվեց չեռանալու մասին ստորագրությունը:

10 օգոստոսի

Սերժ Սարգսյանը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հրավերով մեկնեց Մոսկվա: Ըստ «Նովոստի» լրատվական գործակալության, Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահները քննարկել են դարաբաղյան խնդիրը, երկու պետությունների միջեւ մի շարք ոլորտներում քաղաքական, առեւտրատնտեսական, հումանիտար, երկկողմ փոխգործակցության օրակարգի առանցքային հարցեր, ինչպես նաեւ Եվրասիական տարածքում ինտեգրացիոն գործընթացների զարգացմանը վերաբերող հարցեր: Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների մամլո ծառայությունները նույն հաղորդագրությունն են տարածել, որում չի հիշատակվում դարաբաղյան հիմնախնդիրը:

10 օգոստոսի

Նախագահ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ լուծարվեց Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմը:

12 օգոստոսի

Աշխատանքային այցով Բրազիլիայի Դաշնային Հանրապետությունում գտնվող Սերժ Սարգսյանը ժամանեց երկրի մայրաքաղաք Բրազիլիա: Դիմավորման պաշտոնական արարողությունից հետո կայացավ Հայաստանի Հանրապետության նախագահի հան-

դիպումը Բրազիլիայի Դաշնային Հանրապետության նախագահի պաշտոնակատար Միշել Տեմերի հետ: Սարգսյանը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար եւ շնորհավորել Միշել Տեմերին՝ Օլիմպիական խաղերը Բրազիլիայում հյուրընկալելու կապակցությամբ: Այնուհետեւ երկու երկրների ղեկավարները մտքեր են փոխանակել Հայաստանի եւ Բրազիլիայի միջեւ տարբեր ոլորտներում փոխգործակցության եւ հարաբերությունների հետագա ամրապնդման ու խորացման հնարավորությունների շուրջ:

13 օգոստոսի

Պարեկապահակային ծառայության գնդի տարածքի գրավման օրը՝ հուլիսի 17-ին, հրազենային վերքեր ստացած ոստիկանության ավագ ենթասպա Գագիկ Մկրտչյանն այսօր մահացել է: Այս լուրը «Ազատության» հետ զրույցում հաստատեց Ոստիկանության լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը:

Գագիկ Մկրտչյանը 45 տարեկան էր: Բժիշկները մոտ մեկ ամիս պայքարում էին նրա կյանքը փրկելու համար: Որովայնի շրջանում հրազենային ծանր վիրավորում ստացած ոստիկանը բազմաթիվ վիրահատությունների էր ենթարկվել:

15 օգոստոսի

Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանը հանդիպում ունեցավ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամների հետ: Քննարկվեցին սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին վերաբերող մի շարք հարցեր: Իր խոսքում Բակո Սահակյանը շեշտեց, որ կազմավորումից ի վեր հանձնաժողովը կատարել է ծավալուն աշխատանք ու բազմակողմանի ուսումնասիրություններ, կազմակերպել հանրային քննարկումներ եւ արդյունքում ներկայացվել է մի առաջարկ, որի հիմքում ընկած է նախագահական կառավարման համա-

կարգը: Հանդիպմանը ներկա են եղել ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, վարչապետ Արայիկ Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք:

16 օգոստոսի

Երեւանում անցակացվող ՀԱՊԿ անդամ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի նիստի շրջանակում տեղի ունեցավ Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի եւ Ռուսաստանի պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի երկկողմ հանդիպումը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին միջազգային եւ տարածաշրջանային անվտանգության ապահովման, ինչպես նաեւ երկկողմ ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցության հարցեր: Հանդիպման արդյունքներով երկու պետությունների պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները ստորագրել են «Հայաստանի զինված ուժերի եւ Ռուսաստանի զինված ուժերի միացյալ զորքերի (ուժերի) խմբավորման շահերից բխող ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության ոլորտում իրավիճակի բացահայտման ու գնահատման փոխգործակցության մասին» համաձայնագիրը:

17 օգոստոսի

ՀՀ հավաքականի մարզիկ, հունահռոմեական ոճում 98 կիլոգրամ քաշային կարգում հանդես եկող Արթուր Ալեքսանյանը եզրափակիչում 3:0 հաշվով առավելության հասավ Կուբան ներկայացնող Յասմինի Դանիել Ուզո Կաբրեթրայի նկատմամբ եւ նվաճեց Բրազիլիայում ընթացող ամառային Օլիմպիադայի ոսկե մեդալը: Հայաստանի հավաքականի մեկ այլ ըմբիշ՝ 66 կիլոգրամ քաշային կատեգորիայում հանդես եկող Միհրան Հարությունյանը եզրափակիչում, մարզական մեկնաբանների կարծիքով, բավական վիճելի մրցավարության պայմաններում՝ զիջեց սերբ ըմբիշին եւ վաս-

տակեց արձաթե մեղալ: Գերծանր քաշային կարգում հանդես եկող ծանրորդ Գոռ Մինասյանը երկամարտում 451 կիլոգրամ արդյունքով գրավեց երկրորդ տեղը եւ արժանացավ արձաթե մեղալի: Նախօրեին արձաթե մեղալ էր վաստակել նաեւ ծանրորդ Սիմոն Մարտիրոսյանը: Այսպիսով՝ ՀՀ հավաքականը Բրազիլիայի ամառային Օլիմպիադայում օգոստոսի 18-ի առավոտվա դրությամբ շահած մեկ ոսկե եւ երեք արձաթե մեդալներով ընդհանուր հաշվով 36-րդ տեղում էր:

17 օգոստոսի

Վերաքննիչ դատարանի որոշմամբ՝ կալանավայրից ազատ արձակվեց «ժառանգության» փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանը: Նրա խափանման միջոց կալանքը՝ փոխարինվեց գրավով: Գրավի չափը դատարանը սահմանել էր 1 միլիոն դրամ: Մարտիրոսյանը մեղադրվում էր հուլիսի 29-ին Սարի թաղում զանգվածային անկարգություններ կազմակերպելու մեջ:

18 օգոստոսի

Վերաքննիչ դատարանը հետաձգեց «Նոր Հայաստան» շարժման անդամ Անդրիաս Ղուկասյանի խափանման միջոց կալանավորումը փոխելու հարցի քննությունը:

Ղուկասյանի փաստաբաններ Լուսինե Սահակյանը եւ Երվանդ Վարդյանը նիստը հետաձգելու մասին միջնորդություն ներկայացրին դատարանին՝ նշելով, որ ցանկանում են, որպեսզի Ղուկասյանը նույնպես մասնակցի նիստին:

19 օգոստոսի

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից ազատ արձակվեց «ժառանգություն» կուսակցության մամլո խոսնակ Դավիթ Սանասարյանը: Ավելի վաղ նրան մեկուկես մլն դրամի չափով գրավի դիմաց կալանքից ազատելու մասին որոշում էր կայացրել Վերաքննիչ դատարանը: Սանասարյանը,

որ ձերբակալվել էր զանգվածային անկարգություններ կազմակերպելու կասկածանքով, ավելի ուշ կալանավորվել էր:

20 օգոստոսի

«Երեւանյան ամառ-2016» եռամսյա միջոցառումների ծրագրով Երեւանի քաղաքապետարանը մայրաքաղաքի Լենինգրադյան փողոց-Իսակովի պողոտա ճանապարհահատվածում, ինչպես եւ հատուկ պատրաստված հարակից տարածքում անցկացրեց միանգամից մի քանի էքստրեմալ մարզածեւերի մրցույթ-փառատոն: Մարզաերաժշտական շոուն մեկնարկեց մասնակիցների շքերթով, որից հետո ցուցադրական ելույթներ կազմակերպվեցին հեծանվային սպորտ, կարտինգ, մոտոկրոս եւ այլ մարզածեւերից: Ավտոմոտոշոուն տեւեց մի քանի ժամ: Առաջին անգամ կազմակերպվել էր նաեւ ցեղական վարժեցված շների մրցույթ:

23 օգոստոսի

Շիրակի մարզի ընդհանուր իրավաւտւթյան դատարանը ռուսական 102-րդ ռազմահեւակետի զինծառայող Վալէրի Պերմյակովին դատապարտեց ցմահ ազատազրկման՝ նրան մեղավոր ճանաչելով գյումրեցի Ավետիսյանների յոթ հոգանոց ընտանիքի սպանության, ավազակային հարձակման եւ հայ-թուրքական սահմանը հատելու փորձի մեջ: Հրապարակված վճռում, սակայն, նշված չէ, թե որտեղ է պատիժը կրելու Պերմյակովը:

24 օգոստոսի

Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ընդհանուր իրավասութւթյան դատարանի որոշմամբ՝ 1 մլն դրամ գրավի դիմաց ազատ արձակվեց Հովսէփ Խուրշուդյանը: Ավելի վաղ զանգվածային անկարգությունների մեջ մեղադրվող Խուրշուդյանը դատապարտվել էր երկամսյա կալանքի:

25 օգոստոսի

«Ժառանգություն» կուսակցությունը հանդես եկավ հայտարարությամբ, որում ողջունում է Արմեն Մարտիրոսյանի, Դավիթ Սանասարյանի եւ Յովսեփ Խուրշուդյանի մինչդատական ազատ արձակումը: Միաժամանակ նշվում է, որ դատարանն ամբողջապես չի չեղարկել իր անդամների եւ բոլոր այն քաղաքացիների դատական գործերը, ովքեր մասնակցել են Սահմանադրությամբ լիազորված բողոքի խաղաղ ակցիաներին: Ընդդիմադիր կուսակցությունն իրավապահ մարմիններից պահանջում է զերծ մնալ քաղաքացիների դեմ շինծու մեղադրանքներ ներկայացնելու արատավոր գործելակերպից, ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին, այդ թվում՝ Անդրիաս Ղուկասյանին եւ «Սասնա ծռեր» խմբի գործով կալանավորված Արթուր Սարգսյանին, ով հայտնի է «հաց բերող» բնորոշմամբ:

28 օգոստոսի

Պրահայում անցկացված շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունում իրենց տարիքային խմբերում հաղթողների դափնիների արժանացան հայաստանցի երկու շախմատիստներ: Մինչեւ 12 տարեկանների շրջանում Եվրոպայի չեմպիոն հռչակվեց Մամիկոն Ղարիբյանը՝ 9 հնարավորից վաստակելով 8 միավոր, իսկ մինչեւ 18 տարեկան պատանիների շրջանում՝ Մանուէլ Պետրոսյանը՝ նույնքան հնարավորից ապահովելով 7,5 միավոր:

29 օգոստոսի

Վերաքննիչ դատարանը մերժեց Ժիրայր Սեֆիլյանի խափանման միջոցը փոխելու միջնորդությունը: Սեֆիլյանը կմնա կալանքի տակ: Նա ձերբակալվել էր հունիսի 20-ին՝ ապօրինի զենք կրելու, պահելու, փոխադրելու մեղադրանքով: Օգոստոսի սկզբին այս գործը, ինչպես նաեւ անցյալ տարի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ «զանգվածային անկարգություններ նա-

խապատրաստելու» հողվածով հարուցված քրեական գործերը միացվեցին Պարեկապահակային զնդի գրավման կապակցությամբ հարուցված քրգործին: «Քրեական գործերն իրար միացնելով՝ իշխանություններն ուզում են հաշվեհարդար տեսնել ընդդիմության ներկայացուցիչների նկատմամբ», - հայտարարել է Սեֆիլյանի դատապաշտպան Արա Չաքարյանը:

31 օգոստոսի

Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպեց Հայաստանում Լեհաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Եժի Մարեկ Նովակովսկու հետ՝ վերջինիս նախաձեռնությամբ: Տարածված հաղորդագրության համաձայն՝ հանդիպման ընթացքում քննարկվել են Ընտրական օրենսգրքի փոփոխությունների հետ կապված վերջին զարգացումները, Հայաստանի ներքաղաքական իրավիճակը: Անդրադարձ է եղել ԼՂ հակամարտության կարգավորման ներկա վիճակին, ինչպես նաեւ հայ-լեհական հարաբերությունների պատմությանն ու հեռանկարներին առնչվող հարցերին:

31 օգոստոսի

Փարիզում ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպեց Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետքարտուղար Հարլեմ Դեզիրի հետ: Հայաստանի ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչության փոխանցմամբ՝ հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են հայ-ֆրանսիական հարաբերություններին, Հայաստան-Եվրամիություն համագործակցությանն առնչվող օրակարգային հարցեր: Չրուցակիցներն անդրադարձել են նաեւ ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացին՝ ընդգծելով Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի գազաթափողովներում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման կարելությունը:

1 սեպտեմբերի

Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանը Ստեփանակերտի օդանավակայանում դիմավորեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին:

ԼՂ նախագահի պաշտոնական կայքէջի փոխանցմամբ՝ Հայաստանի նախագահը ժամանել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառումների շրջանակներում:

1 սեպտեմբերի

Ոսումնական տարվա մեկնարկը Երեւանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում ազդարարվեց տոնական միջոցառումներով: Դպրության օրվա առթիվ մայրաքաղաքի տարբեր դպրոցներ այցելեցին Երեւանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետարանի աշխատակազմի պաշտոնատար այլ անձինք, վարչական շրջանների ղեկավարներ:

2 սեպտեմբերի

Չանգվածային անկարգություններ կազմակերպելու մեջ մեղադրվող Անդրիաս Ղուկասյանը դադարեցրեց հացադուլը: Այս մասին «Ազատությանը» տեղեկացրել են ԱՆ քրեակատարողական վարչության հանրային կապերի բաժնից: Ղուկասյանը հացադուլի մեջ էր օգոստոսի 2-ից՝ շուրջ մեկ ամիս: Օգոստոսի 27-ին ԱՆ ԶԿՎ հանրային կապերի բաժինը հաղորդագրություն էր տարածել՝ նշելով, թե այդ օրը Անդրիաս Ղուկասյանը ենթարկվել է արյան եւ մեզի լաբորատոր հետազոտության, ինչի արդյունքում պարզվել է, որ նրա «արյան ու մեզի կլինիկական ցուցանիշները գտնվում են նորմայի սահմաններում»: Օգոստոսի 29-ին Ղուկասյանը ենթարկվել էր նաեւ սոնոգրաֆիկ հետազոտության, այսօրոգիական շեղումներ չեն հայտնաբերվել:

2 սեպտեմբերի

Լեռնային Ղարաբաղը նշեց անկա-

խության հռչակման 25-ամյակը:

Ստեփանակերտում տոնական միջոցառումներին մասնակցելու համար երեկ Ղարաբաղ էր մեկնել նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Տոնի կապակցությամբ շնորհավորական ուղերձներով հանդես եկան Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի նախագահները:

3 սեպտեմբերի

Երեւանի «Արմենիա» Հանրապետական բժշկական կենտրոնում 26-ամյա Մարիամ Թուլյանը բնական ճանապարհով լույս աշխարհ բերեց քառյակ: Երեխաներից երկուսը տղա են, երկուսը՝ աղջիկ: Երեխաների ծնողները բնակվում են Գորիսում եւ ունեն 3,5 տարեկան դուստր: Եղիշեի խոսքով՝ դուստրը եւս անչափ երջանիկ է միանգամից երկու եղբայր, երկու քույր ունենալու առթիվ եւ անհամբեր սպասում է, թե երբ են մայրը, քույրերն ու եղբայրները տուն ժամանելու: Բնական ճանապարհով՝ ոչ արհեստական բեղմնավորմամբ, քառյակ լույս աշխարհ բերելը բացառիկ երեւույթ է համարվում:

5 սեպտեմբերի

Պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: «Չվարթնոց» օդանավակայանում Վրաստանի իր գործընկերոջը դիմավորեց Հայաստանի վարչապետ Զովիկ Աբրահամյանը: Ինչպես հաղորդվում է,

դիմավորման պաշտոնական արարողությունից հետո Վրաստանի վարչապետի գլխավորած պատվիրակությունն ուղեւորվել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Այցի շրջանակում նախատեսվում են Վրաստանի վարչապետի հանդիպումները Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Զովիկ Աբրահամյանի հետ:

6 սեպտեմբերի

Նախագահ Սերժ Սարգսյանին իր հավատարմագրերը հանձնեց Հայաստանում Զուևաստանի Նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Նաֆսիկա Նենսի Էվա Վրայլան: Հանդիպմանն անդրադարձ եղավ երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով հայ-հունական գործակցությունը զարգացնելու հնարավորություններին եւ առկա մեծ ներուժին:

7 սեպտեմբերի

Երեւանը մասնակցեց Իրանի Իսլամական Հանրապետության Ղազվին քաղաքում անցկացված՝ Մետաքսի ճանապարհի քաղաքապետների 11-րդ համաժողովին, որի շրջանակում քննարկվեցին Մետաքսի ճանապարհի քաղաքների, այդ թվում՝ Երեւանի դերակատարումն ու հետագա համատեղ ծրագրերի հնարավորությունը:

8 սեպտեմբերի

ՀՀ վարչապետ Զովիկ Աբրահամյանն այսօր՝ Կառավարության նիստի ժամանակ, հայտարարեց իր հրաժարականի մասին: «Մենք դեռեւս անցումային խնդիրներ ունեցող երկիր ենք, որտեղ առկա տնտեսական եւ սոցիալական իրավիճակի բարելավման համար մեզ անհրաժեշտ են հասարակության եւ կառավարության միասնական ջանքեր: Իսկ դրա համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ, նոր սկիզբ: Այդ պատճառով ես որոշել եմ հրաժարական տալ եւ նոր կառավարություն ձեւավորելու հնարավորություն ընձեռել Նախագահին: Պետք է մտածել մեր բոլորի հաջողության մասին եւ շնչառաւ տալ նոր կառավարությանը՝ կատարված աշխատանքի հիման վրա եւ նոր մոտեցումներով համախմբելու հասարակությանը», - իր խոսքում, մասնավորապես, նշեց Աբրահամյանը:

Նույն օրը տեղի ունեցած ՀՀԿ խորհրդի նիստում հավանություն տրվեց վարչապետի պաշտոնում Երեւանի նախ-

կին քաղաքապետ, «Հայռուսգագարդի» նախկին ղեկավար Կարեն Կարապետյանի թեկնածության առաջադրմանը:

10 սեպտեմբերի

Արցախի Հանրապետության ԱԺ Նախագահ Աշոտ Ղուլյանն ընդունեց ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի գլխավորած պատվիրակությանը: Քննարկվեցին ժողովրդավարական հաստատությունների զարգացմանը, մարդու իրավունքների ու քաղաքացիական ազատությունների պաշտպանության մեխանիզմների օրենսդրական կատարելագործմանը, Արցախում սահմանադրական բարեփոխումների գործընթացին վերաբերող հարցեր:

11 սեպտեմբերի

Հայ առաքելական սուրբ եկեղեցին սեպտեմբերի 11-ին նշեց խաչվերաց տոնը, որը Հայ եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է: Այն խաչին նվիրված տոներից ամենակարեւորն է, որովհետեւ նվիրված է գերությունից խաչի վերադարձի եւ փառաբանության հիշատակին: Հայաստանյայց եկեղեցում խաչվերացը տոնում են սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակահատվածում հանդիպող կիրակի օրը:

13 սեպտեմբերի

Ազգային ժողովում տեղի ունեցավ «4+4+4» ձեւաչափով աշխատանքային խմբի կողմից Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացների կազմակերպման եւ անցկացման մասին փաստաթղթի վերջնական կազմման եւ ստորագրման աշխատանքային նիստ, որի ընթացքում ԱԺ ՀՀԿ, ԲՀԿ, ՀԱԿ, ՕԵԿ եւ ՀՀԳ խմբակցությունների ներկայացուցիչները ստորագրեցին հայտարարություն: Նիստի ընթացքում քաղաքական ուժերի ներկայացուցիչները՝ իրենց տեսակետները ներկայացնելով հայտարարության վերաբերյալ, այն որակեցին պատմական իրադար-

ծուխում, որը կարող է շրջադարձային լինել եւ բարձրացնել ընտրական գործընթացների նկատմամբ հանրության վստահությունը:

13 սեպտեմբերի

Նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագիր ստորագրեց Կարեն Կարապետյանին ՀՀ վարչապետ նշանակելու մասին:

14 սեպտեմբերի

Եվրամիությունը ողջունեց Հայաստանում ընտրական բարեփոխումների վերաբերյալ կառավարության եւ ընդդիմության միջեւ նոր համաձայնագրի ստորագրումը, որն արվեց քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցելով: Այդ մասին այսօր Թվիթերում գրել է ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Յոհանես Հանը:

«Եվրամիությունը պատրաստ է աջակցել, այդ թվում՝ ֆինանսապես, այս կարեւոր համաձայնագրի իրականացմանը»,- վստահեցրել է Հանը: Ըստ Եվրահանձնաժողովի արտաքին հարաբերությունների հարցերով խոսնակ Մայա Կոսիյանչիչի տարածած հայտարարության՝ համաձայնությունը դրական զարգացում է ընտրական բարեփոխումների իրականացման ճանապարհին:

16 սեպտեմբերի

Րաֆֆի Հովհաննիսյանը նամակ հղեց Եվրոպայի ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) նախագահ Ժոզեֆ Դոլին՝ հայցելով նրա «միջնորդությունը, հորդորը եւ համապատասխան գործողությունները» «Ժառանգության» ներկայացուցիչներ Ա.Մարտիրոսյանի, Դ.Սանասարյանի, Հ.Խուրշուդյանի, քաղաքացիական ակտիվիստներ Ա.Ղուկասյանի եւ Կ.Եղևուկյանի, «բազմաթիվ այլ խղճի բանտարկյալների» հարցով: «Մեր երեք ավագ անդամներին ներկայացված շինծու մեղադրանքները դեռևս չեն հանվել. նրանք տակավին ենթարկվում են քրեական հետապնդման: Քաղաքացիա-

կան ակտիվիստներ Ա.Ղուկասյանը եւ Կ.Եղևուկյանը շարունակում են ազատագրված մնալ: Խղճի բազմաթիվ այլ բանտարկյալներ ու խաղաղ ցուցարարներ մինչ օրս տառապում են»,- մասնավորապես սաված է Հովհաննիսյանի նամակում:

17 սեպտեմբերի

Էջմիածին քաղաքի ավագանու թեկնածուի հաղորդման հիման վրա Հայաստանի գլխավոր դատախազության հատկապես կարեւոր գործերով քննության վարչությունում հարուցվեց քրգործ Ջրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ու 5-րդ կետերով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ բռնություն գործադրելու եւ դրա սպառնալիքի միջոցով ավագանու թեկնածուին առեւանգելու, վերջինիս ընտրական իրավունքների իրականացմանը խոչընդոտելու առերևույթ հանցագործությունների դեպքերի առթիվ: Գլխավոր դատախազության հաղորդագրության համաձայն՝ հարուցված քրեական գործն ուղարկվել է Հատուկ քննչական ծառայություն՝ նախաքննություն կատարելու համար:

Գլխավոր դատախազությունում կուսումնասիրվի Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Սյունիքի եւ Տավուշի մարզերում տեղի ունեցող ՏԻՄ ընտրությունների քվեարկության ընթացքում ընտրական իրավունքի հնարավոր խախտման վերաբերյալ տարբեր բնույթի ավելի քան 200 տեղեկատվություն: Դրանցից 108-ը, որոնք առերևույթ պարունակել են հանցագործության հատկանիշներ, ուղարկվել են Ոստիկանության տարածքային ստորաբաժանումներ՝ ստուգողական գործողություններ իրականացնելու նպատակով:

18 սեպտեմբերի

Նախագահ Սերժ Սարգսյանը պարզեցնելու համար Ռոյտի օլիմպիական խաղերում մեդալներ նվաճած հայ մարզիկներին: Հունահռոմեական ոճի ըմբիշներ Արթուր Ալեքսանյանը, Միհրան Հարությունյանը, ծանրորդներ Սիմոն Մարտիրոսյանը եւ Գոռ Մինասյանը պարզեցնելու համար «Հայրենիք» մատուցած ծառայությունների համար առաջին աստիճանի մեդալով: Սարգսյանը պարզեցնելու համար Ռոյտի օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանին՝ Պատվո շքանշանով, ինչպես եւ ոլորտի մի շարք այլ ներկայացուցիչներին:

19 սեպտեմբերի

Միացյալ Նահանգների պետքարտուղար Ջոն Զերրին շնորհավորական ուղերձ է հղել Հայաստանի անկախության 25-ամյակի կապակցությամբ: Նրանում մասնավորապես ասվում է. «Նախագահ Օբամայի ու Միացյալ Նահանգների ժողովրդի անունից շնորհավորանքներ են հղում հայ ժողովրդին անկախության 25-ամյակի առթիվ, որը կնշվի սեպտեմբերի 21-ին: Միացյալ Նահանգները խորապես արժեւորում է Հայաստանի եւ Ձեր բոլորի հետ իր ջերմ բարեկամությունը: Այս գեղեցիկ տոնի առթիվ լավագույն մաղթանքներ են հղում հայ ժողովրդին, ցանկանում խաղաղություն ու բարօրություն առաջիկա տարում»:

20 սեպտեմբերի

Սերժ Սարգսյանը հրամանագրեր ստորագրեց փոխվարչապետ, նախարարներ, նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:

Հրապարակված հրամանագրի համաձայն՝ Վաչե Գաբրիելյանը նշանակվել է Հայաստանի փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարար: Մեկ այլ հրամանագրով Դավիթ Հարությունյանը նշանակվել է կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար:

Վերջիններս այդ պաշտոնները զբաղեցնում էին նաեւ նախորդ կառավարության կազմում: Նախագահի այլ հրամանագրերով՝ Աշոտ Մանուկյանը նշանակվել է Էներգետիկայի եւ բնական պաշարների, Իգնատի Առաքելյանը՝ գյուղատնտեսության, Վահան Մարտիրոսյանը՝ տրանսպորտի եւ կապի, Վարդան Արամյանը՝ ֆինանսների նախարար: Այս անձինք նախորդ կառավարության կազմում չկային: Սերժ Սարգսյանի հրամանագրերով՝ Վարդան Արամյանը ազատվել է Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնից, որում նշանակվել է Արգենտինայում, Ուրուգվայում, Պերուում ու Չիլիում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից ազատված Ալեքսան Հարությունյանը:

21 սեպտեմբերի

Հայաստանը տոնեց Անկախության օրը: Այսօր լրացավ անկախության հռչակման 25-ամյակը: Երեւանում անցկացվեցին զորահանդես, բազմաթիվ այլ միջոցառումներ՝ Հայաստանի մայրաքաղաքում ու մյուս բնակավայրերում: Տոնի առթիվ նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձներ ստացավ օտարերկրյա պետությունների ղեկավարներից, միջազգային կազմակերպությունների, պետական եւ հասարակական հաստիքի, հոգեւոր դասի ներկայացուցիչներից, անհատներից: Ընդհանրական ուղերձներ են հղել մասնավորապես Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբաման, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, Չինաստանի նախագահ Սի Շինփինը եւ տասնյակ այլ պետությունների ղեկավարներ:

22 սեպտեմբերի

Արաբկիր եւ Զանաբեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրա-

վասության դատարանը վճռեց երկու ամսով երկարաձգել հուլիսին ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի տարածքը գրաված «Սասնա ծռերի» անդամներ Արայիկ Խանդոյանի, Պավել Մանուկյանի, Գագիկ Եղիազարյանի եւ Գառնիկ Հովսեփյանի կալանքը: Պաշտպանների պնդմամբ՝ բոլոր դեպքերում էլ դատարանը հիմնվել է քննիչի միջնորդության վրա, որտեղ քննիչը կասկածներ է հայտնում, որ գտնվելով ազատության մեջ, նրանք կխոչընդոտեն նախաքննությանը: Ողջ օրվա ընթացքում դատարանի շենքի հարակից տարածքում «Սասնա ծռեր» խմբի անդամների հարազատները, աջակիցները բողոքի ակցիաներ էին անցկացնում:

23 սեպտեմբերի

Բաֆֆի Հովհաննիսյանը հայտարարություն տարածեց, որ ինքը եւ իր գլխավորած «Ժառանգություն» կուսակցությունը միանում են Արդարության արշավին:

«Ուրախ եմ «Ժառանգություն» կուսակցության անունից միանալ «Արդարություն Հայաստանում» արշավին, որի մեկնարկը տվեցին Սերժ Թանգյանը, Վահե Բերբերյանը, Ատոմ Էգոյանը եւ այլ մտավորականներ համայն աշխարհից»,- ասված է հայտարարությունում: Շարունակության մեջ Հովհաննիսյանը հավելում է. «Սա մեր սեփական ազգային ստուգատեսն է, որը պետք է անցնենք արժանապատվությամբ ու առաքիլությամբ՝ եւ՛ նրանց անունից, ովքեր կռվեցին ու ընկան, եւ՛ հանուն նրանց, ովքեր ապրելու ու առաջնորդելու են վաղը»:

24 սեպտեմբերի

Դատարանը բավարարեց իրավապահների միջնորդությունը եւ եւս երկու ամսով երկարաձգեց «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի անդամ Անդրիաս Ղուկասյանի կալանքը: Ղուկասյանը կալանավորվել է հուլիսի 29-ի գիշերը Սարի թաղում տեղի ունեցած

իրադարձություններից հետո՝ մեղադրվելով զանգվածային անկարգություններ կազմակերպելու մեջ: Փաստաբան Կարեն Մեծլումյանը «ապօրինի» որակեց դատարանի որոշումը՝ ասելով, որ քննչական մարմինը նույնիսկ մեկ հիմնավորում չի ներկայացնում: Ըստ նրա, Ղուկասյանն իրականում որպես քաղբանտարկյալ է պահվում:

26 սեպտեմբերի

Կառավարության նախաձեռնությամբ գումարվեց ՀՀ Ազգային ժողովը արտահերթ նիստ: Ի թիվս այլ հարցերի, օրակարգում էր «Կառավարության կառուցվածքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու նախագիծը: Վարչապետ Կարեն Կարապետյանն առաջարկել է վերացնել քաղաքաշինության նախարարությունը՝ այն դարձնելով Ճարտարապետության եւ մշակութային արժեքների պահպանման կոմիտե, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը փոխանցել տրանսպորտի եւ կապի նախարարությանը, որպես առանձին կոմիտե առանձնացնել զբոսաշրջության ոլորտը, Էկոնոմիկայի նախարարությունը վերանվանել ներդրումների եւ ձեռնարկատիրության աջակցության նախարարություն:

